ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

12

ՀԱՄԱՀԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12

Վաճառքի ենթակա չէ:
9 789994 118717

Ա. ՆԱԶԱՐՅԱՆ, Վ. ՊԵՏՐՈՍՅԱՆ, Ռ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

Վերահրատարակություն

ԶԱՆԳԱԿ
ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 2018

Երաշխավորված է ՀՀ կրթության և գիտության նախարարության կողմից՝ որպես դասագիրք ավագ դպրոցի 12–րդ դասարանի ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի համար

ՀՏԴ 373.167.1:930.9(075.3)
ԳՄԴ 63.3(0) ց72
Ն 152

Խմբագիրներ՝ **Արամ Քոսյան**
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր
Արամ Նազարյան
Պատմագիտության թեկնածու

Հեղինակներ՝ **Արամ Նազարյան**
Պատմագիտության թեկնածու
(Բաժին Ա. Գլուխ 1, Բաժին Բ. Գլուխ 4)
Վահրամ Պետրոսյան
Պատմագիտության թեկնածու, դոցենտ
(Բաժին Ա. Գլուխ 2)
Ռուբեն Սաֆրաստյան
Պատմագիտության դոկտոր, պրոֆեսոր,
ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ
(Բաժին Ա. Գլուխ 3)

Մեթոդական մասի հեղինակ՝ **Արմինե Սարգսյան**
Պատմաբան, մանկավարժ

Քարտեզագիր՝ **Գեղամ Բաղալյան**
Պատմաբան

Նազարյան Ա. և ուրիշներ
Ն 152 Համաշխարհային պատմություն: 12–րդ դաս.: Ընդհանուր և բնագիտամաթեմատիկական հոսքերի դասագիրք/Ա. Նազարյան, Վ. Պետրոսյան, Ռ. Սաֆրաստյան.— Եր.: «Զանգակ» հրատ., 2018.— 128 էջ:

ՀՏԴ 373.167.1:930.9(075.3)
ԳՄԴ 63.3(0) ց72

ISBN 978–99941–1–871–7

© Ա. Նազարյան, Վ. Պետրոսյան, Ռ. Սաֆրաստյան, 2018
© «Զանգակ–97» ՍՊԸ, 2018
© ԴՏՀՏՇՀ, 2018

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Համաշխարհային պատմության Նորագույն շրջանը, արդեն գիտեք, սկսվում է Առաջին աշխարհամարտի հետևանքով առաջացած նոր իրողություններով և շարունակվում մինչև մեր օրերը:

Սույն դասագրքում ներկայացվում է Նորագույն շրջանի արդի փուլի՝ 1990-ական թվականներից մինչև մեր օրերն ընկած ժամանակաշրջանի պատմությունը և Նորագույն շրջանի ամբողջական մշակույթը: Իր բովանդակությամբ այն ԽՍՀՄ-ի և համաշխարհային սոցիալիստական համակարգի փլուզման, սառը պատերազմի ավարտի և դրան հաջորդող աշխարհաքաղաքական փոփոխությունների փուլն է:

Արդյունաբերական հասարակությանը հաջորդել է հետարդյունաբերական հասարակությունը: Այս գերզարգացած հասարակության տնտեսության մեջ առաջատար է գիտելիքահենք և նորարարական հատվածը, ՀՆԱ-ի մեջ գերակշռում է ծառայությունների ոլորտը, բնակչության մեծ մասը զբաղված է հենց այս ոլորտում: Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը և ներդրումը պահանջում են բարձր որակավորում ունեցող, պրոֆեսիոնալ և ստեղծագործ մասնագետներ: Այսինքն՝ հետարդյունաբերական, երբեմն անվանում են տեղեկատվական, հասարակության զարգացման գլխավոր գործոն է դարձել մարդկային կապիտալը: Աշխարհում առաջինը ԱՄՆ-ն անցում կատարեց քաղաքակրթական զարգացման այս նոր փուլին՝ 1960-ական թթ. ավարտին, իսկ մյուս զարգացած երկրները՝ 1970-1980-ական թթ.:

Իսկ ինչպիսի՞ն էր աշխարհը Նորագույն պատմության արդի փուլի շեմին:

Հասարակական կյանքի փոփոխությունները

XX դարի երկրորդ կեսին էականորեն փոխվեցին մարդկանց աշխարհայացքը, մտածելակերպն ու կյանքի պայմանները:

Տնտեսության, գիտության և մշակույթի արագ զարգացումը որակապես ավելի բարձր պահանջներ առաջադրեց կրթության համակարգին: Արդյունաբերության, տրանսպորտի և գյուղատնտեսության բնագավառներում մեծացավ այնպիսի մասնագետների կարիքը, որոնք ընդունակ կլինեին աշխատելու նոր տեխնիկայով և սարքավորումներով: Զարգացած երկրներում համընդհանուր միջնակարգ կրթությունը դարձավ պարտադիր: Գնալով համընդհանուր է դառնում նաև բարձրագույն կրթությունը:

Էական փոփոխություններ կատարվեցին նաև հասարակական կյանքում: Աճեց կուսակցությունների դերը: Ձևավորվեց կուսակցական ապարատը՝ կուսակ-

ցության դրամարկղից վճարվող աշխատակիցների շերտը: Մամուլում, խորհրդարանում և կառավարությունում մշտապես սկսեցին երևալ միևնույն դեմքերը, իսկ քաղաքականությունը դարձավ մասնագիտություն: Կուսակցությունները մեծ տպաքանակներով հրատարակում էին թերթեր, ամսագրեր, բուռն կերպով սկսեցին քարոզել իրենց հայացքները՝ ձևավորելով հասարակական կարծիք:

Կուսակցությունների նպատակը ոչ միայն ընթացիկ պահի հետ կապված նեղ ծրագրերի մշակումն է, այլև իրենց աշխարհայացքային սկզբունքների, համաշխարհային զարգացման հեռանկարների ներկայացումը:

Սոցիալիստական կազմակերպությունների ազդեցության ընդլայնմանը և սոցիալիստական գաղափարների տարածմանը զուգահեռ սկսեց փոխվել նաև քաղաքական պայքարի հիմնական սահմանագիծը, որը նախկինում անցնում էր պահպանողականներ–ազատականներ, միապետականներ–հանրապետականներ բաժանարար գծի երկայնքով: Ընդ որում՝ առանձին երկրների յուրահատուկ պատմական պայմաններն իրենց հետքն են թողնում քաղաքական պայքարի բնույթի և ընթացքի վրա:

Քաղաքական զարգացումները միջազգային ասպարեզում

XX դ. երկրորդ կեսի քաղաքական զարգացումների կարևորագույն փոփոխությունների շարքում էր ուժերի հավասարակշռության սկզբունքի հաստատումը: Ուժերի հավասարակշռության տեսությունը հիմնված է այն գաղափարի վրա, որ խաղաղությունն ավելի հավանական է այնտեղ, որտեղ հավանական պատերազմողների միջև առկա է հավասարություն ռազմական, իսկ երբեմն նաև քաղաքական կամ տնտեսական հզորության տեսանկյունից:

Արդի միջազգային կայունության պահպանմանն ուղղված ուժերի հավասարակշռության սկզբունքի կարևորագույն նախապայմաններից մեկն այն է, որ չկան գաղափարախոսական կամ այլ բնույթի այնպիսի արգելքներ, որոնց պատճառով տերությունները չկարողանան գնալ երկխոսության կամ համագործակցել միմյանց հետ:

Ուժերի հավասարակշռության սկզբունքի հետևորդները քաջ գիտակցում են, որ ի զորու չեն ընդհանրապես կանխելու պատերազմները. ի հայտ են եկել համընդհանուր սպառնալիքների նոր աղբյուրներ (միջազգային ահաբեկչություն, քաղաքական իսլամ և այլն): Նրանք կարծում են, որ թեև պատերազմներն անխուսափելի են, սակայն պետք է ունենան սահմանափակ բնույթ՝ շարունակվեն մինչև ուժերի հավասարակշռության վերականգնումը:

Այսպիսով՝ արդի միջազգային հարաբերությունների զարգացման հիմնական նպատակը նոր աշխարհակարգի և դրա բաղկացուցիչ մասերի ինքնության և ինքնուրույնության պահպանումն է:

ԲԱԺԻՆ Ա

ԱՇԽԱՐՀՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԳԼՈՒԽ 1 ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ

§ 1. ԳԻՏԱՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐ ԵՎ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐ

Գիտատեխնիկական հեղափոխությունը

Նորագույն շրջանն իրավամբ կարելի է համարել քաղաքակրթության գիտատեխնիկական հզոր առաջընթացի դարաշրջան: Անընդհատ բնույթ ստացած այդ գործընթացի արդյունքում շարունակաբար տեղի են ունենում հասարակական կյանքի արմատական փոփոխություններ: Գիտության և տեխնիկայի նվաճումների աննախադեպ չափերով ներդրման շնորհիվ կտրուկ վերելք են ապրում տնտեսությունը, զարգանում մշակույթի բոլոր բնագավառները: Ի հայտ են եկել սպասարկման և հանգստի նոր ոլորտներ, էականորեն բարելավվել է մարդկանց կենսամակարդակը:

Այս դարակազմիկ փոփոխությունների հիմքում ընկած են գիտության, տեխնիկայի և արտադրության թռիչքաձև զարգացումն ու այդ երեքի միաձուլումը: Գործընթացները սկիզբ էին առել դեռևս XIX դարում, սակայն գիտությունը, տեխնիկան և արտադրությունը մինչև XX դարի 30-ական թթ. հասարակական կյանքի ինքնուրույն, առանձին ոլորտներ էին:

1940-ական թթ. սկսվեց գիտատեխնիկական առաջընթացի մի նոր փուլ, որը ստացավ **գիտատեխնիկական հեղափոխություն** (ԳՏՀ) անվանումը: Այդպես է կոչվել, որովհետև գիտությունն ու արտադրությունը ոչ միայն թռիչքաձև զարգացան, այլև դրանց միաձուլման արդյունքում գիտությունը դարձավ արտադրողական ուժ: Եթե մինչ այդ գիտական հայտնագործությունների և նվաճումների պահից մինչև արտադրության մեջ դրանց ներդրումը տևում էր տասնյակ տարիներ, ապա ԳՏՀ-ի պայմաններում այն կատարվում էր շատ արագ, գյուտերը և նորույթները ներդրվում էին անմիջապես:

Գիտությունն աշխատում էր արդյունաբերության և տնտեսության մյուս ոլորտների համար, իր հերթին տնտեսությունը նորանոր պահանջներ ու խնդիրներ էր առաջադրում գիտությանը: Այս միասնացված գործընթացը նպաստում էր գիտության, տեխնիկայի և արտադրության փոխկապակցված զարգացմանը:

ԳՏՀ-ն շարունակվում է նաև մեր օրերում, և ընդունված է նրա պատմությունը բաժանել երկու փուլի՝

1) 1940-ական թթ. մինչև 1960-ական թթ. ավարտը,

2) 1970-ական թթ. մինչև մեր օրերը:

ԳՏՀ–ի առաջին փուլը

Գիտատեխնիկական հեղափոխության առաջին փուլի նախադրյալները ձևավորվել էին XX դարի առաջին երեսնամյակում: Միջուկային ֆիզիկայի, քվանտային մեխանիկայի, կիբեռնետիկայի, կենսաքիմիայի, միկրոկենսաբանության, պոլիմերների քիմիայի հեղաշրջող նվաճումներին զուգահեռ արդյունաբերության մեջ գոյություն ուներ նաև համեմատաբար բարձր տեխնիկական զարգացածությամբ արտադրություն: Ձևավորվել էր նաև ճարտարագիտական ու տեխնիկական համապատասխան անձնակազմ, որը կարող էր կյանքի կոչել գիտական նորագույն հայտնագործությունները:

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում գիտական շատ հայտնագործություններ կիրառում գտան ռազմական արդյունաբերության ոլորտում, ստեղծվեցին զենքի և տեխնիկայի նոր տեսակներ ու համակարգեր՝ ատոմային զենք, ռեակտիվ ինքնաթիռ, տակտիկական հրթիռներ և այլն: Գերտերությունների ռազմաարդյունաբերական համալիրների զարգացումը մեծ չափով պայմանավորեց ԳՏՀ–ի առաջին փուլի ուղղվածությունը:

Առաջին փուլում արձանագրվեցին հետևյալ խոշոր նվաճումները գիտության և արտադրության ոլորտներում.

• *1940–ական թթ.՝ հեռուստատեսություն, տրանզիստոր, ռադար, ատոմային ռումբ, արհեստական թելեր,*

• *1950–ական թթ.՝ ջրածնային զենք, ատոմային էներգառեակտոր, ուղևորատար ռեակտիվ ինքնաթիռ, էլեկտրոնային հաշվիչ մեքենա, Երկիր մոլորակի արհեստական արբանյակ,*

• *1960–ական թթ.՝ լազերային սարքավորումներ, կապի տիեզերական արբանյակ, արագընթաց գնացքներ:*



Ալեքսանդր Ֆլեմինգը ԳՏՀ–ի առաջին փուլի նվաճումներից մեկի՝ պենիցիլինի հեղինակն է:

Կարևորագույն արդյունքներից էր **ատոմային էներգիայի** օգտագործումը խաղաղ նպատակներով: Ստեղծվեցին առաջին ատոմային էլեկտրակայանները: Զարգացավ նաև քվանտային էլեկտրոնիկան, որը հնարավորություն տվեց հիմնելու լազերային տեխնիկայի արտադրություն:

Առավել շոշափելի էին առաջին փուլի արդյունքները տնտեսության ոլորտում: Առաջացան արդյունաբերության նոր ճյուղեր՝ **ավիատիեզերական, ռադիոհեռուստատե-**

սային, ռոբոտատեխնիկական: Ստեղծվեցին արտադրության և դրա կառավարման ինքնահոս գծեր ու համակարգեր, արագ զարգացավ **արհեստական (սինթետիկ) նյութերի** արտադրությունը: Իսկական հեղաշրջում կատարվեց գյուղատնտեսության ոլորտում. քիմիական պարարտանյութերի լայն կիրառումը շեշտակիորեն բարձրացրեց մշակաբույսերի բերքատվությունը:

Հիրավի առաջին փուլի խոշորագույն նվաճումը **տիեզերքի յուրացման** գործընթացի սկիզբն էր: 1957 թ. ԽՍՀՄ–ը տիեզերք ուղարկեց Երկրի առաջին արհեստական արբանյակը, իսկ **1961 թ. տիեզերք թռավ աշխարհում առաջին տիեզերագնացը՝ Յուրի Գագարինը:** Երկու գերտերությունների միջև տիեզերքի յուրացման ուղղությամբ ծավալված մրցակցության ընթացքում հաջորդ խոշոր նվաճմանը հասավ ԱՄՆ–ը: **1969 թ. Լուսնի վրա առաջինը իջան ամերիկացի երեք տիեզերագնացներ:** Այնուհետև ամերիկացիները ստեղծեցին բազմակի օգտագործման տիեզերանավեր:

Սակայն տիեզերքը դարձավ ոչ միայն գիտական մեծ նվաճումների ներդրման, այլև սպառազինությունների մրցավազքի ասպարեզ: Գերտերությունները հսկայական միջոցներ էին հատկացնում իրենց երկրների ռազմաարդյունաբերական համալիրների զարգացմանը:

Այս ժամանակաշրջանում **կտրուկ աճեց գիտության դերը հասարակության մեջ, մեծացան գիտնականների թիվը և հեղինակությունը:** Առաջատար պետությունները գիտության ոլորտում հսկայական միջոցներ էին ներդնում:

Գիտության և արտադրության միաձուլումը, սակայն, տվեց երկակի արդյունքներ: Մի կողմից՝ հնարավորություն ստեղծվեց գիտական նոր գաղափարներն արագորեն արտադրության մեջ ներդնելու համար, մյուս կողմից՝ գիտությունը, որ պահվում էր առավելապես պետական միջոցների հաշվին, սկսեց կորցնել իր ինքնուրույնությունը և ենթարկվել պետական իշխանության շահե-

Մարդու առաջին ոտնահետքերը Լուսնի մակերևույթին

ին: Հաճախ ԳՏՀ–ի նվաճումները սկսեցին օգտագործվել ռազմական նպատակներով, կիրառվել պատերազմական գործողությունների ժամանակ: Աստիճանաբար սրվեցին էկոլոգիական հիմնախնդիրները՝ շրջակա միջավայրի աղտոտում, բույսերի և կենդանիների որոշ տեսակների անհետացում, բնական պաշարների կրճատում և այլն:

ԳՏՀ–ի երկրորդ փուլը

Գիտատեխնիկական հեղափոխության երկրորդ փուլի սկիզբ են համարվում **էլեկտրոնային հաշվիչ մեքենաների չորրորդ սերնդի** ստեղծումն ու ներդրումը տնտեսության մեջ: Դրա հիման վրա ավարտին հասցվեց տնտեսության բոլոր ճյուղերի համալիր ավտոմատացումը, արտադրության և սպասարկման ոլորտներում անցում սկսվեց որակապես նոր տեխնոլոգիաների:

Այս փուլը բնութագրող նվաճումներից են.

• *1970–ական թթ.՝ միկրոպրոցեսորը, անհատական համակարգիչը, արդյունաբերական ռոբոտը, կենսատեխնոլոգիաները,*

• *1980–ական թթ.՝ գերմեծածավալ միասնացված սխեմաները, բջջային հեռախոսը, գերամուր կերամիկան, հինգերորդ սերնդի համակարգիչները, գենային ինժեներիան, ջերմամիջուկային սինթեզը,*

• *1990–2010 թթ.՝ համացանցը, կլոնավորումը, նանոտեխնոլոգիաները և այլն:*

Գիտատեխնիկական առաջընթացի այս դրսևորումը ստացել է նաև **տեղեկատվական** կամ **հեռահաղորդակցական հեղափոխություն** անվանումը:

Արտադրության ոլորտից աստիճանաբար դուրս է մղվում ձեռքի աշխատանքը, մասնագետը դառնում է արտադրական և մյուս գործողությունների կարգավորող և վերահսկող: Ստեղծվում են ծրագրավորված արտադրություններ, ավտոմատացված նախագծային համակարգեր: Տեղեկատվության ավտոմատացումը հաստատուն տեղ է գրավել նաև կառավարման, ֆինանսական և մյուս ոլորտներում:

Արդյունաբերության մեջ գնալով մեծանում է **արհեստական նյութերի** օգտագործումը, դրանք փոխարինում են ավանդական հումքատեսակին՝ երկաթին և այլ մետաղների: Յուրացվում են նոր տեխնոլոգիաներ, որոնք ծախսատար չեն և արագացնում են արտադրանքի ստացումը:

Միկրոէլեկտրոնիկայի զարգացումը հնարավորություն է տալիս փոքրացնելու սարքավորումների չափերը, նվազեցնելու էներգիայի ծախսը և իջեցնելու ապրանքների ինքնարժեքը:

Պարենային հիմնախնդիրը գնալով ավելի է անհանգստացնում

մարդկությանը: Գյուղատնտեսության ոլորտում սկսվել է էկոլոգիապես մաքուր մթերքների արտադրությունը: Ժամանակի ընթացքում կկրճատվի քիմիական պարարտանյութերի կիրառումը:

Սկսվել է արդյունաբերական նպատակներով տիեզերքի յուրացման և օգտագործման գործընթացը: Այսօր արդեն անհնար է պատկերացնել կապի ժամանակակից համակարգերի աշխատանքն առանց ԱՄՆ-ի, Ռուսաստանի և մյուս երկրների կողմից տիեզերական մասնագիտացված արբանյակների կիրառման:

Հասարակության կենսագործունեության մեջ հեղաշրջող դեր խաղաց համակարգչային տեխնիկան: Սկսվեց համակարգիչների զանգվածային արտադրություն, դրանց չափերը գնալով ավելի են փոքրանում և հարմարավետ դառնում օգտագործման համար: Այսօր արդեն **անհատական համակարգիչները** մուտք են գործել աշխատանքի, արտադրության, առևտրի, ծառայությունների ոլորտ, ինչպես նաև հաստատուն տեղ են գրավել մարդկանց կենցաղում:

Արդի գիտությունը ձգտում է տիրելու էներգիայի ստացման նոր



Գերժամանակակից այս ինքնագնաց մեքենան Մարս փոխադրվելուց առաջ իր վերջին փորձարկումներն է անցնում տիեզերագիտական լաբորատորիայում: Այն իր հետազոտական աշխատանքները Մարսի վրա սկսեց 2011 թ. աշնանը:

Արևային էներգիայի մարտկոցներ արդեն կարելի է տեսնել բազմաթիվ առանձնատների տանիքներին:

աղբյուրների՝ արեգակնային, քամու և այլն: Սակայն էներգետիկական հիմնախնդրի լուծումը ապագայի գործ է:

Այսպիսով՝ երկրորդ փուլի հաջողությունները հսկայական են, այս փուլը հաճախ անվանում են *բարձր տեխնոլոգիաների դարաշրջան*:

Սոցիալական հետևանքները

Գիտատեխնիկական հեղափոխությունը համընդգրկուն երևույթ է և որոշիչ ազդեցություն է թողնում հասարակական կյանքի բոլոր ոլորտների վրա՝ տնտեսություն, քաղաքականություն, մարդկանց աշխատանքային պայմաններ և կենցաղ, հոգևոր մշակույթ, գաղափարախոսություն, հոգեբանություն: Այն վերափոխել է և շարունակում է վերափոխել արդի հասարակությունը:

Աշխատավարձերի բարձրացումը և սոցիալական ապահովության համակարգի կատարելագործումը հանգեցրին նրան, որ մարդիկ դարձան զանգվածային արտադրության ապրանքների զանգվածային սպառողներ: Մարդկանց կենսակերպի անբաժան ուղեկիցը դարձան սեփական ավտոմեքենան, բնակարանը, սառնարանը, հեռուստացույցը, հեռախոսակապը, սպասարկման և ծառայությունների անսպառ ոլորտը:

Արևմուտքի զարգացած երկրներում նվազագույն մակարդակի հասավ գործազրկությունը:

Արդի արտադրական գործընթացներում անհամեմատ աճել է մարդկային գործոնի դերը: Դա հանգեցրեց աշխատող ուժի կրթական և մասնագիտական մակարդակի կտրուկ բարձրացման, աճեց մտա-

վոր աշխատուժի պահանջարկը: Մտավոր աշխատանքով զբաղվողները կազմեցին հասարակական մի ստվար զանգված:

Քաղաքային բնակչության արագ աճի պայմաններում մեծացավ նաև ծառայությունների ու առևտրի ոլորտներում զբաղված մարդկանց թիվը: Նրանք այժմ ավելի շատ են, քան արդյունաբերության և տրանսպորտի ոլորտներում աշխատողները: Թվարկված սոցիալական շերտերը միասին ձևավորում են, այսպես կոչված, միջին խավը, որն արդի զարգացած հասարակություններում կազմում է բնակչության երկու երրորդը և ավելին:

Միջին խավի շարունակական աճը հանգեցրեց փոփոխության արդյունաբերական հասարակության նաև սոցիալական կառուցվածքում: Բանվոր դասակարգն այսօր զարգացած երկրներում այլևս մեծամասնություն չի կազմում: Բուրժուազիայի և պրոլետարիատի միջև ընթացող դասակարգային դիմակայությամբ բնութագրվող նախորդ՝ արդյունաբերական հասարակությունը վերափոխվել է բազմաշերտ կառուցվածք ունեցող նոր հասարակության:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ի՞նչ է գիտատեխնիկական հեղափոխությունը: Ներկայացրե՛ք դրա նախադրյալները և բնորոշ կողմերը:
2. Քանի՞ փուլի է բաժանվում ԳՏՀ-ի պատմությունը: Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում առաջին փուլը: Ներկայացրե՛ք առաջին փուլի գլխավոր նվաճումներն ու արդյունքները:
3. Ո՞ր ժամանակահատվածն է ընդգրկում ԳՏՀ-ի երկրորդ փուլը: Ինչպիսի՞ նվաճումներ արձանագրվեցին այս փուլում: Համեմատե՛ք երկու փուլերը, նշե՛ք նմանություններ ու առանձնահատկություններ:
4. Խմբային քննարկմամբ վերհանե՛ք ԳՏՀ-ի բացասական կողմերը:
5. Սոցիալական ի՞նչ հետևանքներ ունեցավ գիտատեխնիկական հեղափոխությունը: Ներկայացրե՛ք արդի զարգացած երկրների սոցիալական կառուցվածքը:

§ 2. ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյունաբերական հասարակության ավարտը Արևմուտքի երկրներում

Ինչպես արդեն ասվել է, Արևմուտքի զարգացած երկրներում Երկրորդ աշխարհամարտի ավարտից հետո սկսվել էր արդյունաբերական հասարակության ավարտական փուլը: Արևմուտքի արդյունաբերական երկրների տնտեսության որակական բարելավման գործում կարևոր դեր խաղաց նրանց տնտեսական միասնացման գործընթացը:

Արևմուտքի հետպատերազմյան տնտեսական զարգացման արդյունքում արմատապես վերափոխվեց կապիտալիստական հասարակությունը: Ընդունված է համարել, որ 1970-ական թթ. սկզբներին Արևմուտքի զերզարգացած երկրներում ավարտվում է քաղաքակրթության պատմության արդյունաբերական փուլը:

Հետպատերազմյան առաջին խոշոր **համաշխարհային տնտեսական ճգնաժամը (1974–1975 թթ.)** մեծ վնասներ հասցրեց ոչ միայն գերտերություն **ԱՄՆ-ին,** այլև «տնտեսական հրաշք» իրականացրած երկրներին՝ **Արևմտյան Գերմանիա, Իտալիա, Ճապոնիա:** Այս և հաջորդ խոշոր ճգնաժամի (1980–1982 թթ.) հաղթահարումը ապահովեց Արևմուտքի առաջատար երկրների վերջնական անցումը զարգացման նոր փուլ:

Հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակությունը

ԳՏՀ-ի արդյունքների և հետևանքների վերլուծության հիման վրա արևմտյան մի շարք գիտնականներ՝ **Դ. Բել, Ռ. Արոն, Ջ. Հելբրեյթ** և այլք, եզրակացրին, որ Արևմուտքի զարգացած երկրները թևակոխել են որակապես նոր փուլ: Այն անվանեցին **հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն:**

Նոր հասարակության ձևավորման ու ամրապնդման գործընթացում անժխտելի է գիտատեխնիկական հեղափոխության վճռորոշ դերը: Գիտելիքների և տեղեկատվության հարաճուն ծավալները մեծապես պայմանավորել են այս հասարակության զարգացման ներուժը: Արդի դարաշրջանում տնտեսությունը հենվում է գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների վրա: Ձևավորվել է, այսպես կոչված, **գիտելիքահենք տնտեսություն,** որը հասարակական առաջընթացն ապահովող գլխավոր պայմանն է:

Նոր ձևավորված հասարակության կյանքի բոլոր բնագավառներում առաջին պլան է մղվել **տեղեկույթը** (տեղեկատվության ապրանքային ձևը): Ամենատարբեր բնույթի

ու նշանակության տեղեկատվության մշակումը և տեղեկույթի ստեղծումը, փոխանցումը, ստացումը, վերլուծությունը և օգտագործումը զարգացած հասարակություններում արտադրության, սպասարկման և կառավարման ոլորտների գործառնության անբաժանելի մասն են կազմում:

Ձևավորվել է **միասնական համաշխարհային տեղեկատվական տարածք,** տեղեկույթը շատ արագ շրջանառվում է այդ տարածքում համացանցի և կապի գերժամանակակից մյուս միջոցների շնորհիվ: Այս երևույթն իր հերթին խթանում է աշխատուժի արագ տեղաշարժը, արտադրության, առևտրի, ծառայությունների ոլորտի և մշակույթի զարգացումը, նյութական ու հոգևոր բարիքների փոխանակումը: Այս գործընթացի մաս են կազմում ոչ միայն հետարդյունաբերական երկրները, այլև արդյունաբերական և զարգացող երկրները, այդ թվում՝ նախկին և ներկա սոցիալիստական պետություններն ու երրորդ աշխարհի առաջատար պետությունները:

Հետարդյունաբերական երկրներին բնորոշ է բնակչության բարձր կենսամակարդակը: Տեղեկույթը և դրա օգտագործման հետ կապված արդիական տեղեկատվական և հաղորդակցական միջոցները ներխուժել են մարդկանց կենցաղ: Նորագույն շրջանի նախորդ տասնամյակների համեմատ զարգացած երկրներում էականորեն փոխվել են և շարունակում են փոխվել մարդկանց կենցաղը և մտածողությունը:

Համացանցային սպասարկիչ կենտրոն

Հետարդյունաբերական հասարակություն է ձևավորվել Արևմուտքի երկրներում և Արևելքի առաջատար մի քանի երկրներում (Ճապոնիա, Հարավային Կորեա, Սինգապուր, Մալայզիա և այլն): Չնայած արևմտյան քաղաքակրթական այս տիպը առաջատարն է ժամանակակից աշխարհում, սակայն նա համընդհանուր բնույթ չի կրում: Նրա տեխնածին էությունը հակադրության մեջ է Արևելքի զարգացող հասարակությունների ավանդական հիմքերի հետ, որտեղ մերժվում են եսակենտրոնությունը, անհատապաշտությունը, և ընդունելի է հավաքականությունը, պահպանվում է իշխանության հիերարխիկ բնույթի նկատմամբ հարգանքը և այլն:

Այսպիսով՝ հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակու-

թյունը քաղաքակրթության արդիական փարաձև է: Այս և գոյություն ունեցող մյուս փարաձևերի միջև մրցակցությունը և համագործակցությունը կապահովեն մարդկության առաջընթաց զարգացումը XXI դարում:

Սոցիալ–տնտեսական զարգացման արդի միտումները

Հետարդյունաբերական հասարակության բնորոշ կողմերի բացահայտումը հնարավորություն է տալիս կանխատեսելու, թե ինչ միտումների հիման վրա է ընթանալու սոցիալական և տնտեսական կյանքի զարգացումը:

Արտադրության, առևտրի և սպասարկման բնագավառների գիտատեխնիկական կտրուկ վերելքը արմատապես փոխել է սոցիալական հարաբերությունների բնույթը հասարակության ներսում: Եթե նախկինում արտադրության և սպառման ոլորտներում աշխատանքը առավելապես հանրային (կոլեկտիվ), ընդհանուր բնույթ էր կրում, ապա այժմ ավելի մեծ տարածում է ստանում անհատական աշխատանքը: Մարդկանց զգալի մասը հնարավորություն է ստացել անհատական գբաղմունքի ընտրության միջոցով հասնելու ինքնաարտահայտման ու ինքնակատարելագործման:

Արդի դարաշրջանի բնորոշ միտումներից մեկն այն է, որ մարդկանց աշխատանքային գործունեությունն ավելի քիչ է պայմանավորվում նյութական անհրաժեշտությամբ, քանի որ առկա են ապրանքների ու ծառայությունների հարուստ շուկա, սոցիալական ապահովության զարգացած համակարգ և այլն: Առաջնային է դառնում մարդու գործունեության ավելի բարձր տեսակը՝ ստեղծագործ աշխատանքը: Իսկ դա իր հերթին պահանջում է աշխատողների ավելի բարձր կրթական մակարդակ, մասնագիտական որակավորում և պրոֆեսիոնալիզմ: Ահա թե ինչու հետարդյունաբերական փուլում կրթությունը և գիտությունը դարձել են հասարակության զարգացման և անհատի կատարելագործման գլխավոր գործոններ:

Վերը նշված միտումների արդյունքում աշխատուժի մի հսկա զանգված տեղաշարժվեց արտադրությունից դեպի ծառայությունների ոլորտ, որտեղ մեծ է անհատական աշխատանքի տեսակարար կշիռը: Զարգացած երկրներում՝ ԱՄՆ, Ճապոնիա, Մեծ Բրիտանիա, Գերմանիա և այլն, ծառայությունների ոլորտում այժմ ընդգրկված է աշխատուժի ավելի քան 50–60 %–ը. այս երևույթը շարունակական աճի միտում ունի:

Գերզարգացած հասարակություն թևակոխած երկրների համար բնութագրիչներ են նաև կրթության, առողջապահության և սոցիալական

օգնության շարունակաբար կատարելագործվող համակարգերը, բարձր մակարդակի ամենատարբեր ծառայությունների մատուցումը:

Արդի դարաշրջանում ձևավորվել է միջազգային տնտեսական կապերի մի բազմաճյուղ համակարգ, որը աշխարհի բազմազանության և միասնականության տնտեսաֆինանսական դրսևորումն է և հետարդյունաբերական հասարակության բնութագրիչ կարևոր կողմերից մեկը: Հետսառըպատերազմյան շրջանում համաշխարհային տնտեսական միասնական դաշտի մեջ են ներգրավվել նաև ԱՊՀ (Ռուսաստանի Դաշնություն, Հայաստանի Հանրապետություն և այլն) և նախկին ու ներկա սոցիալիստական երկրները:

Արդի փուլում, երբ կյանքի բոլոր ասպարեզներ է մուտք գործել **համաշխարհայնացման գործընթացը,** միջազգային տնտեսական համակարգում մեծ դեր են խաղում տնտեսական ու ֆինանսական միջազգային կազմակերպություններն ու հաստատությունները: Դրանց շարքում առանձնանում են **Միջազգային արժութային հիմնադրամը, Համաշխարհային բանկը, Առևտրի համաշխարհային կազմակերպությունը:** Համաշխարհային տնտեսության վրա մեծ ազդեցություն են թողնում նաև այնպիսի միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են **Դավոսյան վեհաժողովն ու Մեծ յոթնյակը:**

Էականորեն աճել է **վերազգային կորպորացիաների դերը:** Ժամանակակից աշխարհում համաշխարհային արդյունաբերական արտադրության մոտավորապես կեսն ու արտաքին առևտրի շուրջ 60 %-ը պատկանում են նման կորպորացիաներին: Խոշորագույն վերազգային կորպորացիաների կենտրոնակայանները տնտեսապես առավել զարգացած արևմտյան երկրներում են, գերազանցապես ԱՄՆ-ում: Իրենց տնտեսական հզորությամբ խոշորագույն վերազգային կորպորացիաները կարող են մրցակցել նույնիսկ մեծ պետությունների հետ:

Կլաուս Շվաբը՝ Համաշխարհային տնտեսական ֆորումի հիմնադիրն ու նախագահը, ելույթ է ունենում 2008 թ. Դավոսյան վեհաժողովի ամենամյա հանդիպման ժամանակ:

Համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը

2008 թ. սեպտեմբերին սկսվեց տնտեսական նոր ճգնաժամ: Այն առաջացավ ԱՄՆ–ի ֆինանսական համակարգում՝ որպես հետևանք սպեկուլյատիվ բնույթի վարկային (գրավադրային) գործարքների լայն կիրառման: Կարճ ժամկետում ճգնաժամը տարածվեց աշխարհով մեկ՝ ներառելով նաև արտադրության և առևտրի ոլորտները: Իր ծավալներով և հետևանքներով այն համադրելի է Մեծ ճգնաժամին:

Տնտեսական հուժկու անկման հետևանքով փլուզվեցին ֆինանսական համակարգեր, կանգ առան գործարաններ: Եվրամիության անդամ մի շարք երկրներում տեղի ունեցան բողոքի զանգվածային ելույթներ, որոշ երկրներ (օրինակ՝ Հունաստանը) սնանկացան կամ հայտնվեցին սնանկության շեմին (Իսպանիա, Պորտուգալիա և այլն): Նույնը տեղի ունեցավ նաև մյուս աշխարհամասերում:

2009 թ. տվյալներով գործազուրկների թիվն աշխարհում կազմում էր 199 մլն մարդ, որը աննախադեպ ցուցանիշ է աշխատուժի շուկայի պատմության մեջ:

Թուլացավ միջին խավը, որը հասարակության սոցիալական կայունության գլխավոր նախադրյալն է:

2008 թ. նոյեմբերի 14–ին 20 երկրների նախագահների մասնակցությամբ Վաշինգտոնում կայացած հակաճգնաժամային վեհաժողովի արդյունքում ընդունվեց հռչակագիր, որն ընդգրկում էր սկզբունքներ ֆինանսական շուկաների բարեփոխման, ֆինանսական ինստիտուտների վերակազմավորման վերաբերյալ, ինչպես նաև պարտավորություն՝ ձեռնպահ մնալու մոտակա 12 ամիսներին հովանավորչական (պրոտեկցիոնիստական) գործողությունների կիրառումից:

Եթե մինչև ճգնաժամը միջին խավին էր պատկանում համաշխարհային հարստության կեսից ավելին, ապա 2015 թ. առաջին անգամ աշխարհի մեկ տոկոս ամենահարուստների տեսակարար կշիռը այդ հարստության մասնաբաժնում գերազանցեց 50 տոկոսը և շարունակում է աճել: Որպես հետևանք՝ այսօր գլոբալ հիմնախնդիր են դարձել եկամուտների անհամաչափ բաշխումը և սոցիալական բևեռացման խորացումը:

ԱՄՆ-ը, Եվրամիությունը, Մեծ յոթնյակը, ԱՊՀ երկրները և մի շարք այլ պետություններ ու կազմակերպություններ ձեռնարկեցին հակաճգնաժամային միջոցառումներ: Տակավին 2016 թ. դրությամբ ճգնաժամը և դրա հետևանքները դեռ լիովին հաղթահարված չէին:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Բնութագրեք արդյունաբերական հասարակության ավարտական փուլը, դրա հիմնական արդյունքները:
2. Ի՞նչ է հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակությունը: Ովքե՞ր են տվել այդ անվանումը: Ցո՛ւյց տվեք այդ հասարակության բնորոշ կողմերը: Ո՞ր երկրներում է ձևավորվել այդ հասարակությունը: Ինչո՞ւ ենք ասում, որ քաղաքակրթական այս նոր տարաձևը համընդգրկուն չէ:
3. Ներկայացրե՛ք արդի աշխարհում սոցիալական զարգացման գլխավոր միտումները: Ի՞նչ փոփոխություններ են տեղի ունեցել աշխատանքային գործունեության բնագավառում:
4. Նշե՛ք արդի տնտեսական զարգացման հիմնական միտումները:
5. Որո՞նք են 2008 թ. սկսված ֆինանսատնտեսական համաշխարհային ճգնաժամի պատճառները: Ներկայացրե՛ք այդ ճգնաժամի գլխավոր հետևանքները:

ԳԼՈՒԽ 2 ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱԴՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ

§ 1. ՆՈՐ ԱՇԽԱՐՀԱԿԱՐԳԸ

Հետպատերազմյան նոր աշխարհակարգը

Քուվեյթի վրա 1990 թ. Իրաքի հարձակումից հետո ԱՄՆ նախագահ **Ջորջ Բուշ Ավագը** շրջանառության մեջ դրեց *Նոր աշխարհակարգ* հասկացությունը: 1990 թ. սեպտեմբերի 11-ին ԱՄՆ-ի Կոնգրեսի զույգ պալատներին ուղղված իր ելույթում նա նշեց. «Դուրս գալով անախորժություններով լի այս ժամանակներից՝ մեր 5-րդ նպատակը կլինի նոր աշխարհակարգը, որը կարող է ի հայտ գալ իբրև նոր դարաշրջան՝ ահաբեկչության սպառնալիքից ավելի ապահովագրված, ավելի հզոր՝ արդարության հետապնդման գործում և ավելի ապահով՝ խաղաղության որոնումներում: Մի ժամանակաշրջան, որում աշխարհի՝ Արևելքի և Արևմուտքի, Հյուսիսի և Հարավի ազգերը կարող են բարգավաճել և ապրել ներդաշնակության մեջ»:

Սոցիալիստական համակարգի փլուզումը Արևելյան Եվրոպայում, Գերմանիայի վերամիավորումը և **ապարտեիդի** (տարանջատման) վարչակարգի ավարտը Հարավային Աֆրիկայում ազդարարեցին «նոր դարաշրջանի» սկիզբը:

Ռուսաստանի Դաշնությունը մնում էր միակ տերությունը, որն ուներ ԱՄՆ-ի ոչնչացման ներուժ: Սա մի առանձնահատուկ իրավիճակ էր ստեղծել միջազգային հարաբերություններում: Դասական երկբևեռ համակարգը վերացավ դեռ 1991 թ.՝ սոցիալիստական համակարգի փլուզումով: ԱՄՆ-ի և ՌԴ-ի միջև երկբևեռության հարաբերությունները պահպանվում էին միայն ռազմաքաղաքական բնագավառում: Մյուս բոլոր ոլորտներում ԱՄՆ-ը իր ցուցանիշներով բացահայտ առավելություն ուներ Ռուսաստանի նկատմամբ:

Միջազգային հարաբերություններում վերստին աճում էր ուժի դերը: Այս երևույթը երկու հիմնական պատճառ ուներ: Նախ՝ նախկին Խորհրդային Միության և սոցիալիստական համակարգի պետությունների տարածքում բազմաթիվ զինված հակամարտություններ ծագեցին: Բացի դրանից՝ ԱՄՆ-ը և ՆԱՏՕ-ի անդամ երկրները ավելի լայնորեն էին դիմում ուժի կիրառմանը՝ իրենց շահերն ապահովելով տեղական և տարածաշրջանային հակամարտություններում:

Արդեն 1990-ական թթ. կեսերից միջազգային հարաբերություններում գնալով աճում էր **խաղաղարար**

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԵՎՐՈՊԱՆ

ԱՏԼԱՆՏՅԱՆ ՕՎԿԻԱՆՈՍ
ՆՈՐՎԵԳԱԿԱՆ ԾՈՎ
ԲԱՐԵՆՑԻ ԾՈՎ
ՍՊԻՏԵԼԿԱ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆ ԾՈՎ
ՍԵՎ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ ԾՈՎ
ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ԾՈՎ
ԲԱԼԹԻԿ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ ԾՈՎ
ՍԱՍԱՆԻ

սեպտեմբերի 11-ին հարձակման ենթարկվեց սեփական տարածքում: Քաղաքացիական ինքնաթիռներ գավթած ահաբեկիչները դրանք ուղղեցին Նյու Յորքում գտնվող Համաշխարհային առևտրի կենտրոնի շենքերի և Վաշինգտոնում գտնվող ԱՄՆ-ի պաշտպանության նախարարության (Պենտագոն) շենքի վրա: Համաշխարհային առևտրի կենտրոնի շենքերը ոչնչացվեցին: Զոհերի թիվը հասնում էր մի քանի հազարի: Աղետի քաղաքական ու հոգեբանական հետևանքները մեծ էին ու ճնշող:

Ահաբեկչական այդ գործողությունների կազմակերպման գործում կենտրոնական դեր էր խաղացել **Ուսամա բեն Լադենը,** որը ծագումով Սաուդյան Արաբիայից էր: Նա հաստատվել էր Աֆղանստանում և ստեղծել «Ալ Քայիդա» ահաբեկչական կազմակերպությունը: Վաշինգտոնը Աֆղանստանից պահանջեց հանձնել ահաբեկչին, սակայն մերժում ստացավ: Արդյունքում ԱՄՆ-ը որոշեց պատերազմական գործողություններ սկսել ընդդեմ Աֆղանստանի: Նրան այդ հարցում աջակցեց Մեծ Բրիտանիան՝ զորքեր ուղարկելով Աֆղանստան: Իր աջակցությունը ԱՄՆ-ին հայտնեց նաև Ռուսաստանի Դաշնությունը:

2001 թ. սեպտեմբերի 11-ի իրադարձությունները վկայում էին միջազգային հարաբերություններում որակապես նոր սպառնալիքի՝ վերազգային ահաբեկչության ի հայտ գալու մասին: Այն չուներ հստակ ազգային կամ պետական պատկանելություն և ի զորու էր հարվածելու ցանկացած երկրի ինչպես արտերկրից, այնպես էլ երկրի ներսից:

Այսպիսով՝ XXI դ. առաջին և երկրորդ տասնամյակների սահմանագծի իրողությունները հաճախ որակվում են իբրև **Միաբևեռ աշխարհ** մեկ գերտերությամբ, մի

2001 թ. սեպտեմբերի 11-ին Նյու Յորքում ահաբեկչության ենթարկված Համաշխարհային առևտրի կենտրոնի երկնաքերները

շարք հիմնական համաշխարհային տերություններով և համաշխարհային քաղաքականության վրա գնալով ավելի մեծ ազդեցություն ունեցող տարածաշրջանային տերություններով հանդերձ:

Սառը պատերազմի ավարտը և նոր ընկալումները:

Ամերիկացի պատմաբան **Ֆ. Ֆուկայաման** 1989 թ. հանդես եկավ «Պատմության ավարտը» աշխատությամբ: Նա առաջ քաշեց այն գաղափարը, որ պատմությունն իբրև շարժում ավարտված է, քանզի աշխարհում վերջնականապես հաղթանակել են ազատական ժողովրդավարությունը, սպառողական մշակույթը, իսկ Արևմուտքն ու արևմտյան գաղափարախոսությունը գերիշխում են: Նա նաև նշում էր, որ առանձին փոքր պատերազմները դեռ հնարավոր են, սակայն մեծ պատերազմների հավանականությունը խիստ նվազել է:

Մեկ այլ ամերիկացի գիտնական **Ս. Հանթինգթոնը** 1993 թ. իր «Քաղաքակրթությունների բախումը» հոդվածում ճիշտ հակադիր տեսակետն առաջ քաշեց: Նա նշում էր, որ ապագայում ոչ միայն չեն բացառվում պատերազմները, այլև սպասվում են ավելի խոշոր պատերազմներ՝ բախումներ քաղաքակրթությունների միջև: Ընդ որում, Արևմուտքի դեմ կարող է հանդես գալ մնացյալ աշխարհը: Նրա կարծիքով բաժանարար գծերն անցնելու էին քաղաքակրթությունների միջև:

Քաղաքական գործիչները չափից դուրս անիրատեսական համարեցին Ֆուկայամայի դիրքորոշումը, սակայն միաժամանակ չափից դուրս վտանգավոր՝ նաև Հանթինգթոնի գաղափարախոսությունը: Արդյունքում Իրանի նախագահ **Մ. Խաթամին** հանդես եկավ քաղաքակրթությունների երկխոսության գաղափարով: Ավելի ուշ շրջանառության մեջ դրվեց *քաղաքակրթությունների դաշինք* հասկացությունը: Սակայն ապագա զարգացումները մեծապես կախված էին նրանից, թե ինչպիսին կլիներ նոր աշխարհակարգը: Իսկ նոր աշխարհակարգն, ինչպես տեսանք, ամերիկյան աշխարհակարգ է, որում ԱՄՆ–ը առաջինն է հավասարների մեջ: ԱՄՆ–ը իր տնտեսական, ռազմական, քաղաքական և մշակութային ներուժով էականորեն գերազանցում է մյուս խոշոր երկրներին: Սակայն մարդկության առջև առկա են որոշակի մարտահրավերներ, որոնք միայնակ կարգավորել չի կարող նույնիսկ ԱՄՆ–ի նման գերտերությունը: Հետևաբար միտում կար հակամարտությունից անցնելու համագործակցության: Դա առաջին հերթին վերաբերում էր ԱՄՆ–ի և ԽՍՀՄ իրավահաջորդ Ռուսաստանի միջև հարաբերություններին:

Ռուս–ամերիկյան հարաբերությունները

Ռուսաստանի նախագահ **Բորիս Ելցինի** կառավարման օրոք (1991–1999 թթ.) ԱՄՆ–ի նախագահներ Ջորջ Բուշ Ավագն ու Բիլ Քլինթոնը աջակցում էին Ռուսաստանում ընթացող տնտեսական բարեփոխումներին: Իր հերթին Ռուսաստանը առժամանակ միջազգային հարաբերություններում դադարեց առաջատար դիրքեր գրավելուց: Ռուսաստանի հաջորդ նախագահ **Վլադիմիր Պուտինի** օրոք Ռուսաստանը ոչ միայն տնտեսական աննախադեպ աճ ապահովեց և վճարեց իր արտաքին պարտքերը, այլև վերստին առաջատար դիրքեր գրավեց միջազգային հարաբերություններում:

Ի հայտ եկան նաև հակասություններ ռուս–ամերիկյան հարաբերություններում: Ռուսաստանը դեմ էր ՆԱՏՕ–ի հետագա ընդլայնմանը արևելյան ուղղությամբ, ԱՄՆ–ի՝ հակահրթիռային պաշտպանության համակարգ ստեղծելու ծրագրերին, 2003 թ. տեղ գտած ամերիկյան ներխուժմանը Իրաք: Ռուսաստանը և ԱՄՆ–ը քայլեր էին ձեռնարկում սառը պատերազմի մտածելակերպից հրաժարվելու և իրական համագործակցություն ծավալելու ուղղությամբ:

Համագործակցության մթնոլորտի ստեղծման տեսանկյունից կարևորագույն քայլ էր Ռուսաստանի՝ Մեծ յոթնյակին միանալու իրողությունը. կառույցը ստացավ **Մեծ ութնյակ** անվանումը:

Ռուս–ամերիկյան հարաբերություններում նոր դրական տեղաշարժեր նկատվեցին նաև ԱՄՆ–ի նախագահության օրոք: Հարաբերությունների ջերմացումը որակվեց որպես «նոր մեկնարկ» և տվեց իր արդյունքները: 2010 թ. գարնանը կողմերը ստո-

Ռուսաստանի Դաշնության վարչապետ Վ. Պուտինը խորհրդակցության ընթացքում քննարկում է Առևտրի համաշխարհային կազմակերպությանն անդամակցելու Ռուսաստանի դիրքորոշումը, Մոսկվա, 2010 թ.

բագրեցին երկար հեռահարության միջուկային մարտագլխիկներով հրթիռների կրճատման վերաբերյալ նոր պայմանագիր:

ԱՄՆ–ի հաջորդ նախագահ **Դ. Թրամփի** օրոք ԱՄՆ — ՌԴ հարաբերությունները սրվել են հատկապես Ուկրաինայի և Սիրիայի հարցերի հետ կապված: Ղրիմի՝ Ռուսաստանին միացնելուց հետո ԱՄՆ–ը և նրա դաշնակիցները պատժամիջոցներ կիրառեցին Ռուսաստանի դեմ, վերջինս պատասխան քայլեր ձեռնարկեց: Նորից թափ է հավաքում սպառազինությունների մրցավազքը: Ուրվագծվել է նոր **Սառը պատերազմը:**

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ժամանակակից «նոր աշխարհակարգ» հասկացությունը ո՞վ է դրել քաղաքական շրջանառության մեջ: Ըստ նրա՝ ինչպիսի՞ն էր լինելու այդ աշխարհակարգը:

2. Արմատական ի՞նչ փոփոխություններ տեղի ունեցան միջազգային հարաբերություններում: Ի՞նչ հետևանքներ ունեցավ Սեպտեմբերի 11–ը:

3. Սառը պատերազմի ավարտին աշխարհաքաղաքական զարգացումների ապագայի վերաբերյալ ի՞նչ տեսակետներ էին շրջանառվում, բացատրե՛ք դրանց էությունը: Քաղաքական գործիչներն ինչպիսի՞ վերաբերմունք դրսևորեցին այդ տեսակետների հանդեպ: Բացատրե՛ք «քաղաքակրթությունների երկխոսություն» հասկացությունը:

4. Ի՞նչ ընթացք են ստացել ռուս–ամերիկյան հարաբերությունները հետսառըպատերազմյան շրջանում: Օգտվելով լրացուցիչ աղբյուրների և համացանցի նյութերից՝ բնութագրե՛ք դրանց ներկայիս վիճակը և փորձե՛ք պարզել զարգացման հեռանկարները:

§ 2. ԽՍՀՄ–Ի ՓԼՈՒԶՈՒՄՆ ՈՒ ՆՈՐԱՆԿԱԽ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՋԱՑՈՒՄԸ

Վերակառուցման գործընթացը

ԽՍՀՄ–ը 1980–ական թթ. կեսերին խոր տնտեսական և սոցիալ–քաղաքական ճգնաժամի մեջ էր հայտնվել: Պահանջվում էին արմատական վերափոխումներ: Խորհրդային համակարգում բարեփոխումներ իրագործելու նախաձեռնությամբ հանդես եկավ 1985 թ. մարտին ԽՍՀՄ Կենտկոմի գլխավոր քարտուղար ընտրված Միխայիլ Գորբաչովը: Նրա կողմից ձեռնարկված բարեփոխումները ստացան **վերակառու-**

ցում (պերեստրոյկա) անվանումը: Վերակառուցումը ենթադրում էր տնտեսական, քաղաքական և գաղափարախոսական բարեփոխումների իրագործում: Ենթադրվում էր, որ վերափոխումների գործում լուրջ լծակ կարող է լինել հրապարակայնության հռչակումը, ինչպես նաև հասարակության ժողովրդավարացման քաղաքականությունը:

Տնտեսական ոլորտում վերակառուցումն անցավ երեք փուլով.

- երկրի սոցիալ–տնտեսական զարգացման խթանում և արագացում,
- արմատական տնտեսական բարեփոխումների իրագործում,
- հանրապետությունների և տարածաշրջանների անցում տնտեսական հաշվարկի:

Քաղաքական ու գաղափարախոսական ոլորտում Մ. Գորբաչովը աննշան հաջողություններ ունեցավ: Հասարակության ժողովրդավարացման գործընթացը դանդաղ էր ընթանում: Երկրում լայնամասշտաբ փոփոխություններ կատարվեցին միայն 1988 թ.: Ընդունվեց ընտրական նոր համակարգ, փոխվեցին ԽՍՀՄ–ում պետական մարմինների գործունեության սկզբունքները: Իշխանության բարձրագույն մարմին հռչակվեց **ժողովրդական պատգամավորների համագումարը,** իսկ Գերագույն խորհուրդը դարձավ բազմաթիվ գործառույթներ իրականացնող մշտական մարմին: Արդեն 1990 թ. մարտին ԽՍՀՄ ժողովրդական պատգամավորների 3–րդ համագումարը չեղյալ հայտարարեց «ԽՄԿԿ ղեկավար և ուղղորդող դերի» վերաբերյալ ԽՍՀՄ Սահմանադրության 6–րդ հոդվածը, որը նշանակում էր քաղաքական համակարգի փլուզում:

1989 թվականից երկրում ի հայտ եկավ անկախ աշխատավորական շարժումը: Սկսվեց նաև ընդդիմադիր կուսակցությունների ձևավորման գործընթացը: Սակայն դրա հետ մեկտեղ ԽՍՀՄ ղեկավարությունը նախկին մեթոդներով էր ձգտում կարգավորելու վերակառուցման արդյունքում վերստին բարձրացված ազգային ինքնորոշման և մի շարք այլ ցավոտ հարցեր (Արցախյան հարց և այլն):

Տնտեսական բարեփոխումները նույնպես տապալվեցին, քանի որ վերափոխումների հիմքում դրվեցին ավանդական վարչահրամայական մեթոդները:

ԽՍՀՄ փլուզման գործընթացը

1990 թ. մարտ–մայիս ամիսներին կայացան միութենական հանրապետությունների իշխանության օրենսդիր մարմինների ընտրություններ: ԽՍՀՄ–ում սկսվեց «սուվերենությունների շքերթը», երբ միութենական հանրապետությունները հայտարարում էին իրենց անկախության մասին: Հանրապետություններում դադարեցվելու էր միութենական օրենքների կիրառումը: Իսկ **1990 թ. հունիսի 12–ին** ընդունվեց Ռուսաստանի պետական

ԽՍՀՄ-Ի ՓԼՈՒՋՈՒՄԸ ԵՎ ԱՊՀ-Ի ՍՏԵՂԾՈՒՄԸ

ՀՅՈՒՍԻՍԱՅԻՆ ՍԱՌՈՒՅՑԱԼ ՕՎԿԻԱՆՈՍ
ՍԱՍՏԱՆ
ԴԱՇՆՈՒԹՅՈՒՆ
ՂԱԶԱԽՍՏԱՆ
08.12.1991
21.12.1991
Մոսկվա
Սանկտ Պետերբուրգ
Արխանգելսկ
Սվերդլովսկ
Նովոսիբիրսկ
Իրկուտսկ
Չիտա
Խաբարովսկ
Վլադիվոստոկ
Մագադան
Պետրոպավլովսկ
Վերխոյանսկ
Ուլան Ուդե
Արալ
Աստանա
Կարագանդա
Թաշքենդ
Բիշկեկ
Ալմաթի (Ալմա Աթա)
Դուշանբե
Խորոգ
Տաշքենդ
Թբիլիսի
Երևան
Ստեփանակերտ
Բաքու
Գորի
Աստրախան
Վոլգոգրադ
Ռոստով
Դոնի
Կրասնոդար
Սոչի
Սիմֆերոպոլ
Խարկով
Կուրսկ
Նիժնի Նովգորոդ
Կազան
Սամարա
Ուֆա
Պերմ
Տյումեն
Օմսկ
Նովոսիբիրսկ
Բարնաուլ
Ղազախստան
Ուզբեկստան
Թուրքմենստան
Տաջիկստան
Ղրղզստան
Ադրբեջան
Հայաստան
Վրաստան
Մոլդովա
Ուկրաինա
Բելոռուսիա
Ռուսաստան
Ռուսական Դաշնություն
Ֆրանց Իոսիֆի երկիր
Նոր երկիր
Հյուսիսային երկիր
Դրսի բրիտանական կղզիներ
Սպիտակ ծով
Կարմիր ծով
Սև ծով
Կասպից ծով
Արալյան ծով
Բալթիկ ծով
Ֆինլանդիա
Հելսինկի
Ստոկհոլմ
Օսլո
Կոպենհագեն
Ռիգա
Տալին
Վիլնյուս
Մինսկ
Լվով
Կիև
Բրեստ
Սարատով
Վոլգա
Դոն
Կամա
Օբ
Լենա
Յենիսեյ
Ալդան
Ամուր
Սամարա
Բայկալ լ.
Ալտայ
Ղազախական մանրոտ
Ղազախական բարձրավանդակ
Ամու Դարյա
Սիր Դարյա
Բալխաշ լ.
Իսիկ-Կուլ լ.
Ինդոնեզիա
Ինդոկինա
Ինդիկ
Ինդիկ
Ինդիկ

Հեղաշրջման ձախողումից հետո Ռուսաստանի խորհրդարանի շենքի մոտ կայացած բազմահազարանոց հանրահավաքին մարդիկ պոնում են ժողովրդավարության հաղթանակը: Նախագահ Բ. Ելցինը, ծածանելով ռուսական եռագույն դրոշը, շնորհավորում է հավաքվածներին և իր երախտագիտությունը հայտնում նրանց, ովքեր այդ ծանր պահին կանգնեցին ի պաշտպանություն ժողովրդավարության հաղթանակի:

Մոսկվա,
1991 թ. օգոստոսի 22

ինքնիշխանության մասին հռչակագիրը: Իրավիճակի սրվելը նոր միութենական պայմանագրի մշակման անհրաժեշտություն ստեղծեց:

1991 թ. մարտի 17-ին կայացավ ԽՍՀՄ-ի պահպանման անհրաժեշտության վերաբերյալ հանրաքվեն: Հանրաքվեի մասնակիցների երեք քառորդի պատասխանը դրական էր, չնայած հանրաքվեին մասնակցեց 15 միութենական հանրապետություններից 9-ը:

1991 թ. օգոստոսի 19-ին Խորհրդային Միությունում **պետական հեղաշրջում** տեղի ունեցավ: Երկրի կառավարումը ստանձնեց **Արտակարգ իրադրության պետական կոմիտեն (ԱԻՊԿ)**: Սակայն հեղաշրջումը ճնշվեց, և ԱԻՊԿ-ի անդամները ձերբակալվեցին: Այդ պահից սկսած՝ իրական իշխանությունն անցավ Ռուսաստանի Դաշնության ղեկավարության ձեռքը՝ **նախագահ Բորիս Ելցինի** գլխավորությամբ: Օգոստոսյան դեպքերի արդյունքը եղավ նաև երկրի քաղաքական ասպարեզից ԽՄԿԿ-ի հեռացումը:

Ռուսաստանի ղեկավարությունը ձգտում էր Ռուսաստանը դուրս բերելու Խորհրդային Միության իշխանական կառույցների վերահսկողությունից: Ռուսաստանի Դաշնությունը 1991 թ. հոկտեմբերի 1-ին ներկայացրեց ԽՍՀՄ վերափոխման նախագիծ: Նախագծի համաձայն՝ ՌԽԴՍՀ-ն պետք է վերածվեր անկախ պետության՝ դառնալով Խորհրդային Միության իրավահաջորդը միջազգային ասպարեզում: Նախագծով հաշվարկված էր, որ Ռուսաստանի Դաշնությունը, ունենալով հարուստ ռեսուրսներ և ռազմական հզորություն, իր կողմը կգրավի մյուս հանրապետությունը-

ներին: Հետևաբար նոր միասնացումն ավելի նպաստավոր կլիներ ռուսական կողմի համար:

Իր հերթին Գորբաչովի նախաձեռնությամբ վերսկսվեցին աշխատանքները միութենական պայմանագրի նոր նախագծի մշակման ուղղությամբ: 1991 թ. նոյեմբերի 25–ին ԽՍՀՄ Պետական խորհուրդը հաստատեց ԽՍՀՄ–ի փոխարեն **Ինքնիշխան պետությունների միության (ԻՊՄ)** ստեղծման վերաբերյալ պայմանագրի նախագիծը: Գորբաչովի կարծիքով նոր միությունը լինելու էր համադաշնային, ժողովրդավարական պետություն:

Սակայն դեկտեմբերի 1–ին Ուկրաինայում անցկացված հանրաքվեի արդյունքում բնակչության ավելի քան 90 %–ն արտահայտվեց հօգուտ անկախության: Մեկ օր անց Ռուսաստանի նախագահը հայտարարեց Ուկրաինայի անկախության ճանաչման մասին:

Սակայն Գորբաչովը մտադիր չէր զիջել: 1991 թ. դեկտեմբերի 3–ին ԽՍՀՄ Գերագույն խորհուրդը հաստատեց ԻՊՄ ստեղծելու վերաբերյալ պայմանագրի նախագիծը: Դա Գորբաչովի հակառակորդներին ստիպեց դիմել կտրուկ միջոցների:

1991 թ. դեկտեմբերի 8–ին Բելովեժյան անտառ–արգելանոցում (Բրեստից ոչ հեռու) տեղի ունեցավ Ռուսաստանի, Ուկրաինայի և Բելոռուսիայի (Բելառուս) ղեկավարների գաղտնի հանդիպումը: Այստեղ երեք պետությունները ստորագրեցին **Անկախ Պետությունների Համագործակցության (ԱՊՀ)** կազմավորման վերաբերյալ պայմանագիրը: Պայմանագրում նաև ասվում էր. *«ԽՍՀՄ–ը՝ իբրև միջազգային իրավունքի սուբյեկտ և աշխարհաքաղաքական իրողություն, դադարեցնում է իր գոյությունը»:*

Բելովեժյան համաձայնագիրը վճռորոշ դեր խաղաց Խորհրդային Միության փլուզման գործում: Դեկտեմբերի 9–12–ը Ուկրաինայի, Բելոռուսիայի և Ռուսաստանի Գերագույն խորհուրդները չեղյալ հայտարարեցին ԽՍՀՄ կազմավորման վերաբերյալ 1922 թ. պայմանագիրը: **1991 թ. դեկտեմբերի 21–ին** Ալմա Աթայում ԽՍՀՄ 11 նախկին հանրապետություններ հայտարարեցին ԽՍՀՄ–ի գոյության վերջնական դադարեցման մասին: Միայն մերձբալթյան երկրները (Լատվիա, Լիտվա, Էստոնիա) և Վրաստանը չմիացան ԱՊՀ–ին:

1991 թ. դեկտեմբերի 25–ին Մ. Գորբաչովը հրաժարական տվեց: Պատմության մեջ նա մնաց իբրև ԽՍՀՄ առաջին և վերջին նախագահ: Կրեմլից իջեցվեց ԽՍՀՄ կարմիր դրոշը: Շուրջ 70–ամյա ուղի անցած Խորհրդային Միությունը դադարեց գոյություն ունենալուց:

ԽՍՀՄ–ի փլուզման հետևանքները

Խորհրդային Միության փլուզումն ունեցավ **տնտեսական և քաղաքական հետևանքներ:**

Այսուհետև նորանկախ պետություններն իրենք պետք է հոգային իրենց տնտեսական կարիքները: Սակայն տնտեսական անկախության ձեռքբերումը դժվարին խնդիր էր: Պետությունների մեծ մասի բնակչության կենսամակարդակն առժամանակ անկում ապրեց: Նրանցից շատերն անկախացումից հետո կորցրին արտահանման նախկին շուկաները, քանզի նախկինում Մոսկվան էր ապահովում իրենց մուտքը այդ շուկաներ: Արդյունքում պետություններից շատերի մասնաբաժինը միջազգային ապրանքաշրջանառության մեջ նվազեց: Փոխարենը աճեց կախվածությունն արտաքին առևտրից:

ԽՍՀՄ փլուզման արդյունքում լուրջ հիմնախնդիր դարձավ մտավոր ներուժի հեռացումը հայրենիքից: Այս երևույթը ստացել է «ուղեղների արտահոսք» անվանումը: Մեծ ծավալ ընդունեց նաև բնակչության արտագաղթը:

Աշխարհի քարտեզի վրա հայտնվեցին տասնհինգ նորանկախ երկրներ: Ի հայտ եկավ նաև ԱՊՀ-ն: ԽՍՀՄ-ի տարբեր հատվածների միջև նախկինում ձևավորվել էին առևտրատնտեսական հաստատուն կապեր, ինչը խզելն այնքան էլ նպատակահարմար չէր: Նախկին Խորհրդային Միության ժողովուրդներն ունեին ընդհանուր պատմական, մշակութային ժառանգություն և աշխարհայացքային ընդհանրություններ: Նրանք գիտակցում էին քաղաքական և տնտեսական կապերը խզելու բացասական հետևանքները: Ռուսաստանի Դաշնությունը նույնպես ձգտում էր իր ազդեցության տակ պահելու ԽՍՀՄ նախկին անդամներին:

ԽՍՀՄ փլուզումն ունեցավ նաև համաշխարհային նշանակության հետևանքներ: Դրա արդյունքում հնարավոր դարձավ ավելի զորեղ ու հաստատուն Եվրամիության ստեղծումը, որը ներկայումս ընդգրկում է նաև նախկին Խորհրդային Միության մերձբալթյան հանրապետությունները: ԵՄ-ի հզորացմանը նպաստեց նախկին սոցիալիստական երկրներից էժան հումքի և էներգակիրների ներմուծումը: Սոցիալիստական համակարգի փլուզման արդյունքում հնարավոր դարձան ՆԱՏՕ-ի ընդլայնումն ու ԱՄՆ-ի գլխավորությամբ միաբևեռ աշխարհակարգի ստեղծումը:

ԽՍՀՄ-ի փլուզման անցանկալի հետևանքներից մեկը դարձավ քաղաքական իսլամի ակտիվացումը: Որոշ իսլամական երկրներ կրկին ակտիվացրին կրոնական գաղափարախոսությունը՝ այն օգտագործելով քաղաքական նպատակներով:

Միաժամանակ ԽՍՀՄ-ի փլուզումով ավարտվեցին սառը պատերազմի ընթացքում երրորդ աշխարհում տեղ գտած մի շարք պատերազմներ: Խնդիրն այն է, որ որոշ երկրներ զրկվեցին արտաքին տնտեսական և ռազմական օգնությունից, որ նախկինում ստանում էին ԽՍՀՄ-ից ու ԱՄՆ-ից:

Համագործակցությունը հետխորհրդային տարածքում

Անկախ Պետությունների Համագործակցությունը (ԱՊՀ–ն) պետությունների միավորում է, որ հիշեցնում է Մեծ Բրիտանիայի գլխավորությամբ ստեղծված Ազգերի համագործակցությունը:

1993 թ. հունվարին ընդունված ԱՊՀ կանոնադրությունը պաշտոնապես հստակեցրեց այդ կառույցին միանալու կարգը. ԱՊՀ լիիրավ անդամ է ԱՊՀ կանոնադրությունը վավերացրած պետությունը:

2003–2005 թթ. ընթացքում ԱՊՀ մի շարք երկրներում տեղ գտան, այսպես կոչված, «գունավոր հեղափոխություններ», որոնք որոշակիորեն փոխեցին իրավիճակը ԱՊՀ–ում: Այդ շարժումների մասնակիցները գերազանցապես կիրառում էին ոչ բռնի դիմադրության ու բողոքի ցույցերի մարտավարությունն ընդդեմ իրենց կառավարությունների՝ պահանջելով իրական ժողովրդավարության հաստատում: Այդ բոլոր շարժումներն էլ ընտրում էին ինչ–որ գույն կամ ծաղիկ՝ որպես իրենց շարժման խորհրդանիշ:

«Գունավոր հեղափոխությունների» արդյունքում իշխանությունից հեռացվեցին Վրաստանի, Ուկրաինայի և Ղրղզստանի նախագահները: Վրաստանում 2003 թ. «Վարդերի հեղափոխության», Ուկրաինայում 2004 թ. «Նարնջագույն հեղափոխության» և Ղրղզստանում 2005 թ.

Նարնջագույն հեղափոխության մասնակիցները բողոքի ցույց են կազմակերպել Կիևի Անկախության հրապարակում, 2004 թ.

«Կակաչների հեղափոխության» արդյունքում իշխանության եկան նոր գործիչներ, որոնք սկզբունքորեն վերանայեցին ԱՊՀ շրջանակներում իրենց համագործակցությունը:

Օրինակ՝ 2006 թ. փետրվարին Վրաստանը հայտարարեց ԱՊՀ պաշտպանության նախարարների խորհրդի կազմից դուրս գալու իր որոշման մասին: 2008 թ. օգոստոսին Վրաստանը պատերազմական գործողություններ սկսեց ընդդեմ Հարավային Օսիայի, որը վերածվեց ռուս–վրացական պատերազմի. Վրաստանը ծանր պարտություն կրեց: Պատերազմից անմիջապես հետո Վրաստանի խորհրդարանը ԱՊՀ կազմից դուրս գալու վերաբերյալ որոշում կայացրեց:

ԱՊՀ տարածքում գնալով ավելի ծանրակշիռ դեր սկսեց խաղալ

հատկապես **Հավաքական անվտանգության պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ):** 1992 թ. մայիսի 15–ին Հայաստանը, Ղազախստանը, Ղրղզստանը, Ռուսաստանը, Տաջիկստանը և Ուզբեկստանը Տաշքենդում ստորագրեցին Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագիրը (ՀԱՊ): **2002 թ. մայիսի 14–ին** որոշվեց ՀԱՊ–ը վերածել լիարժեք միջազգային կազմակերպության, ստեղծվեց Հավաքական անվտանգության վերաբերյալ պայմանագրի կազմակերպությունը (ՀԱՊԿ): Այժմ նրա անդամներն են Հայաստանը, Ռուսաստանը, Բելառուսը, Ղազախստանը, Ղրղզստանը և Տաջիկստանը: **2009 թ. փետրվարին** ՀԱՊԿ անդամ պետությունների նախագահները Մոսկվայում Արագ արձագանքման հավաքական ուժերի ստեղծման վերաբերյալ որոշում կայացրին:

Ժողովրդավարության համար պայքարը ԱՊՀ երկրներում նոր թափ հավաքեց 2010–ական թվականներին: 2014 թ. փետրվարին Ուկրաինայի մայրաքաղաքում իրադարձությունները արյունալի ընթացք ստացան, նախագահը լքեց երկրի տարածքը: Ուկրաինայի արևելյան շրջաններում անջատողական շարժում սկսվեց: Նույն թվականի մարտին Ղրիմում հանրաքվե անցկացվեց, որի արդյունքում այն միացվեց Ռուսաստանին: Սակայն ժողովրդավարության ամրապնդման և երկրում կայունություն հաստատելու համար դեռ լուրջ խնդիրներ կան լուծելու:

2018 թ. ապրիլ – մայիսին «թավշյա» հեղափոխությունը հաղթեց Հայաստանի Հանրապետությունում: Բողոքի և անհնազանդության հուժկու շարժումը տապալեց հին վարչակարգը, տեղի ունեցավ խաղաղ իշխանափոխություն, և սկսվել է իրականում ազատ, արդար, ժողովրդավար և ինքնիշխան պետության կայացման գործընթացը:

Շանհայի համագործակցության կազմակերպությունը

Գնալով ավելի մեծ հեղինակություն է ձեռք բերում նաև **Շանհայի համագործակցության կազմակերպությունը:** Դեռ 1996 թ. սկսած՝ գործում էր **Շանհայի հնգյակը** (Չինաստան, Ռուսաստան, Ղազախստան, Ղրղզստան և Տաջիկստան): 2001 թ. Հնգյակին միացավ

Շանհայի համագործակցության կազմակերպության ընդլայնված խորհրդաժողով Բիշկեկում, 2007 թ.

Շանհայի համագործակցության կազմակերպության անդամ երկրների ղեկավարները 2009 թ. Ռուսաստանում կայացած վեհաժողովում

նաև Ուզբեկստանը, և կազմակերպությունը վերանվանվեց Շանհայի համագործակցության կազմակերպություն: ՉԺՀ Շանհայ քաղաքում հիմնված կազմակերպության շտաբ-կայանը Պեկինում է: Կազմակերպությունը մեծ հաջողություններ գրանցեց անդամ երկրների միջև սահմանային խնդիրների կարգավորման, անվտանգության և սահմանամերձ շրջաններում ռազմական ուժերի նվազեցման ասպարեզում: Կազմակերպությունը հետագայում ընդլայնեց իր գործունեությունը, և ներկայումս անդամ երկրների միջև համագործակցությունն ընդգրկում է նաև ռազմական, տնտեսական և մշակութային բնագավառները:

Լրացուցիչ նյութ

ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալուն առնչվող հարցերի լուծման կարգին վերաբերող ԽՍՀՄ օրենքը (ընդունվել է 1990 թ. ապրիլի 3-ին)

Հոդված 3

Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար շրջաններ ու ինքնավար օկրուգներ ունեցող միութենական հանրապետությունում հանրաքվեն անցկացվում է յուրաքանչյուր ինքնավարության համար առանձին: Ինքնավար հանրապետությունների և ինքնա-

վար կազմավորումների ժողովուրդները պահպանում են ԽՍՀՄ կազմում կամ ԽՍՀՄ կազմից դուրս եկող հանրապետության կազմում մնալու, ինչպես նաև իրենց պետական-իրավական կարգավիճակի հարցն ինքնուրույն որոշելու իրավունքը:

Միութենական այն հանրապետությունում, որի տարածքում առկա են ազգային խմբերի հոծ բնակեցման վայրեր, իսկ վերջիններս տվյալ տեղանքի բնակչության մեծամասնությունն են կազմում, հանրաքվեի արդյունքների որոշման ընթացքում տվյալ վայրերում տեղ գտած քվեարկության արդյունքներն առանձին են դիտարկվում:

Հոդված 6

Իր կազմում ինքնավար հանրապետություններ, ինքնավար շրջաններ ու ինքնավար օկրուգներ կամ հիշյալ օրենքի 3-րդ հոդվածի երկրորդ մասում հիշատակված ազգային խմբերի հոծ բնակեցման վայրեր ունեցող միութենական հանրապետությունում հանրաքվեի արդյունքները դիտարկվում են միութենական հանրապետության Գերագույն խորհրդի կողմից՝ ինքնավար հանրապետության Գերագույն խորհրդի կամ ժողովրդական պատգամավորների համապատասխան խորհուրդների հետ համատեղ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ե՞րբ և ինչո՞ւ ԽՍՀՄ-ում արմատական փոփոխությունների պահանջ առաջացավ: Ի՞նչ անուն ստացան այդ բարեփոխումները: Ինչպե՞ս ընթացան բարեփոխումները տնտեսական, քաղաքական ու գաղափարախոսական ոլորտում: Ի՞նչ հետևանքներ ունեցան այդ բարեփոխումները:
2. Ո՞րն էր «սուվերենությունների շքերթի» էությունը: Ե՞րբ ԽՍՀՄ-ում պետական հեղաշրջում իրագործվեց. ինչո՞ւ այն ձախողվեց: ԽՍՀՄ-ի վերափոխման կամ նրա փոխարեն այլ պետական կազմավորում ստեղծելու ի՞նչ նախագծեր կային:
3. Ե՞րբ և որտե՞ղ է ստորագրվել ԱՊՀ-ի կազմավորման մասին պայմանագիրը: Ո՞ր հանդիպման ընթացքում հայտարարվեց ԽՍՀՄ-ի գոյության դադարեցման մասին: Օգտվելով լրացուցիչ աղբյուրներից՝ թվարկե՛ք ներկայումս ԱՊՀ-ի անդամ հանրապետությունները:
4. Ներկայացրե՛ք հետխորհրդային տարածքի երկրների համագործակցության ձևերն ու արդյունքները: Փորձե՛ք վերհանել Վրաստանում, Ուկրաինայում և Ղրղզստանում տեղի ունեցած «գունավոր» հեղափոխությունների պատճառները: Ի՞նչ նոր իրադարձություններ տեղի ունեցան 2010-ական թթ. ԱՊՀ տարածքում:
5. Ներկայացրե՛ք Շանհայի համագործակցության կազմակերպության գործունեության հիմնական նպատակները և արդյունքները:

§ 3. ՆԱՏՕ-Ն ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՆՈՐ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՆԱՏՕ-ի ընդլայնումն ու վերաձևավորումը

Արդեն ասվել է, որ 1991 թ. Պրահայում լուծարվեց Վարշավյան պայմանագրի կազմակերպությունը: Միջազգայնագետները սկսեցին խոսել ՆԱՏՕ-ի հնարավոր մայրամուտի մասին: Ռուսաստանը փորձում էր նոր շունչ տալ Հելսինկիի գործընթացին՝ Եվրոպայի անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ) դարձնելով եվրոպական անվտանգության շղթայի կենտրոնական օղակը: Ֆրանսիան հանդես եկավ «եվրոպական պաշտպանության» համակարգի ստեղծման գաղափարով: Սակայն ՆԱՏՕ-ն դարձավ եվրոպական երկրների ռազմաքաղաքական համախմբման կենտրոն և պահպանեց իր դիրքերը: Դա տեղի ունեցավ ոչ միայն ԱՄՆ-ի ջանքերի շնորհիվ, այլև նախկին սոցիալիստական երկրների ու ԽՍՀՄ որոշ հանրապետությունների՝ հետխորհրդային Ռուսաստանից հեռանալու ձգտումների և ԽՍՀՄ գորբաչովյան ղեկավարության անհեռատեսության արդյունքում: ԱՄՆ-ը և նրա գլխավորած ռազմաքաղաքական դաշինքը դարձան ձգողականության այն բևեռը, որն էլ սահմանեց Եվրոպայում և աշխարհում միջազգային հարաբերությունների զարգացման գլխավոր ուղղությունը:

ՆԱՏՕ-ի անդամ երկրների խորհրդաժողով Պրահայում, 2002 թ.

1993 թ. սկսած՝ ԱՄՆ-ն ավելի մեծ ուշադրություն էր դարձնում նախկին սոցիալիստական երկրների հետ հարաբերություններին: Այդ երկրները տիրազորությունից անցում էին կատարում ժողովրդավարության: Ընդհանուր վերափոխումների շրջանում ԱՄՆ-ի ղեկավարությունը ձգտում էր դրանք ուղղելու իրեն ձեռնտու հունով: ԱՄՆ-ը ջանում էր նվազագույնի հասցնել ռուսական ռազմական սպառնալիքի վերակենդանացման հավանականությունը: Անհրաժեշտ էր համարվում նաև այնպիսի պայմանների ստեղծումը, որ հնարավորություն կընձեռեր Արևմուտքի երկրներին մուտք գործելու նախկին «փակ երկրներ»՝ օգտվելով վերջիններիս նյութական և մարդկային ռեսուրսներից: Այդ նպատակով անհրաժեշտ էր այդ երկրները ներգրավել համաշխարհային տնտեսական և քաղաքական գործընթացներում:

ԱՄՆ–ի վարչակազմն առաջ քաշեց «ժողովրդավարության ընդլայնման» գաղափարը: Համաձայն դրա՝ ամերիկյան արտաքին քաղաքականության առաջնահերթություններից էր համարվում Եվրասիայի նախկին սոցիալիստական երկրների ժողովրդավարացմանն աջակցելը: Նախատեսվում էր, որ ժողովրդավարության ուղին բռնած երկրները կդառնան արևմտյան ռազմաքաղաքական և տնտեսական կառույցների անդամ: Ենթադրվում էր նաև, որ ԽՍՀՄ–ի նախկին արևելաեվրոպական դաշնակիցները կդառնան ՆԱՏՕ–ի անդամ: Հետևաբար նոր աշխարհակարգի կարևորագույն տարրերից մեկը դարձավ ՆԱՏՕ–ի ընդլայնումը դեպի Արևելք:

Ընդհանուր առմամբ ԱՄՆ–ի հիմնական նպատակներն էին՝ պահպանել բացարձակ ռազմական գերակշռությունն աշխարհում, հետևողականորեն պահել տնտեսական բարգավաճման բարձր ցուցանիշները, իսկ արտերկրում ծավալել ազատ շուկայի և ժողովրդավարության սկզբունքները:

ՆԱՏՕ–ի նոր ռազմավարական հայեցակարգը

Ձևավորելով ՆԱՏՕ–ի հետ Ռուսաստանի փոխհարաբերությունների նոր ձևեր՝ ԱՄՆ–ը փորձում էր մեղմել Ռուսաստանի անհանգստությունն իր սահմաններին՝ Հյուսիսատլանտյան դաշինքի մոտենալու հետ կապված: Իր հերթին Ռուսաստանը ՆԱՏՕ–ի հետ համագործակցության ճանապարհով փորձում էր նպաստել այդ կառույցի կերպարանափոխությանը: Սակայն ՆԱՏՕ–ն գնաց այլ ճանապարհով: **1999 թ. ընդունվեց ՆԱՏՕ–ի նոր ռազմավարական հայեցակարգը,** որն արմատապես փոխեց այդ կազմակերպության նպատակներն ու խնդիրները: Ագրեսիայի դեպքում հավաքական պաշտպանության սկզբունքին զուգահեռ դրվում էր նաև ռազմավարական նոր նպատակ՝ «ընդլայնված Եվրաատլանտյան ողջ տարածաշրջանում անվտանգության ու կայունության ապահովումը»:

Նոր հայեցակարգի համաձայն՝ ՆԱՏՕ–ն իրեն իրավունք էր վերապահում ռազմական ուժ գործադրելու կազմակերպության անդամ երկրների տարածքից դուրս՝ առանց ՄԱԿ–ի Անվտանգության խորհրդի լիազորությունները ստանալու: Այսպիսով՝ տարածաշրջանային ռազմաքաղաքական դաշինքից ՆԱՏՕ–ն վերածվեց ԱՄՆ–ի ղեկավարությամբ գործող համաշխարհային նշանակության ուժային կառույցի:

ՆԱՏՕ–ն և հակամարտությունը Հարավսլավիայում

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում պատերազմական գործողություններ տեղի ունեցան Իրաքում և Աֆղանստանում: Սակայն հակամարտությունների առումով ՆԱՏՕ–ն գերազանցա-

պես հիշատակվում է նախկին Հարավսլավիայում իրագործված ռազմաքաղաքական միջամտության հետ կապված: Մասնավորապես, 1994 թ. ՆԱՏՕ-ի օդուժը ռմբահարեց Խորվաթիայի կազմում եղող և Սերբիային միանալ ձգտող Սերբական Կրայինայի Հանրապետությունը:

Միջամտության անհրաժեշտություն զգացվեց նաև Բոսնիա-Հերցեգովինայում բռնկված հակամարտության կապակցությամբ: Արդյունքում՝ **1995 թ. նոյեմբերին, Դեյթոնում** (ԱՄՆ) կայացավ Սերբիայի, Խորվաթիայի ու Բոսնիա և Հերցեգովինայի առաջնորդների հանդիպումը ԱՄՆ-ի, Ռուսաստանի և Եվրամիության ներկայացուցիչների մասնակցությամբ: Հստակեցվեցին Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության հաստատման վերաբերյալ ապագա պայմանագրի ընդհանուր սկզբունքները: Իսկ արդեն **1995 թ. դեկտեմբերին** Սերբիայի, Խորվաթիայի ու Բոսնիա և Հերցեգովինայի նախագահները **Փարիզում** ստորագրեցին վերջնական համաձայնագիրը:

1990-ական թթ. վերջերին սրվեց իրավիճակը Սերբիայի կազմում գտնվող **Կոսովոյի** տարածքում, որի բնակչության մեծամասնությունն ալբանացիներ էին: Կոսովոյի ալբանական բնակչությունը չէր ճանաչում Բելգրադի իշխանությունը և ստեղծել էր կառավարման սեփական մարմինները: Ստեղծվել էր նաև «Կոսովոյի ազատագրման բանակը», որը հարվածներ էր հասցնում կառավարական ուժերին: Կառավարական և ալբանական զորքերի միջև սկսվեցին ընդհարումներ, որոնք ուղեկցվում էին ալբանական բնակչության էթնիկական զտումներով: ՆԱՏՕ-ի անդամ երկրները Հարավսլավիայի նախագահ Միլոշևիչից պահանջում էին բանակցություններ սկսել Կոսովոյի ալբանացիների հետ:

Դեյթոնյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը Սերբիայի, Խորվաթիայի ու Բոսնիա և Հերցեգովինայի նախագահների կողմից, Փարիզ, 1995 թ. դեկտեմբեր

1999 թ. փետրվար-մարտ ամիսներին Ռամբույեում (Ֆրանսիա) նախկին Հարավսլավիայի խնդիրներով զբաղվող երկրների (ԱՄՆ, ԳԴՀ, Իտալիա, Մեծ Բրիտանիա, Ռուսաստան և Ֆրանսիա) ներկայացուցիչների մասնակցությամբ ընթացան Կոսովոյի հակամարտող կողմերի միջև բանակցություններ: Սերբական կողմը հրաժարվեց հաշտության պայմանագիրը ստորագրելուց, քանզի դեմ էր Կոսովո օտարերկրյա զորքեր մտցնելուն:

Ի պատասխան դրա՝ ՆԱՏՕ-ն 1999 թ. մարտի վերջին ռազմական գործողություններ սկսեց Հարավսլավիայի դեմ: Արդեն հունիսին Սերբիան

ՆԱՏՕ-ի ռմբակոծությունից ավերված Սերբիայի զինված ուժերի գլխավոր զորակայանի շենքը Բելգրադում, 1999 թ.

ՆԱՏՕ-ի հրամանատարության հետ կնքեց հրադադարի վերաբերյալ պայմանագիր: Կառավարական զորքերը դուրս էին բերվում Կոսովոյի տարածքից, իսկ փոխարենը Կոսովո էր մուտք գործում ՆԱՏՕ-ի զորախումբը: Թեև ՆԱՏՕ-ի գործողությունները չէին ստացել ՄԱԿ-ի լիազորությունները, դրանց արդյունքներն արժանացան ՄԱԿ-ի Անվտանգության խորհրդի հավանությանը: Իսկ Կոսովոն, օգտվելով ազգերի ինքնորոշման իրավունքից, ժամանակի ընթացքում հասավ իր նպատակին և ձեռք բերեց անկախություն:

Շուտով իրադրությունը սրվեց նաև **Մակեդոնիայում:** Երբ 1999 թ. Կոսովոյում սկսվեցին էթնիկական զտումները, դեպի Մակեդոնիա շարժվեց ալբանացի փախստականների ալիքը: Մակեդոնիայի բնակիչները, սակայն, մտավախություն ունեին, որ երկրի ալբանացի փոքրամասնությունը կվերածվի մեծամասնության: Երկրում սկսեցին սրվել հակաալբանական տրամադրությունները, իսկ Մակեդոնիայի ալբանաբնակ շրջանները հայտնվեցին ալբանացի զինյալների վերահսկողության տակ: Մակեդոնիայում քաղաքացիական պատերազմի և երկրի բաժանման վտանգ կար: Ալբանացիները պահանջում էին իրենց իրավունքների ընդլայնում, իսկ մակեդոնացիները՝ երկրի տարածքային ամբողջականության պահպանում: **2001 թ.** սկսվեցին ռազմական ընդհարումները: 2001 թ. օգոստոսի 12-ին Եվրամիության և ԱՄՆ-ի միջնորդական ջանքերի շնորհիվ Մակեդոնիայի կառավարության և ալբանական համայնքի ներկայացուցիչների միջև կնքվեց հաշտության համաձայնագիր: Ալբանական զինված ջոկատները զինաթափվեցին, և ՆԱՏՕ-ի խաղաղապահ ուժերը մակեդոնական ոստիկանության հետ մեկտեղ մուտք գործեցին ալբանաբնակ շրջաններ: Այսպիսով՝ ՆԱՏՕ-ի անմիջական ջանքերի շնորհիվ էականորեն փոխվեց աշխարհի քաղաքական քարտեզը:

ՆԱՏՕ-ի խաղաղապահ առաքելությունները

Հետսառըպատերազմյան ժամանակաշրջանում նոր իրողություն դարձան խաղաղապահ առաքելությունները: Միջազգային խաղաղապահ առաքելություններն իրագործվում են ՆԱՏՕ-ի և վերջինիս հետ համագործակցող այլ երկրների ուժերի կողմից: ՆԱՏՕ-ի հետ ար-

Այբանացի փախստականների 50-հազարանոց ճամբար Մակեդոնիայում

դյունավետ համագործակցություն է ծավալում նաև Հայաստանի Հանրապետությունը:

Հայաստանը սերտորեն համագործակցում է ՆԱՏՕ-ի հետ՝ «Գործընկերություն հանուն խաղաղության» ծրագրի շրջանակներում: Մեր երկիրը միաժամանակ ներգրավված է ՆԱՏՕ-ի շրջանակներում գործող «Եվրաատլանտյան համագործակցության խորհուրդ» կազմակերպությունում: Հայաստանը կարևորում է նաև «Անհատական գործողությունների ծրագրի» իրագործումը, որը նախատեսված է ՆԱՏՕ-ի հետ իրենց հարաբերությունները խորացնելու քաղաքական կամք ու կարողություններ ունեցող երկրների համար: Արդեն 2003 թ. համագործակցության շրջանակներում իրագործվող ՆԱՏՕ-ի զորավարժություններից մեկն անցկացվեց Հայաստանի տարածքում: Հայաստանի Հանրապետությունն ակտիվորեն մասնակցում է նաև ՄԱԿ-ի շրջանակներում ՆԱՏՕ-ի կողմից իրագործվող խաղաղապահ առաքելություններին: Հայ խաղաղապահներն այդ գործողություններն իրագործում են ՆԱՏՕ-ի անդամ երկրների (Հունաստան, Լեհաստան և ԳԴՀ) զորախմբերի կազմում:

2004 թ. սկսած՝ հայ զինվորները հունական բանակի զորախմբի կազմում խաղաղապահ առաքելություն են իրագործում Կոսովոյում:

2003 թ. իրաքյան պատերազմի ավարտից հետո հայ խաղաղապահների զորախումբ ուղարկվեց նաև այդ երկիր: Հայ խաղաղապահները գործում էին լեհական զորախմբի կազմում: Հայաստանը ներկայումս ներգրավված է Աֆղանստանում իրականացվող խաղաղապահ գործողություններում:

Արաբական գարունը

ԱՄՆ-ի և նրա դաշնակիցների ու Ռուսաստանի միջև շահերի լուրջ հակասություն կա նաև Մերձավոր և Միջին Արևելքում: Իրաքի կողմից 1990 թ. Քուվեյթի նվաճումը և դրան հաջորդած «Փոթորիկ անապատում» ռազմական գործողությունը,

Լեհական խաղաղապահ զորաջոկատի ճամբարը Աֆղանստանում

իսկ հետագայում նաև Իրաքի ռազմակալումը ԱՄՆ–ի և նրա դաշնակիցների կողմից նոր քաղաքական իրավիճակ ստեղծեցին Մերձավոր Արևելքում: Սակայն պատկերն ամբողջացրեց «Արաբական գարունը», որը փոխեց քաղաքական իրավիճակն ամբողջ աշխարհում:

2010 թ. դեկտեմբերին սկսվեց և հաջորդ տարի շարունակվեց հեղափոխությունների, ապստամբությունների և զանգվածային ելույթների համատարած ալիքը Հյուսիսային Աֆրիկայի և Մերձավոր Արևելքի երկրներում՝ Թունիս, Ալժիր, Հորդանան, Եմեն, Եգիպտոս, Մարոկկո, Լիբիա, Իրաք, Սիրիա և այլն: Մի քանիսից բացի՝ բոլոր պետություններում տապալվեցին հին՝ տասնամյակներով իշխող վարչակարգերը: Հենց 2010 – 2011 թթ. բուռն իրադարձություններն են պատմության մեջ մտել **Արաբական գարուն** անվամբ:

Նորվեգացի խաղաղապահ զինվորներն Աֆղանստանում

Արաբական երկրների մի մասում տեղի ունեցան արյունալի քաղաքացիական պատերազմներ. 2018 թ. դրությամբ դրանք շարունակվում էին Սիրիայում և Լիբիայում: Տարածաշրջանում իր ռազմավարական շահերն է առաջ մղում նաև Ռուսաստանը, որը մասնավորապես պաշտպանում է Սիրիայի նախագահ Հ. Ասադի իշխանությանը, իսկ ԱՄՆ–ը և նրա դաշնակիցները խնդիր են դրել փոխելու նախկին վարչակարգն այս երկրում:

Տեղի ունեցած դրական կարևոր փոփոխությունների կողքին երկրների մեծ մասում առաջացել են լրջագույն հիմնախնդիրներ: Տնտեսությունն անկում է ապրել, իսկ վնասները կազմում են մի քանի հարյուր մլրդ ԱՄՆ դոլար: Փախստականների մի քանի միլիոնանոց ալիքը ուղղվել է դեպի Եվրոպա և այլ տեղեր, միլիոնավոր մարդիկ կանգնած են հումանիտար աղետի առջև և այլն:

Այսպիսով՝ արաբական աշխարհը «հեղափոխական գարուն»–ից հետո դեռ չի հանդարտվել, իսկ ծագած հիմնախնդիրների լուծումը տասնամյակներ կարող է տևել:

Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպության ընդլայնումը

Հիմնադիր 12 անդամները

ԱՄՆ	Կանադա	Բելգիա	Իսլանդիա
Մեծ Բրիտանիա	Իտալիա	Լյուքսեմբուրգ	Նորվեգիա
Ֆրանսիա	Նիդերլանդներ	Դանիա	Պորտուգալիա

Ընդլայնման փուլերը

I. 1952 թ. ՆԱՏՕ-ին անդամակցեցին Հունաստանը և Թուրքիան: 1974-1980 թթ. Հունաստանը չէր մասնակցում Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպության ռազմական կառույցին՝ կազմակերպության մյուս անդամ երկրի՝ Թուրքիայի հետ հարաբերությունների սրման պատճառով:

II. 1955 թ. Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպությանն անդամակցեց Արևմտյան Գերմանիան (Գերմանիայի Դաշնային Հանրապետությունը): 1990 թ. ՆԱՏՕ-ին անդամակցեց միացյալ Գերմանիան:

III. 1982 թ.՝ Իսպանիայի անդամակցումը ՆԱՏՕ-ին: 2001 թ. Իսպանիայի Սոցիալիստական Աշխատավորական կուսակցության իշխանության գալուց հետո Իսպանիան դուրս եկավ ՆԱՏՕ-ի ռազմական կառույցներից՝ մնալով միայն Հյուսիսատլանտյան համաձայնագրի անդամ:

IV. 1999 թ. ՆԱՏՕ-ի անդամ դարձան Հունգարիան, Լեհաստանը և Չեխիան: Սա հետսառըպատերազմյան առաջին ընդլայնումն էր:

V. 2004 թ. Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպությանը անդամակցեցին Բուլղարիան, Լատվիան, Լիտվան, Ռումինիան, Սլովակիան, Սլովենիան, Էստոնիան:

VI. 2009 թ. Հյուսիսատլանտյան համաձայնագրի կազմակերպությանը անդամակցեցին Ալբանիան և Խորվաթիան:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ներկայացրեք նախկին սոցիալիստական երկրների հանդեպ ԱՄՆ–ի քաղաքականության հիմնական նպատակները: Բացատրեք «ժողովրդավարության ընդլայնում» հասկացությունը: Որո՞նք են այդ գաղափարի իրագործման արդյունքները:
2. Ինչո՞ւ է ՆԱՏՕ–ն ընդլայնվում դեպի Արևելք: Պարզաբանեք ՆԱՏՕ–ի որդեգրած նոր ռազմավարության էությունը: Այս տեսանկյունից ո՞րն է Ռուսաստանի դիրքորոշումը:
3. Վերհանեք ՆԱՏՕ–ի դերակատարությունը բալկանյան նոր ճգնաժամի լուծման գործում: Ներկայացրեք այդ ճգնաժամի քաղաքական, սոցիալական, էթնիկական և տնտեսական հետևանքները:
4. Ո՞ր երկրներում է խաղաղապահ առաքելություններ իրականացնում ՆԱՏՕ–ն: Ի՞նչ մասնակցություն ունի Հայաստանի Հանրապետությունը խաղաղապահ գործողություններին:
5. Ի՞նչ է **Արաբական գարունը**: Ներկայացրեք արաբական աշխարհի վիճակը 2011 թ. հետո՝ օգտվելով նաև լրացուցիչ նյութերից և համացանցից:

§ 4. ԱԶԳԵՐԻ ԻՆՔՆՈՐՈՇՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆ ՈՒ ՉՃԱՆԱՉՎԱԾ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Ազգերի ինքնորոշման գաղափարի ծագումն ու զարգացումը

Ազգերի ինքնորոշման գաղափարն իր ակունքներով գնում է դեպի Լուսավորականության դարաշրջան: Իսկ **ազգերի ինքնորոշում** հասկացությունն առաջին անգամ հնչել է **1878 թ. Բեռլինի կոնգրեսում**: Մոտավորապես այդ նույն ժամանակ էլ շրջանառության մեջ մտավ **ազգերի ինքնորոշման իրավունք** հասկացությունը: Գաղափարը շուտով իր հաստատուն տեղը գրավեց բազմաթիվ ազատական ու սոցիալիստական շարժումների ծրագրային դրույթներում:

Առաջին աշխարհամարտի շրջանում պատերազմող երկրներն իրենց պարտքն էին համարում հակառակորդի տարածքում ապրող «ազգերի ինքնորոշման» կարգախոսի հռչակումը: Հատկապես հաճախ էր բարձրացվում լեհական հարցը: Դեռ 1914 թ. Ավստրո–Հունգարիայի ներկայացուցիչները լեհ ժողովրդին առաջարկում էին ինքնիշխանություն, սակայն սեփական կայսրության տարածքում: Ցարի հորեղբայր մեծ իշխան Նիկոլայը առաջարկում էր լեհական ինքնորոշում Ռուսաստանի սահմաններում:

1878 թ. Բեռլինի վեհաժողովում առաջին անգամ հնչեց «ազգերի ինքնորոշում» հասկացությունը: Ազգերի ինքնորոշման իրավունքը արդի միջազգային իրավունքի կարևորագույն նորմերից է:

Անտանտի և ԱՄՆ-ի կողմից ազգերի ինքնորոշման սկզբունքն առաջին անգամ առաջ քաշվեց որպես հետպատերազմյան կարգավորման նորմ: Մեծ Բրիտանիայի վարչապետ Լլոյդ Ջորջի հանձնարարությամբ արտաքին գործերի նախարարությունը հետպատերազմյան կարգավորման առաջարկներ նախապատրաստեց: Դրանք նախատեսում էին հիշյալ սկզբունքի կիրառումը գերմանական գաղութների նկատմամբ:

Ազգերի ինքնորոշման գաղափարի հետևողական պաշտպանը ԱՄՆ-ի նախագահ **Վ.ուդրո Վիլսոնն** էր: Նա ձևակերպեց «արտաքին ինքնորոշման» սկզբունքը: Համաձայն դրա՝ ցանկացած ժողովուրդ կարող էր ընտրել ինքնիշխանության այն ձևը, որը ցանկանում էր, ընդհուպ մինչև անկախ պետականության կազմավորումը: Նրա համոզմամբ ինքնորոշումը անհրաժեշտ է «կապել» ազգային սկզբունքի հետ: Միաժամանակ նա առաջ քաշեց պետության տարածքային ամբողջականության և ներքին գործերին չմիջամտելու սկզբունքը: Նա նշում էր, որ ազգերի ինքնորոշման սկզբունքն իրագործելիս պետք է հաշվի առնել նաև այն պետության շահերը, որի կազմում է տվյալ ազգը կամ ժողովուրդը: Հետպատերազմյան կարգավորման իր ծրագրով, որը հայտնի է որպես «Վիլսոնի 14 կետեր», նա նշում էր, որ ինքնորոշման իրավունք ունեցող ժողովուրդն է իշխանության հիմնական սուբյեկտը:

Ազգերի ինքնորոշման իրավունքը Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո «ազգերի ինքնորոշման» գաղափարն արժանացավ առանձնահատուկ ուշադրության: ՄԱԿ–ի կանոնադրության համապատասխան կետի քննարկման ժամանակ նախատեսվում էր ներառել նաև ժողովուրդների ինքնորոշման իրավունքի մասին կետը: Սակայն մասնագետների կարծիքով «իրավունքի» ամրագրումը կարող էր հանգեցնել արտաքին ուժերի միջամտության: Արդյունքում ՄԱԿ–ի կանոնադրության մեջ խոսվում էր ժողովուրդների իրավահավասարության և ինքնորոշման սկզբունքի, այլ ոչ թե իրավունքի մասին:

Հետագայում **ինքնորոշման իրավունքն** իր արտացոլումը գտավ միջազգային մի շարք փաստաթղթերում: Մասնավորապես, **1952 թ. դեկտեմբերի 16–ին** ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 7–րդ նստաշրջանում ընդունվեց **637–րդ բանաձևը** («Ժողովուրդների և ազգերի ինքնորոշման իրավունքի» վերաբերյալ): Բանաձևում ընդգծվում էր, որ ազգերի ինքնորոշման իրավունքը մարդու իրավունքներից լիարժեքորեն օգտվելու նախապայմանն է, և ՄԱԿ–ի անդամ յուրաքանչյուր երկիր պետք է հարգի ու պաշտպանի այդ իրավունքը: Այսպիսով՝ ինքնորոշման գաղափարը «սկզբունքից» բարձրացվեց «իրավունքի» մակարդակի:

Ինքնորոշման իրավունքն ամրագրված է նաև ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 15–րդ նստաշրջանում (1960 թ.) ընդունված **1514–րդ բանաձևում:** Այստեղ նշվում է. «Բոլոր ժողովուրդներն ունեն ինքնորոշման իրավունք, և այդ իրավունքից ելնելով՝ նրանք ազատորեն հաստատում են իրենց քաղաքական կարգավիճակն ու իրագործում իրենց տնտեսական, սոցիալական և մշակութային զարգացումը»: Սակայն նույն բանաձևի 6–րդ հոդվածում խոսվում էր տարածքային ամբողջականության պահպանման անհրաժեշտության մասին: Այս հակասությունը փորձեցին կարգավորել 1970 թ. ՄԱԿ–ի Գլխավոր ասամբլեայի 2625–րդ բանաձևով: Այստեղ հստակեցվում են ինքնորոշման հնարավոր տարբերակները՝ ա) ինքնիշխան և անկախ պետության ստեղծում, բ) ազատ միացում անկախ պետությանը կամ միավորում վերջինիս հետ, գ) ցանկացած այլ քաղաքական կարգավիճակի հաստատում, որ որոշվել է ժողովրդի կողմից: Նշվում էր, որ «արտաքին ինքնորոշման» (անջատում և անկախություն) իրավունք ունեն գաղութային և օտարերկրյա կախվածության մեջ եղող ժողովուրդները: Դրան զուգահեռ ընդունվում էր, որ անկախ պետության բնակչության որոշակի հատվածը նույնպես կարող է օգտվել «արտաքին ինքնորոշման»

իրավունքից, եթե «ներքին ինքնորոշման» իրագործումն անհնար է, և այդ բնակչությունը չի կարող հավասարապես մասնակցել երկրի կառավարմանը:

Ազգերի ինքնորոշման իրավունքը ձևակերպված է նաև **1975 թ.** Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության ընդունած **Հելսինկիի եզրափակիչ** ակտի 10 հիմնական սկզբունքներում: Դրանց մեջ են մտնում նաև տարածքների անխախտելիության (3–րդ) և պետությունների տարածքային ամբողջականության (4–րդ) սկզբունքները: Ընդ որում՝ հատուկ նշվում է, որ բոլոր 10 սկզբունքները առաջնահերթ նշանակություն ունեն, հավասարազոր են և պետք է կիրառվեն՝ հաշվի առնելով մյուսները: Հետևաբար 3–րդ սկզբունքը առավելություն չունի 8–րդ սկզբունքի նկատմամբ: Սակայն ոչ մի հակասություն այս կետերում նույնպես չկա: Եթե խնդիրը վերաբերում է պետությունների միջև հարաբերություններին, ապա տարածքների անխախտելիության և պետությունների տարածքային ամբողջականության սկզբունքներն ունեն առաջնահերթ նշանակություն: Իսկ ազգերի ինքնորոշման գաղափարն առաջնահերթ նշանակություն ունի, երբ հակամարտության կողմերից մեկը պետությունն է (օրինակ՝ Ադրբեջանը), իսկ մյուսը՝ ինքնորոշման իրավունքն իրագործող ժողովուրդը (օրինակ՝ Լեռնային Ղարաբաղի հայ բնակչությունը):

Այսպիսով՝ ազգերի ինքնորոշման իրավունքն ու հիշյալ գաղափարը լայն տարածում են գտել ժամանակակից աշխարհում:

Չճանաչված կամ ինքնահռչակ պետություններ

Չճանաչված են այն պետությունները, որոնք հռչակել են իրենց անկախությունը, սակայն չեն ճանաչվել միջազգային հանրության կողմից, ՄԱԿ–ի ու միջազգային այլ հեղինակավոր կազմակերպությունների անդամ չեն: Չճանաչված երկրները բաժանվում են երկու խմբի՝

ա) չճանաչված կամ մասնակիորեն ճանաչված երկրներ, որոնք ունեն փաստացի վերահսկողություն իրենց սեփական տարածքի նկատմամբ,

բ) մասնակիորեն ճանաչված երկրներ, որ օտարերկրյա վերահսկողության ներքո են:

Առաջին խմբի երկրներից են Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը, Աբխազիան, Հարավային Օսիան, Մերձդնեստրյան Հանրապետությունը, Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը, Թայվանը և այլն:

Երկրորդ խմբի երկրների շարքին են դասվում **Պաղեստինի ինքնավարությունն ու Արևմտյան Սահարան:**

Իր անկախությունը հռչակած **Արցախի (Լեռնային Ղարաբաղի) Հանրապետությունը** հետխորհրդային չճանաչված երկրների շարքում դիտվում է իբրև ամենակենսունակ պետությունը: Նա ունի հայկական միատարր բնակչություն, տարածաշրջանում ամենամարտունակ բանակը: Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունն իր անկախությունը հռչակել է միջազգային բոլոր նորմերին համապատասխան:

1931 թ. **Աբխազիան** ընդգրկվել էր Վրաստանի կազմում, իսկ Վրաստանից իր անկախությունը հռչակեց 1990 թ.: Վրաստանը փորձեց վերականգնել իր վերահսկողությունը Աբխազիայի նկատմամբ, սակայն ձախողվեց: Ռուսաստանը և մի քանի այլ երկրներ ճանաչել են Աբխազիայի անկախությունը: ՌԴ-ն նաև դիվանագիտական հարաբերություններ է հաստատել վերջինիս հետ: Սակայն ԵՄ-ի, ԱՄՆ-ի և մյուս պետությունների կողմից Աբխազիան շարունակում է դիտվել որպես Վրաստանի անբաժանելի մասը:

Հարավային Օսիան Վրաստանի կազմում ընդգրկվել է 1918–1920 թթ.: Իր անկախությունը Հարավային Օսիան հռչակեց 1991 թ., որին հետևեցին վրաց–օսական ընդհարումները: 2008 թ. ռուս–վրացական պատերազմի արդյունքում Ռուսաստանի Դաշնությունը ճանաչեց

Ճանապարհային ցուցանակ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության սահմանին

Հարավային Օսիայի անկախությունը և դիվանագիտական հարաբերություններ հաստատեց վերջինիս հետ: Սակայն մյուս պետությունները շարունակում են այն դիտել որպես Վրաստանի մասը:

Իրավական տեսանկյունից Մոլդովայի մասը կազմող և Դնեստր գետից արևելք գտնվող **Մերձդնեստրյան Հանրապետությունը** նույնպես հռչակել է իր անկախությունը: Այն փաստացի գործող անկախ պետություն է, որը չի ճանաչվել որևէ այլ պետության կողմից: Ի տարբերություն Մոլդովայի, որն ունի ռումինական մեծամասնություն՝ Մերձդնեստրյան Հանրապետությունում մեծամասնություն է կազմում սլավոնական բնակչությունը:

Չճանաչված պետություններից ամենաերկարատև պատմությունն ունեն Թայվանը և բացառապես Թուրքիայի կողմից ճանաչված Հյուսիսային Կիպրոսի Թուրքական Հանրապետությունը:

Նախկինում չճանաչված երկրների շարքում հատկապես մեծ նշանակություն ձեռք բերեց գերազանցապես ալբանական բնակչություն ունեցող Կոսովոյի երկրամասը: 2008 թ. ԱՄՆ-ի և ՆԱՏՕ-ի անդամ որոշ երկրների նախաձեռնությամբ ճանաչվեց Կոսովոյի անկախությունը: Այս նախադեպն օգտագործելով է, որ Ռուսաստանի Դաշնությունը ռուս-վրացական պատերազմից հետո ճանաչեց Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախությունը:

Չճանաչված պետությունների իրողությունը վերստին առաջադրեց երկակի չափանիշների կիրառման արատավոր պրակտիկան, երբ որոշ ժողովուրդների թույլատրում են իրագործել ինքնորոշման իրավունքը, ճանաչում են նրանց անկախությունը, իսկ մյուսներին՝ մերժում:

Այնուամենայնիվ, գնալով ավելի մեծ թվով չճանաչված պետություններ են օգտվում այդ իրավունքից՝ ճանաչվելով առնվազն որոշ մեծ տերությունների կողմից:

ՀԱՏՎԱԾ ՓԱՍՏԱԹՂԹԻՑ

Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի հռչակագիրը Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման մասին (ընդունված 1991 թ. օգոստոսի 30-ին Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհրդի արտակարգ նստաշրջանում)

Ադրբեջանի Հանրապետության Գերագույն խորհուրդը, առաջնորդվելով Ադրբեջանի ժողովրդի բարձրագույն պետական շահերով ու արտահայտելով նրա կամքը, ընդգծելով, որ 1918-1920 թթ. Ադրբեջանի Հանրապետությունը գործել է իբրև անկախ, միջազգային հանրության կողմից ճանաչված պետություն, (...), հուսալով հասնել Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության ճանաչմանը միջազգային հանրության ու Միավորված ազգերի կազմակերպության անդամ հանդիսացող պետությունների կողմից, համաձայն Միավորված ազգերի կազմակերպության կանոնադրությունում ու միջազգային իրավական այլ պակտերում ու կոնվենցիաներում ամրագրված սկզբունքների, հռչակում է Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնումը:

***

Հիշյալ քայլով Ադրբեջանի Հանրապետությունն, ըստ էության, հրաժարվում էր Ադրբեջանի Խորհրդային Սոցիալիստական Հանրապետության իրավահաջորդը լինելու հեռանկարից՝ իրեն հռչակելով 1918-1920 թթ. Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետության իրավահաջորդը: Այս քայլը, որն ամրագրվեց նաև 1991 թ. հոկտեմբերի 18-ին Ադրբեջանի Հանրապետության պետական անկախության վերականգնման վերաբերյալ սահմանադրական

ակտով, էականորեն թուլացնում էր Ադրբեջանի Հանրապետության իրավական դիրքերը: Խնդիրն այն է, որ ***Ադրբեջանի Դեմոկրատական Հանրապետությունը երբեք չէր ներառել Լեռնային Ղարաբաղն ու Նախիջևանը:*** ԼՂՀ-ի իրավական դիրքերն էականորեն ամրապնդում էին նաև ԽՍՀՄ կազմից միութենական հանրապետության դուրս գալուն առնչվող հարցերի լուծման կարգին վերաբերող ԽՍՀՄ օրենքի (ընդունված 1990 թ. ապրիլի 3-ին) 3-րդ և 6-րդ հոդվածները:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձևավորման և զարգացման ինչ ճանապարհ է անցել «ազգերի ինքնորոշման» գաղափարը: Բացատրեք Վ. Վիլսոնի «ներքին ինքնորոշման» և «արտաքին ինքնորոշման» գաղափարները: Երբ Վ. Վիլսոնը հանդես եկավ հետպատերազմյան կարգավորման իր ծրագրով, և ինչ անունով է այն հայտնի:
2. Երկրորդ աշխարհամարտից հետո երբ և որ փաստաթղթերում արտացոլվեց ազգերի ինքնորոշման իրավունքը: Երբ են դիմում այս իրավունքին: Ձեր կարծիքով ինչու՞ է անհրաժեշտ այս իրավունքը:
3. Որո՞նք են չճանաչված կամ ինքնահռչակ պետությունները: Քանի՞ խմբի են բաժանվում այդ երկրները: Թվարկեք օրինակներ: Հակիրճ ներկայացրեք չճանաչված երկրների պատմությունը:
4. Ինչ առանձնահատկություններ ունեն հետխորհրդային չճանաչված երկրները: Ձեր կարծիքով ԼՂՀ-ի ճանաչման հարցը ինչպե՞ս կլուծվի:

§ 5. ԱՇԽԱՐՀԻ ԺՈՂՈՎՐԴԱՎԱՐԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Միասնական միջազգային օրենսդրական դաշտի ձևավորման գործընթացը

XX դ. երկրորդ կեսին բնորոշ էին աշխարհի առաջատար մի շարք երկրների սահմանադրական և պետական համակարգի փոփոխությունները: Սահմանադրական իրավունքի զարգացման ընդհանուր ուղղությունների վրա էական ազդեցություն ունեցան ժողովրդավարացման գործընթացները: 1946–1947 թթ. նոր սահմանադրություններ ընդունվեցին Իտալիայում, Ֆրանսիայում և Ճապոնիայում, իսկ 1949 թ.՝ ԳԴՀ-ում: «Կարմիր մեխակների» հեղափոխությունից հետո նոր սահմանադրություն ընդունվեց նաև Պորտուգալիայում: Իսպանիայում դիկտատոր Ֆրանկոյի մահից երեք տարի անց՝ 1978 թ., նույնպես ընդունվեց նոր սահմանադրություն: Հունաստանում զինվորական խունտայի տապալումից հետո հաստատվեց ժողովրդավարական վարչակարգ, և ընդունվեց նոր սահմանադրություն:

Հետպատերազմյան շրջանի սահմանադրություններում տեղ գտան ժողովրդավարական պետությունների համար ավանդական դարձած քաղաքական ազատություններին վերաբերող դրույթները (խոսքի, միությունների, կրոնի ազատության, կանանց իրավահավասարության, անձի իրավունքների մասին և այլն): Ամրագրվեցին նաև նոր նորմեր ու իրավունքներ՝ աշխատանքի, հանգստի, գործադուլների, սոցիալական ապահովության և կրթության:

Նոր դրույթներ ձևակերպվեցին նաև պատերազմին ու խաղաղությանն առնչվող հարցերի վերաբերյալ: Ֆրանսիայի, ԳԴՀ-ի, Իտալիայի, Ճապոնիայի և այլ երկրների սահմանադրություններում պատերազմը դատապարտվում է որպես միջազգային վեճերի կարգավորման միջոց: Իր սահմանադրությունում ձևակերպված դրույթի համաձայն՝ Ճապոնիան ընդհանրապես հրաժարվել է պատերազմից՝ որպես ազգային քաղաքականության միջոցից:

Արևմտյան Եվրոպայում տեղ գտած միասնացման գործընթացների հետ կապված՝ հետպատերազմյան տարիներին առաջացան պետությունների փոխներգործության նոր ձևեր: Ստեղծվեցին վերազգային հաստատություններ՝ ի դեմս խորհրդատվական և իշխանական ասամբլեաների ու խորհրդարանների:

Այդ շարքում ամենավաղ ստեղծված մարմիններից է Եվրախորհուրդը (Եվրոպայի խորհուրդ), որ հիմնվել է 1949 թ.: Այն միջկառավարական խորհրդատվական-խորհրդակցական մարմին է, որի անդամ են 47 եվրոպական երկրներ:

Եվրոպայի խորհրդի շենքը Սթրասբուրգում

Նախարարների կոմիտեն Եվրոպայի խորհրդի որոշում կայացնող գլխավոր մարմինն է: Յուրաքանչյուր անդամ պետություն Կոմիտեում ներկայացված է արտաքին գործերի նախարարով կամ իր կառավարության մշտական ներկայացուցչով (նախարարների պատվիրակներով):

Եվրոպայի խորհրդի կազմում է գործում նաև **Խորհրդարանական վեհաժողովը** (ասամբլեան), որում ներկայացված են անդամ երկրների ազգային խորհրդարանների հիմնական քաղաքական հոսանքները ներկայացնող պատգամավորներն ու մարդու իրավունքների հանձնաժողովը: Եվրոպայի խորհրդի նստավայրը Ստրասբուրգ քաղաքում (Ֆրանսիա) է:

Եվրոպական դրոշը Եվրոպայի խորհրդի կողմից ընդունվել է որպես խորհրդանիշ 1955 թ.: Նրա վրա պատկերված են շրջան կազմող 12 ոսկեգույն աստղեր՝ կապույտ ֆոնի վրա: Աստղերի թիվն անփոփոխ է. 12 թիվը համարվում է կատարելության խորհրդանիշ: Նույն դրոշն ընդունվել է Եվրոպական համայնքի (այժմ՝ Եվրոպական միության) կողմից 1986 թ.: Որպես Եվրոպական օրհներգ՝ 1972 թ. ընդունվել է Բեթհովենի 9-րդ սիմֆոնիայի «Ձոն ուրախության» նախերգանքը՝ Հերբերտ ֆոն Կարայանի մշակմամբ: Թեև այս խորհրդանիշներն ընդհանուր են, Եվրոպական միությունը և Եվրոպայի խորհուրդը գործում են որպես տարբեր կազմակերպություններ:

Հայաստանի Հանրապետությունը Եվրոպայի խորհրդի անդամ է 2001 թ. հունվարի 25-ից: Իսկ Եվրոպական միության հետ մեր երկիրն ունի «Գործընկերության և համագործակցության վերաբերյալ պայմանագիր» (կնքվել է 1996 թ., ուժի մեջ է մտել 1999 թ.):

2004 թվականից սկսած, «Եվրոպական հարևանության քաղաքականության» մասը կազմելով, մեր երկիրը 2005 թ. ԵՄ-ի հետ

հաստատել է համապատասխան գործողությունների ծրագիր: Եվրոպական հարևանության քաղաքականությունը Եվրոպական միության արտաքին քաղաքականության ձևերից է, որի միջոցով այն հարաբերություններ է հաստատում ԵՄ–ից դեպի արևելք և հարավ ընկած երկրների հետ: Այս խմբի մեջ մտնում են ինչպես ապագայում Եվրոպական միությանն անդամակցելու նպատակ հետապնդող երկրները, այնպես էլ նրանք, որոնք ձգտում են միասնացվելու Եվրոպական միության տնտեսական համակարգում:

Եվրոպական հարևանության քաղաքականության շրջանակներում հանդես եկող երկրներին ԵՄ–ն ցուցաբերում է տնտեսական և ֆինանսական աջակցություն՝ պայմանով, որ հիշյալ երկրները հետևեն եվրոպական չափանիշներին ու հետևողականորեն իրագործեն քաղաքական, տնտեսական, իրավական և կառուցվածքային բարեփոխումներ՝ կատարելագործելով իրենց կառավարման համակարգը:

Եվրոպական պետություններում նորմերի ստեղծման գործընթացների վրա էական ազդեցություն էին թողնում նաև նոր տիպի միջպետական կազմակերպությունների խորհրդատվական, ոչ պայմանագրային դրույթները: Օրինակ՝ **1975 թ. Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցությունը (ԵԱՀԽ)** ընդունեց եզրափակիչ ակտ, որը սահմանում էր նորմերի և էթիկական սկզբունքների լայն շրջանակ: Այն պետք է գործողության ուղեցույց լիներ պետությունների միջև փոխհարաբերությունների համար: Այդ փաստաթուղթը ստորագրեցին 33 եվրոպական պետություններ, ինչպես նաև ԱՄՆ–ը և Կանադան: Խորհրդակցությունը դարձավ մշտական մարմին և **1991 թ.** վերանվանվեց **Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)**:

Հետպատերազմյան տասնամյակների ընթացքում պետության իրավունքի զարգացման գործում կարևորագույն նշանակություն ձեռք բերեց միջազգային իրավունքը: Այդ շարքում հատկապես կարևորվում են մարդու իրավունքների վերաբերյալ

ԵԱՀԿ նիստ Վիեննայում, 2005 թ.

ընդունված միջազգային իրավական ակտերը: Եթե պետությունը ստորագրում է մի այնպիսի փաստաթուղթ, ինչպիսին է, օրինակ՝ ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված **Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը (1948 թ.),** ապա այն վերազգային իրավական փաստաթղթի ուժ է ստանում:

Այսպիսով՝ հասարակության քաղաքական կառուցվածքի և պետական-սահմանադրական համակարգի զարգացումը, որ տեղ գտավ արևմտաեվրոպական երկրներում, ԱՄՆ-ում, Կանադայում և այլ երկրներում հետպատերազմյան տասնամյակների ընթացքում, արտացոլում է հասարակական կյանքի ժողովրդավարացման ու առողջացման ընդհանուր միտումը:

Աշխարհի քաղաքական զարգացման առանձնահատկությունները

Ժամանակակից աշխարհում որոշիչ դեր ունեն հասարակական զարգացման երկու հիմնական՝ **ազատական-ժողովրդավարական** և **ամբողջատիրական ու տիրազորական տարաձևերը:** Սակայն XX դարի երկրորդ կեսին պատմական զարգացման ուղղվածությունը փոխվեց: Եթե 1920-1930-ական թթ. գերիշխում էին տիրազորական և ամբողջատիրական միտումները, և միանգամայն իրական էր ժողովրդավարության գոյությանն ուղղված սպառնալիքը, ապա 1950-1990-ական թթ. բնորոշ էր ճիշտ հակադիր գործընթացը:

ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի նիստերի դահլիճը

Բնական–պատմական զարգացման ուղղվածությունն արտացոլում է աշխարհում ժողովրդավարացմանը միտված շարժման գերիշխումը: Ազատական–ժողովրդավարական վարչակարգերի թիվը, հետպատերազմյան տասնամյակներից սկսած, հետևողականորեն աճում է, իսկ տիրազորական ու ամբողջատիրական վարչակարգերինը՝ նվազում:

Երկրորդ աշխարհամարտից հետո Լատինական Ամերիկայի մի շարք երկրներում, Չինաստանում, Հարավարևելյան Ասիայի ու Աֆրիկայի մի շարք երկրներում տիրազորական մեթոդների ժամանակավոր հաստատման ու պետության դերի մեծացման անհրաժեշտություն զգացվեց: Սրանք այն տարածաշրջաններն էին, որտեղ հետամնաց հասարակությունը արդիականացման էր նախապատրաստվում, և իրագործվում էին բարեփոխումներ: Կառավարման տիրազորական մեթոդների հաստատմանն էր նպաստում նաև ավանդական հասարակության ժառանգությունը:

«Սոցիալական բարեկեցության» քաղաքականության շնորհիվ Արևմուտքի երկրներն իրենց երաշխավորեցին ամբողջատիրության կրկնության սպառնալիքից: Արևմտաեվրոպական մի շարք երկրների համար 1980–ական թվականներին բնորոշ դարձած պահպանողական քաղաքական ուժերի ակտիվացմանը 1990–ական թվականներին փոխարինելու եկավ դեպի ձախ տեղաշարժը:

Մեծ Բրիտանիայում, Իտալիայում, Ֆրանսիայում, Կանադայում, ԱՄՆ–ում և այլ երկրներում 1990–ական թվականների երկրորդ կեսի ընթացքում անցկացվեցին խորհրդարա-

Մարդու իրավունքների պաշտպանության Եվրոպական դատարանի շենքը Ստրասբուրգում

նական և նախագահական ընտրություններ, որտեղ հաղթանակ էին տանում ազատական կամ ձախ կուսակցությունները: Պահպանողականները լուրջ պարտություններ էին կրում: Դա պայմանավորված էր նաև տնտեսության վերակառուցման և սոցիալական քաղաքականության վերանայման ուղղությամբ պահպանողական կուսակցությունների կողմից իրագործված ոչ ժողովրդական միջոցառումներով: 1980-ական թթ. իրագործված հիշյալ միջոցառումները թեև բխում էին տնտեսական և կառուցվածքային բարեփոխումների անհրաժեշտությունից, այնուամենայնիվ, էականորեն վատացրին քաղաքացիների կենսամակարդակն ու նյութական ապահովվածության պայմանները՝ լուրջ դժգոհություն առաջացնելով բնակչության շրջանում:

Այսպիսով՝ XXI դարում վերստեղծվում է աշխարհի քաղաքակրթական միասնականությունը բազմազանության մեջ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. XX դարի երկրորդ կեսին սահմանադրական և պետական կարգի ինչ փոփոխություններ կատարվեցին և որ երկրներում: Ինչ դրույթներ տեղ գտան նրանց սահմանադրություններում:

2. Երբ է ստեղծվել Եվրոպայի խորհուրդը, քանի՞ անդամ ունի, ինչ մարմին է գործում նրա կազմում: ԵԱՀԽ-ն երբ ընդունեց եզրափակիչ ակտը. ինչ էր այն սահմանում, և որ երկրները ստորագրեցին այդ փաստաթուղթը: Ո՞ր թվականից է գործում ԵԱՀԿ-ն: Մարդու իրավունքների վերաբերյալ երբ և ինչ կարևոր փաստաթուղթ է ընդունել ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեան:

3. Ժամանակակից աշխարհում հասարակական զարգացման որ տարբերն են գերիշխում: Երբ և ինչպես փոխվեց պատմական զարգացման ուղղվածությունը:

4. Երկրորդ աշխարհամարտից հետո որտեղ հաստատվեցին կառավարման տիրազորական մեթոդներ. ինչո՞վ էր դա պայմանավորված: 1990-ական թվականներին որ երկրների խորհրդարանական կամ նախագահական ընտրություններում հաղթեցին ազատական կամ ձախ կուսակցություններն ու ձախ ուժերի միավորումները: Ինչո՞ւ պահպանողականները լուրջ պարտություններ կրեցին:

ԳԼՈՒԽ 3 ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 1. ՄԱՐԴԿՈՒԹՅԱՆ ԱՌՋԵՎ ԾԱՌԱՑԱԾ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Գլոբալ հիմնախնդիրները

XXI դարում գոյություն ունեն մի շարք խնդիրներ, որոնք ընդհանուր են ողջ մարդկության համար և վերաբերում են մարդու կյանքի բնականոն ընթացքի ապահովմանը: Այդ խնդիրներից կարևորներն են մեր մոլորակի բնակչության ժողովրդագրական իրավիճակի կտրուկ փոփոխությունը, շրջակա միջավայրի աղտոտումը, միջազգային ահաբեկչության, թրաֆիքինգի, թմրամոլության և կիբերհանցագործության լայն տարածումը: Մեր օրերում դրանց ավելացավ նաև տարբեր պատճառներով առաջացած միգրացիոն ճգնաժամը կամ այսպես կոչված՝ փախստականների ալիքը: Այդպիսի խնդիրներն անվանում են գլոբալ հիմնախնդիրներ: Դրանց լուծումը հնարավոր է միայն բոլոր երկրների (ինչպես զարգացած և հարուստ, այնպես էլ թույլ զարգացած և աղքատ) համատեղ և նպատակասլաց ջանքերի շնորհիվ:

Ժողովրդագրական իրավիճակի փոփոխությունները

Վերջին հարյուրամյակի ընթացքում մեր մոլորակի Ժողովրդագրական իրավիճակը զգալի փոփոխությունների է ենթարկվել: Աշխարհի երկրներում միջին հաշվով 10 անգամ ավելացել է քաղաքային բնակչությունը: Երկու անգամ ավելացել է մարդկանց կյանքի միջին տևողությունը՝ զարգացած երկրներում անցնելով 80 տարուց: Ծնելիության ոլորտում առաջացան երկու միտումներ. զարգացած երկրներում այն արձանագրում է հարաճուն անկում, իսկ զարգացող երկրներում, ընդհակառակը, ավելացող աճ: Դա հանգեցնում է աշխարհի երկրների բնակչության կազմում զգալի փոփոխությունների:

Զարգացած երկրներում բնակչությունը ընդհանուր առմամբ «ծերանում է», այսինքն՝ նրա կազմում ավելանում է մեծահասակների թիվը, իսկ թույլ զարգացած երկրներում կտրուկ ավելանում է երիտասարդների թիվը: Քանի որ աշխարհի բնակչության բացարձակ մեծամասնությունը բնակվում է Աֆրիկայի, Ասիայի, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրներում, ապա տեղի է ունենում մոլորակի ընդհանուր բնակչության արագացող աճ: Այն հասնում է միջինը օրական 250 հազարի:

Վերը նշված ժողովրդագրական փոփոխությունները հանգեցնում են միգրացիոն հոսքերի ուղղվածության փոփոխմանը: Եթե պատմու-

թյան նախորդ շրջաններում նրանք ուղղվում էին զարգացած երկրներից դեպի գլխավորապես ամայի կամ նոսր բնակեցված տարածաշրջանները, ապա մեր օրերում միգրացիայի վերջնակետը առավելապես Արևմուտքի զարգացած երկրներն են:

Աֆրիկայի, Ասիայի, Հարավային ու Կենտրոնական Ամերիկայի թույլ զարգացած երկրների աշխատունակ բնակչության մեծ զանգվածներ օրինական կամ անօրինական ճանապարհով բնակություն են հաստատում Եվրոպայի և Հյուսիսային Ամերիկայի երկրներում: Մոտավոր հաշվարկներով ներկայումս միայն Արևմտյան Եվրոպայի երկրներում բնակվում են շուրջ 30 միլիոն օրինական ներգաղթյալներ:

Ներգաղթողների մի մասին հաջողվում է միասնացվել արևմտյան քաղաքակրթական համակարգին, սակայն մեծ մասին դա չի հաջողվում: Այսպիսով՝ զարգացած երկրներում առաջացել է սոցիալական լարվածության մի նոր աղբյուր, որը, ինչպես ցույց տվեցին վերջին տարիների դեպքերը Ֆրանսիայում, Գերմանիայում, Բելգիայում և այլուր, գնալով ստանում է ավելի վտանգավոր բնույթ:

Շրջակա միջավայրի պաշտպանության խնդիրը

XXI դարի սկզբներին մարդկային քաղաքակրթությունը միաժամանակ բախվեց մեկ այլ լուրջ խնդրի՝ շատ արագ և անվերահսկելի արդյունաբերական զարգացման հետևանքով շրջակա միջավայրի աղտոտմանը, ոչնչացմանը և անվերադարձ կորստին: Այն գնալով ավելի լայն բնույթ է ընդունում և հանգեցնում է մոլորակի կլիմայի փոփոխմանը՝ սպառնալով այդպիսով մարդու՝ որպես կենդանի էակի բուն գոյությանը: Այսպես, օրինակ՝ ի հայտ եկած «ջերմոցային էֆեկտի» պատճառով արձանագրվում է Երկիր մոլորակի միջին ջերմաստիճանի բարձրացում: Մարդկության համար վտանգ են ներկայացնում բնապահպանական այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են անտառների անխնա ոչնչացումը,

ԱՄՆ–Մեքսիկա սահմանը

Եթե սահմանի ԱՄՆ-ի հատվածում տներն ու մանավոր կառույցներն իսպառ բացակայում են, ու սահմանային տարածքը գրեթե ամայի է, ապա մեքսիկական հատվածում դրանք անմիջականորեն հարում են սահմանային պատին: Մեքսիկացիները հաճախ թունելներ են փորում անօրինական ճանապարհով ԱՄՆ տարածք ներթափանցելու համար, սակայն ամերիկյան կողմը ժամանակ առ ժամանակ հայտնաբերում և վերացնում է դրանք:

անապատացումը, ջրային և օդային միջավայրի աղտոտումը, կենդանիների անկառավարելի սպանդը:

Նշված հիմնախնդրի հետ առնչվում են սննդի, խմելու ջրի, էներգակիրների (հիմնականում գազի և նավթի) արագորեն սպառվող պաշարների խնդիրները: Գիտնականները կանխատեսում են, որ եթե անհապաղ չձեռնարկվեն անհրաժեշտ միջոցներ, ապա մի քանի տասնամյակ հետո անխուսափելի կլինեն պատերազմները նրանց վերջին մնացորդներին տիրանալու համար:

Վերջին տասնամյակներում մարդկությունը սկսում է գիտակցել այն մեծագույն վտանգը, որն իր հետ բերում է բնության և մարդու միջև գոյություն ունեցող հավասարակշռության խախտումը: Գնալով ավելի լայն թափ է ստանում բնապահպանական, մասնավորապես «կանաչների» շարժումը: «Կանաչներ» անվանումը կապված է կենդանի բնությունը մարմնավորող գույնի հետ: Նրանց շարքերի մեջ վերջին տասնամյակներին ներգրավվեցին բնակչության ամենատարբեր խավերի ներկայացուցիչներ: Այն սկսեց իր առջև դնել նաև սոցիալական բնույթի խնդիրներ՝ վերաճելով տարբեր երկրներում գործող քաղաքական կուսակցությունների: Կանաչների կուսակցությունները որոշ երկրներում ձեռք բերեցին զգալի թվով համախոհներ և մտան կառավարող կուսակցությունների շարքը: Ներկայումս նրանք ներկայացված

«Կանաչների» բողոքի երթ

են նաև Եվրախորհրդարանում:

Բնապահպանական շարժման շրջանակներում է գործում վերջին տարիներին մեծ ակտիվություն ցուցաբերած միջազգային «Գրինփիս» ոչ կառավարական կազմակերպությունը: Նրա անդամները աշխարհով մեկ կազմակերպում են ցույցեր և այլ աղմկալի միջոցառումներ, որոնց նպատակն է սևեռել հասարակության և կառավարությունների ուշադրությունը բնապահպանական խնդիրների վրա:

Հաջողության կարելի է հասնել միայն համայն մարդկության՝ միջազգային կառույցների, պետական իշխանությունների և հասարակական ոչ կառավարական կազմակերպությունների ջանքերի համախմբման միջոցով:

Պայքարը միջազգային ահաբեկչության, թմրամոլության, թրաֆիքինգի և կիբերհանցագործությունների դեմ

2001 թ. սեպտեմբերի 11-ի ահաբեկչությունը, ինչպես նաև հետագայում Լոնդոնում, Մադրիդում,

վերջին տարիներին նաև Փարիզում, Բրյուսելում, Նիցցայում, Բեռլինում և այլուր տեղի ունեցած պայթյունները ակնհայտ դարձրին, որ նույնիսկ ամենահզոր պետությունները չեն կարող ապահովել իրենց բնակչության անվտանգությունը միջազգային ահաբեկչությունից:

Առավել վտանգավոր են այնպիսի ծայրահեղ մուսուլմանական ահաբեկչական կազմակերպություններ, ինչպիսիք են «Ալ Քայիդան», «Թալիբանը» և 2013 թ-ից լայն գործունեություն ծավալած «Իրաքի և Լևանտի իսլամական պետությունը» (կրճատ՝ Իսլամական պետություն): «Ալ Քայիդան» ունի իր բաժանմունքները աշխարհի շատ երկրներում, իսկ նրա ղեկավար Բեն Լադենը, որը համարվում էր աշխարհի ամենավտանգավոր ահաբեկիչը, նյույորքյան ահաբեկչությունից միայն տասը տարի անց ստացավ իր արժանի պատիժը:

Իսլամական աշխարհում ահաբեկչական կազմակերպությունների ակտիվացումը արդյունք է հակաարևմտյան ու հակաամերիկյան տրամադրությունների ուժեղացման, քանի որ **համաշխարհայնացումը նույնացվում է բռնի արևմտականացման հետ:** Այդ երևույթը պարարտ հող է նախապատրաստում իսլամական ծայրահեղական խմբավորումների առաջացման համար, որոնք իրենց առջև խնդիր են դնում բոլոր հնարավոր միջոցներով պայքարել Արևմուտքի դեմ:

Ահաբեկչական գաղտնի կազմակերպություններ կամ նրանց տեղական խմբեր են գործում նաև Արևմուտքում, ինչպես նաև Ասիայի ու Հարավային Ամերիկայի մի շարք զարգացող երկրներում: Նրանց գոյությունը պայմանավորված է չլուծված ազգային-էթնիկական ու սոցիալական խնդիրների առկայությամբ: Այսպես, օրինակ՝ **բասկերի** ընդհատակյա ահաբեկչական կազմակերպությունը տասնամյակներ շարունակ պայքարում է հանուն բասկ ժողովրդի անկախացմանը Իսպանիայից:

Պայքարը ահաբեկչության դեմ ենթադրում է լայնածավալ և բազմաբնույթ գործողությունների մի ողջ համակարգ, որն իր մեջ պետք է ներառի ինչպես միջպետական համաձայնագրերի վրա հիմնված համակարգված քաղաքականություն, այնպես էլ հասարակության անհանդուրժող մոտեցում ծայրահեղական կազմակերպությունների նկատմամբ: Առաջնային նշանակություն է ստանում պայքարը զենքի անօրինական առևտրի դեմ: Մեծապես կարևորվում է նաև ահաբեկչություն ծնող սոցիալական բնույթի պատճառների վերացումը:

Գլոբալ լուրջ խնդիրների թվին է պատկանում **թմրամոլությունը,** որը տարածված է հիմնականում երիտասարդության շրջանում: Տարեցտարի թմրամոլությունը ստանում է ավելի լայնածավալ բնույթ՝ վերածվելով իսկական աղետի: Այն արդեն խլել է միլիոնավոր մարդկային կյանքեր, տասնյակ միլիոն-

ների դարձրել անաշխատունակ: Թմրամոլների թիվը բարձր է ինչպես զարգացած, այնպես էլ աղքատ երկրներում: Պայքարն այդ աղետի դեմ կարող է հասնել հաջողության, եթե այն լինի շարունակական և աշխարհի բոլոր երկրների համատեղ գործողությունների արդյունք: Կարևոր է, պայքարն ինչպես թմրադեղերի մաքսանենգությամբ զբաղվող ընդհատակյա կազմակերպությունների դեմ, այնպես էլ այնպիսի սոցիալական քաղաքականության կիրառումը, որը կնպաստի երիտասարդության արագ ներգրավմանը հանրօգուտ աշխատանքում:

Համաշխարհային հանրության առջև կանգնած արդիական հիմնախնդիրներից է **թրաֆիքինգը:** Դա ստրկության ժամանակակից դրսևորումն է, որը ապօրինի հանցագործ բիզնեսի ասպարեզում իր զարգացման տեմպերով զիջում է միայն թմրադեղերի վաճառքին: XX դարավերջին և XXI դարասկզբին, ըստ ՄԱԿ-ի փորձագետների տվյալների, երկրագնդի տարբեր երկրներում հաշվվում էր շուրջ 2,5 միլիոն մարդ, որոնք տարբեր անօրինական միջոցներով փոխադրվել էին այլ երկրներ: Թրաֆիքինգի միջազգային շուկայի տարեկան ընդհանուր ծավալը հասնում է 40 միլիարդ դոլարի, իսկ դրանից ստացվող շահույթը՝ 5–9 միլիարդի: Այս թվերը շարունակաբար աճում են:

Թրաֆիքինգի պատճառը սեփական երկրներում տնտեսական ծանր

Ջինված թալիբները Աֆղանստանում, 2001 թ.

պայմաններն են, որի ճնշման տակ մարդիկ ստիպված են լինում պարտքի դիմաց համաձայնվել հայրենիքից դուրս՝ մեկ այլ երկրում կատարել ցանկացած բնույթի աշխատանք, հիմնականում սնագործ: Այս առումով հատկապես տարածված է անչափահասների տեղափոխությունը գերազանցապես ԱՄՆ և Եվրոպայի երկրներ: Վերջին տասնամյակներին էականորեն աճել է կանանց թրաֆիքինգը, հատկապես նախկին ԽՍՀՄ երկրներից դեպի Եվրոպա, Մերձավոր և Միջին Արևելքի երկրներ, Ճապոնիա:

Ժամանակակից ստրկության ելակետային երկրների շարքում աչքի են ընկնում Թաիլանդը, Չինաստանը, Նիգերիան, Ալբանիան, Բուլղարիան, Մոլդովան, Բելառուսը և Ուկրաինան: Իսկ մեկնակետային երկրներից առաջատար դիրք են զբաղեցնում Ճապոնիան, Իսրայելը,

Բելգիան, Նիդերլանդները, Գերմանիան, Թուրքիան և ԱՄՆ–ը:

Հետարդյունաբերական հասարակության ծնունդ է և XXI դարում գնալով աննախադեպ թափ է հավաքում կիբերհանցագործությունը: Համաշխարհային համացանցը ստեղծել է մի նոր իրականություն, որն անվանում են կիբեր կամ վիրտուալ տարածություն: Համացանցի և թվային տեխնոլոգիաների լայնամասշտաբ կիրառումը, համաշխարհային միասնական կիբերտարածքի ստեղծումը դրական բազմաթիվ կողմերի հետ մեկտեղ ծնեցին նոր հիմնախնդիր մարդկության համար՝ կիբերանվտանգության ապահովումը: Այս նոր կարգի հանցագործությունները կատարվում են համակարգչային տեխնիկայի կամ ցանցի միջոցով և ուղղված են լինում ոչ միայն անհատ–օգտատերերի, այլև հենց համակարգիչների, տարբեր ցանցային կառույցների ու համացանցի դեմ: Դրանք անմիջական սպառնալիք են մարդկանց անձնական կյանքին, հասարակական և պետական ամենատարբեր կառույցներին ու ոլորտներին, միջպետական ու միջազգային հարաբերություններին: Կիբերանվտանգության ապահովումը նույնպես պահանջում է քաղաքակիրթ աշխարհի ուժերի, իրավական, ֆինանսական, բարոյական և մտավոր կարողությունների համադրում:

Թրաֆիքինգի տարածվածությունն աշխարհում 2006–2007 թթ.



Ընդամենը՝ 2,6 մլն մարդ

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Որո՞նք են արդի գլոբալ հիմնախնդիրները: Դրանց լուծման համար ի՞նչ է անհրաժեշտ:
2. Նկարագրե՛ք ժողովրդավարական իրավիճակի փոփոխությունները: Ի՞նչ նպաստող պայմաններ կան բնակչության աճի համար: Այդ առումով որո՞նք են տարբերությունները զարգացած և զարգացող երկրների միջև: Միգրացիոն ի՞նչ հետևանքներ է դա առաջացնում:
3. Շրջակա միջավայրի պաշտպանության բնագավառում ի՞նչ խնդիրներ են առաջացել, նշե՛ք դրանց պատճառները: Ի՞նչ է «կանաչների շարժումը»: Որո՞նք են բնապահպանական խնդիրների լուծման միջոցները:
4. Ձեր կարծիքով վերջին տարիներին ի՞նչու են ավելացել ահաբեկչական գործողությունները: Որո՞նք են հայտնի իսլամական ահաբեկչական կազմակերպությունները, և ի՞նչ նպատակներ են դրանք հետապնդում: Ի՞նչ միջոցներ են անհրաժեշտ ահաբեկչության դեմ պայքարելու համար:
5. Ո՞րն է թմրամոլության աճի պատճառը: Ինչպիսի՞ միջոցներ են կիրառվում այդ աղետի դեմ պայքարելու նպատակով:
6. Ի՞նչ է թրաֆիքինգը: Որո՞նք են դրա պատճառները: Ո՞ր երկրներում է տարածված այդ երևույթը, ի՞նչու: Ձեր կարծիքով ի՞նչ միջոցներ պետք է կիրառվեն թրաֆիքինգը վերացնելու համար:
7. Ի՞նչ է կիբեր կամ վիրտուալ տարածությունը: Պարզաբանե՛ք կիբերհանցագործության էությունը: Ձեր կարծիքով ի՞նչու են այս կարգի հանցագործությունները գնալով մեծ ծավալ ընդունում: Ի՞նչ է անհրաժեշտ կիբերանվտանգությունը ապահովելու համար:

§ 2. ՔԱՂԱՔԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ XXI ԴԱՐՈՒՄ

Պատերազմի և խաղաղության հիմնախնդիրը

Մեր օրերում մարդկությունը դեռևս չի կարողացել վերջնականապես լուծել թերևս ամենակարևոր՝ պատերազմի ու խաղաղության հիմնախնդիրը: Նրանից է անմիջականորեն կախված տասնյակ և հարյուր միլիոնավոր մարդկանց կյանքը, գուցեն ողջ մարդկային քաղաքակրթության գոյությունը: Չնայած և հաջողվում է խուսափել միջուկային զենքի կիրառմամբ լայնածավալ պատերազմներից, սակայն դեռևս տեղի են ունենում տեղական բնույթի պատերազմներ, շարունակվում են տարածաշրջանային հակամարտությունները:

Սառը պատերազմի ավարտից հետո աննախադեպ թափ ստացած համաշխարհայնացման և միասնաց-

Հարավսլավիայի մայրաքաղաք Բելգրադը
ՆԱՏՕ-ի ռմբակոծությունից հետո, 1999 թ. ապրիլի 21

ման գործընթացներն ուղեկցվում են հակամարտություններով և արյունալի պատերազմներով:

Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց պատերազմից, որը ստացավ **Բալկանյան պատերազմ** անվանումը: 1990-ական թվականների Բալկանյան պատերազմն ավարտվեց Սերբիայի պարտությամբ: Նրա ավանդական դաշնակից Ռուսաստանը, լինելով թուլացած վիճակում, չկարողացավ օգնություն ցույց տալ:

Հետսառըպատերազմյան շրջանի սուր հակամարտության օջախ է Իրաքը: Երկրորդ պատերազմը Իրաքի դեմ նախաձեռնեց ԱՄՆ-ը **2003 թ. գարնանը**՝ մեղադրելով Իրաքին, որ նա աջակցում է համաշխարհային ահաբեկչությանը և գաղտնի պատրաստում է միջուկային զենք: Այս պատերազմը, որը չէր ստացել ՄԱԿ-ի հավանությունը, նույնպես ավարտվեց Իրաքի պարտությամբ:

1940-ական թվականների վերջերից սկիզբ առած **արաբա-իսրայելական** սուր հակամարտությունը Մերձավոր Արևելքում շարունակվում է մինչև մեր օրերը: Սառը պատերազմի ավարտից հետո չհաջողվեց գտնել այդ սուր հակամարտության լուծումը, չնայած ԱՄՆ-ի միջնորդությամբ արձանագրվեց որոշ առաջընթաց այդ ուղղությամբ:

Ամերիկյան զորքերը Բաղդադի փողոցներում

Ռուսական տանկերը Հարավային Օսիայում, 2008 թ. օգոստոս

Նախկին Խորհրդային Միության տարածքում առաջացած հակամարտությունների (Ղարաբաղյան, Արխազական, Հարավօսական, Մերձդնեստրյան) հետևանքով 1990-ական թվականների սկզբներին տեղի ունեցան արյունալի զինված բախումներ: Դրանք ավարտվեցին զինադադարներով, սակայն իրավական դաշտում լուծում չստացան և սկսեցին դասվել «սառեցված» հակամարտությունների թվին: Դրանցից է Ղարաբաղյան հակամարտությունը, որն ավարտվեց Արցախի ժողովրդի փայլուն հաղթանակով: Ստեղծվեց Լեռնային Ղարաբաղի ինքնիշխան հանրապետությունը, որը, սակայն, դեռևս ճանաչված չէ ՄԱԿ-ի անդամ որևէ պետության կողմից: ԵԱՀԿ-ի կողմից ստեղծված Մինսկի խմբի երեք համանախագահ պետությունների (ԱՄՆ, Ռուսաստան, Ֆրանսիա) միջնորդությամբ գործադրվում են ջանքեր հակամարտությունը լուծելու ուղղությամբ:

Ցեղասպանությունների կանխարգելման խնդիրը

Ցեղասպանությունը մարդկային պատմության ամենադաժան և ամոթալի երևույթներից է, որի կանխարգելման հարցը շարունակում է մնալ արդի աշխարհի կարևորագույն խնդիրներից մեկը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո ստեղծված անվտանգության համակարգն անկարող էր պաշտպանել ոչ միայն անհատի իրավունքների, այլև մարդկային հոծ խմբերի կյանքի իրավունքը:

Մոտավոր հաշվարկները վկայում են, որ 1945–1987 թթ. պետություններ-ի կողմից իրականացված զանգվածային կոտորածների զոհերի թիվը մոտ 2,5 անգամ գերազանցում է 1945–1980 թթ. տեղի ունեցած բոլոր պատերազմների զոհերի թիվը:

Արդեն սառը պատերազմի ավարտից հետո՝ 1990–ական թվականներին, տեղի ունեցավ ցեղասպանություն աֆրիկյան **Ռուանդայում,** որտեղ երկու ժողովուրդների ներկայացուցիչները՝ թութսիները և հութները, ոչնչացրին մեկը մյուսին: Հաջորդ տասնամյակում ցեղասպանություն տեղի ունեցավ մեկ այլ աֆրիկյան երկրի՝ Սուդանի Դարֆուր նահանգում: Նույնիսկ Եվրոպան զերծ չմնաց ցեղասպանության ոճրագործությունից, երբ 1990–ական թվականների Բալկանյան պատերազմի ժամանակ հակամարտող կողմերի գործողությունները շատ դեպքերում բնութագրվում էին որպես ցեղասպանական արարքներ:

Ամերիկացի հասարակագետ ու աստվածաբան Ֆ. Լիթլը XX դարը բնութագրել է որպես «Ցեղասպանության դարաշրջան»:

Վերը բերված տվյալները փաստում են, որ մարդկությունը դեռևս չի մշակել ցեղասպանությունների կանխարգելման գործուն միջոցներ: Ակնհայտ է դառնում նաև, որ **ՄԱԿ–ի 1948 թ. դեկտեմբերի 9–ի կոնվենցիան՝** «Ցեղասպանության հան-



Աֆրիկայի հարավարևմտյան շրջանում՝ ներկայիս Նամիբիայի տարածքում, 1904–1907 թթ. գերմանացի գաղութարարների կազմակերպած ցեղասպանությունից հրաշքով փրկված հերերո ցեղի սովահար և տանջահար մի խումբ ներկայացուցիչներ

ցագործությունը կանխարգելելու և պատժելու մասին», չի ծառայում իր հիմնական նպատակին՝ ցեղասպանությունների կանխարգելմանը, քանի որ այստեղ հստակորեն ձևակերպված չէ պետության պատասխանատվության դրույթը: Այն հանգամանքը, որ XX դարի սկզբին օսմանյան Թուրքիայի կողմից իրականացված Հայոց ցեղասպանությունը դեռևս չի դատապարտվել ինչպես հեղինակավոր միջազգային ատյանի՝ ՄԱԿ–ի, այնպես էլ աշխարհի պետությունների մեծ մասի կողմից, նույնպես չի նպաստում մեր օրերի ցեղասպանությունների կանխարգելմանը: Այս հանգամանքը հնարավոր հանցագործների մեջ պատրանք է ստեղծում, որ կարելի է խուսափել պատասխանատվությունից:

Համաշխարհայնացման գործընթացը

Համաշխարհայնացումը (գլոբալացում) արդի աշխարհի ամենակարևոր երևույթն է: Այդպես է անվանվում այն գործընթացը, որը տանում է դեպի աշխարհի երկրների ու ժողովուրդների միջև արագորեն խորացող համագործակցության և տնտեսական միասնացման՝ շուկայական հարաբերությունների հիման վրա:

Փախստականների ճամբարում ֆրանսիացի խաղաղապահները կատարում են իրենց առաքելությունը, Ռուանդա, 1994 թ.

Արդեն իսկ ստեղծվել է **համաշխարհային ֆինանսական դաշտ՝** որպես համաշխարհայնացման կարևորագույն նախապայման, ինչը հնարավորություն է տալիս վայրկենապես տեղափոխելու ֆինանսական միջոցները աշխարհի մեկ անկյունից մյուսը: Համաշխարհայնացման տեխնիկական հենքը համաշխարհային լրատվական **համացանցն է**: Վերջին տարիներին լայն տարածում են ստացել տեղափոխվող համակարգիչները (լափ–թոփ) և ձեռքի հեռախոսների հետ համակցված մինի–համակարգիչները, որոնք հնարավորություն են տալիս մշտական կապի մեջ լինելու համացանցի հետ:

Հոգևոր ոլորտում համաշխարհայնացումն ուղեկցվում է արևմտյան քաղաքակրթական արժեքների և անգլերենի լայն տարածումով ողջ աշխարհով մեկ: Դա նպաստում է տարբեր ժողովուրդների ներկայացուցիչների միջև հաղորդակցման դյուրացմանը և հոգևոր–մշակութային ու գիտական շփումների և կապերի ընդլայնմանը: Համաշխարհայնացումը մարդկության համար աննախադեպ բարենպաստ հնարավորություններ է ստեղծում՝ արագացնելու զարգացման տեմպերը մարդկային կյանքի բոլոր ոլորտներում:

Սակայն համաշխարհայնացումը ունի նաև **բացասական հետևանքներ:** Այսպես, օրինակ՝ այն կարող է տանել դեպի ազգային արժեքային համակարգի քայքայում և մշակութային համահարթեցում: Այդ երևույթներն առանձնահատուկ վտանգ են ներկայացնում փոքր ազգերի համար:

Միաժամանակ փորձը ցույց է տալիս, որ այն պետությունները, որտեղ համաշխարհայնացման գործընթացները դանդաղ են զարգանում, դուրս են մնում աշխարհում ընթացող միասնացման գործընթացներից և դատապարտվում են տնտեսական ու քաղաքական մեկուսացման: Ներքին կյանքում այդ պետությունները լուրջ դժվարությունների են հանդիպում սոցիալական ոլորտում:

Հայաստանը, ինչպես աշխարհի շատ այլ երկրներ, նույնպես ներքաշվել է համաշխարհայնացման գործընթացների մեջ: Արդի փուլում կարևոր է դարձել նրա հնարավորություններից օգտվել կարողանալը՝ մեր երկրի զարգացումը, տնտեսության միասնացումը համաշխարհային շուկային և բնակչության կենսամակարդակի բարձրացումը արագացնելու նպատակով՝ միաժամանակ անաղարտ պահելով ազգային արժեքները և ավանդույթները:

Աշխարհի բազմաթիվ երկրներում հայկական սփյուռքի առկայությունը հնարավոր է դարձնում ավելի նպատակասլաց ներգրավվելու սփյուռքի և հյուրընկալած

երկրի տնտեսական ներուժը հայրենիքի տնտեսական զարգացման մեջ: Համացանցն իր հերթին հնարավորություն է տալիս ստեղծելու համաշխարհային համահայկական կիբեր տարածություն, ինչը մեծապես կնպաստի հայության ազգային ոգու վերածննդին և աշխարհի քաղաքական ու հոգևոր կյանքում նրա դիրքերի ամրապնդմանը:

Հակագլոբալականների շարժումը և կրոնական գործոնի ակտիվացումը

Համաշխարհայնացումը համաշխարհային հասարակական կարծիքի կողմից միանշանակ դրականորեն չի ընկալվում և որոշ դեպքերում առաջացնում է հակազդեցություն: Այդ պատճառով աշխարհի տարբեր երկրներում սկիզբ է առել համաշխարհայնացման հակառակորդների՝ ***հակագլոբալականների*** միջազգային շարժումը: Դրա մաս-



Այսօր ժամանակակից մարդու կենցաղն անհնար է պատկերացնել առանց տեղեկության և դրա ստացման գլխավոր աղբյուրի՝ համացանցի:

նակիցների համոզմամբ համաշխարհայնացման դեմ անհրաժեշտ է պայքարել, քանի որ այն տանում է դեպի համաշխարհային կառավարության առաջացում և ազգային կառավարությունների ու առանձին անհատի ինքնիշխանության սահմանափակում:

Համաշխարհայնացումը՝ հասարակության որոշ շերտերի մեջ որպես հակազդեցություն հոգևոր համահարթեցմանը, առաջացնում է ձգտում հեռանալու իրականությունից և ներփակվելու կրոնի շրջանակներում: Դա տանում է դեպի կրոնի դերի մեծացում հասարակական կյանքում: Քրիստոնյա աշխարհում այդ երևույթն արտահայտվում է ինչպես քրիստոնեության հիմնական ուղղությունների, այնպես էլ բազմաթիվ աղանդների ներկայացուցիչների թվաքանակի աճով: Տարածում են ստանում նաև արևելյան, հիմնականում հեռավորարևելյան կրոնական ուսմունքները:

Արևմուտքում վերջին տասնամյակներին նկատվող հեռավորարևելյան կրոնական ուսմունքների տարածումը տեղի է ունենում հիմնականում երիտասարդության ու մտավորականության շրջաններում: Այդ ուսմունքներն ընկալվում են որպես հնարավորություն՝ պահպանելու անհատի ինքնությունն ու հոգևոր ազատությունը:

Իսլամական աշխարհում համաշխարհայնացումը հիմնականում նույնացվում է արևմտականացման հետ և ընկալվում է ավելի բացասական երանգներով: Դրանից օգտվում են տարատեսակ ծայրահեղական արմատական կազմակերպությունները, որոնք ընդլայնում են իրենց համախոհների թիվը:

Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում

Համաշխարհայնացման գործընթացի խորացումը, համաշխարհային համացանցի և համամոլորակային վիրտուալ տարածության առաջացումը բարենպաստ պայմաններ են ստեղծել ժողովուրդների և մշակույթների միջև հաստատուն երկխոսության ու համագործակցության կայացման, ինչպես նաև աշխարհում միասնացման միտումների ուժեղացման համար: Սակայն գոյություն ունեցող բազմաթիվ հակասություններն ու հակամարտությունները միասնական համաշխարհային քաղաքակրթության ձևավորումը մոտ ապագայում դարձնում են քիչ հավանական:

Վերոնշյալ հանգամանքները հիմք ծառայեցին մի շարք տեսությունների համար, որոնց հեղինակները փորձում են նախանշել մարդկության զարգացման ուղիները XXI դարում: Դրանցից ամենամեծ տարածումն է ստացել «քաղաքակրթությունների միջև բախման» հիմնադրույթի վրա հենվող գաղափարա-

կան–քաղաքական հայեցակարգը: Նրա հեղինակ **Ս. Հանթինգթոնը** կարծում էր, որ սառը պատերազմի դարաշրջանի ավարտից հետո աշխարհում հիմնական հակամարտությունը դառնում է պայքարը իսլամական և արևմտյան քաղաքակրթությունների միջև: Վերջինս, ըստ նրա, ավելի առաջադեմ է և անպայման պետք է այդ պայքարից դուրս գա հաղթանակած: Այդ հաղթանակի հետ է նա կապում մարդկության հետագա առաջընթացը:

Այդ տեսությունն, ըստ էության, ներկայացնում է արևմտամետ աշխարհընկալման վրա հիմնված մոտեցում: Ոչ արևմտյան մի շարք երկրների մտավորականության ներկայացուցիչները Ս. Հանթինգթոնի տեսությանը հակադրում են «մշակույթների և քաղաքակրթությունների երկխոսության» հայեցակարգը: Նրանց տեսանկյունից ներկայիս աշխարհում գոյություն ունեցող տարբեր քաղաքակրթություններից և ոչ մեկը չունի առավելություն մյուսների նկատմամբ: Նրանք ընդգծում են, որ քաղաքակրթությունների միջև գոյություն ունեն ընդհանրության բազմաթիվ եզրեր, որոնք անհրաժեշտ է օգտագործել՝ մարդկության առջև ծառացած բազմաթիվ խնդիրները համատեղ ջանքերով լուծելու նպատակով:

Հակագլոբալականների ցույց Մեծ ութնյակի հանդիպումից առաջ. Էդինբուրգ, 2005 թ. հունիսի 6

Եթե «քաղաքակրթությունների միջև բախման» տեսությունը հնարավորություն է տալիս բացատրելու մեր օրերում տեղի ունեցող գործընթացների մի մասը, ապա «քաղաքակրթությունների միջև երկխոսության» հայեցակարգը նպաստում է ժամանակակից աշխարհում մարդկության առջև ծառացած բարդ խնդիրների լուծումները համատեղ ջանքերով գտնելուն: Ըստ էության, այն նախանշում է այն ուղին, որն ընտրելով՝ մարդկությունը կապահովի կայուն առաջընթաց XXI դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Ձեր կարծիքով ինչո՞ւ են արդի փուլում դեռևս տեղի ունենում պատերազմներ: Խաղաղության հիմնախնդրի լուծման ի՞նչ ուղիներ կան: Որո՞նք են Բալկանյան պատերազմի հետևանքները: Ինչո՞ւ ԱՄՆ–ը և նրա դաշնակիցները 2003 թ. ներխուժեցին Իրաք: Ո՞րն է արաբա–իսրայելական չդադարող հակամարտության գլխավոր պատճառը:
2. Նախկին ԽՍՀՄ–ի տարածքում ի՞նչ հակամարտություններ կան. թվարկե՛ք դրանք: Ո՞րն է Արցախյան հիմնախնդրի լուծման ուղին:
3. Ձեր կարծիքով ինչո՞ւ են մեր օրերում ևս իրականացվում ցեղասպանություններ: Վիճակագրական ի՞նչ տվյալներ կարող եք նշել: Ինչո՞ւ ՄԱԿ–ի 1948 թ. դեկտեմբերի 9–ի կոնվենցիան չի ծառայում իր հիմնական նպատակին:
4. Ի՞նչ է համաշխարհայնացումը: Հասարակական կյանքի ո՞ր ոլորտներում է այն դրսևորվում: Ինչպիսի՞ հնարավորություններ են ընձեռում համակարգիչը, համացանցը և բջջային հեռախոսը:
5. Ներկայացրե՛ք համաշխարհայնացման դրական և բացասական կողմերը: Հայաստանը և հայ ազգը ի՞նչ հնարավորություններ են ստանում համաշխարհայնացման գործընթացից:
6. Որո՞նք են հակագլոբալական շարժման պատճառները: Ինչո՞ւ է մեր օրերում մեծացել կրոնական գործոնի դերը: Ի՞նչ դրսևորումներ ունի այդ գործոնը Արևմուտքում և իսլամական աշխարհում:
7. Բացատրե՛ք քաղաքակրթության զարգացման հեռանկարների վերաբերյալ երկու ամենատարածված տեսակետների բովանդակությունը: Ձեր կարծիքով ի՞նչ հեռանկար է սպասվում համաշխարհային քաղաքակրթությանը XXI դարում:

Բաժին Բ

ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 4 ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ

§ 1–2. ՄՇԱԿՈՒՅԹԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՓՈՒԼԵՐԸ, ՊԱՅՄԱՆՆԵՐՆ ՈՒ ՄԻՏՈՒՄՆԵՐԸ

Զարգացման փուլերը

Նորագույն շրջանում աշխարհը մշակութային առումով նույնպես արագ փոփոխվում է: Համաշխարհային մշակույթը, հենվելով արդյունաբերական հասարակության երկրորդ շրջափուլի մեծագույն նվաճումների վրա, բուռն վերելք է ապրել, և դա տեղի է ունեցել տարբեր ուղղությունների միջև պայքարի, մրցակցության ու զարգացման տարբեր միտումների դրսևորման տեսքով:

Նորագույն շրջանի մշակույթի զարգացումը կարելի է պայմանականորեն բաժանել երեք փուլի՝

1) Առաջին աշխարհամարտի ավարտից մինչև Երկրորդ աշխարհամարտի ավարտն ընկած շրջան,

2) սառը պատերազմի շրջան,

3) արդի շրջան:

Առաջին աշխարհամարտից հետո գրականության և արվեստի զարգացման, թեմատիկայի և ստեղծագործական մոտեցումների ընտրության վրա մեծ ազդեցություն թողեցին ժամանակի աշխարհացունց երևույթներն ու իրադարձությունները՝ հեղափոխություններ և քաղաքացիական պատերազմներ, ազգամիջյան բախումներ, Մեծ ճգնաժամ և այլն:

Երկրորդ աշխարհամարտից հետո՝ սառը պատերազմի դարաշրջանում, մշակույթը, հատկապես գրականությունը և արվեստը գաղափարական–քաղաքական հողի վրա բաժանվեցին սոցիալիստականի և բուրժուականի ու հակադրվեցին միմյանց: Այդ հանգամանքն իր խոր կնիքը դրեց մշակույթի բոլոր ճյուղերի վրա: Ուստի դժվար է խոսել մեկ ընդհանուր համաշխարհային մշակույթի մասին, քանի որ այն երկփեղկված էր հիմնականում երկու՝ սոցիալիստական և արևմտյան մշակույթների:

Երրորդ աշխարհի ձևավորումից հետո մշակութային կյանքն ավելի բազմազան դարձավ, հարստացավ նոր գույներով ու երանգներով:

Արդի փուլի սկիզբը ազդարարեցին սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը և համաշխարհայնացման գործընթացի ծավալումը: Ժամանակակից հասարակության հոգևոր–գաղափարական հիմքում դրված են այնպիսի բարձր արժեքներ, ինչպիսիք են սերը մար-

դու հանդեպ, հավասարության, արդարության, ազատության և ժողովրդավարության գաղափարները:

Մշակութային վերելքի պարտադրական պայմանները

Մշակութային կյանքի զարգացումը նորագույն շրջանում առավել քան երբևէ տեղի է ունենում համաշխարհային պատմական գործընթացի միասնականության ու բազմազանության համատեքստում: Դժվարությունների հետ միասին կան նաև նպաստավոր պայմաններ:

Մշակույթի վերելքին էականորեն նպաստում է զարգացած և զարգացող երկրների կրթական մակարդակի բարձրացումը: Համընդհանուր գրագիտության տարածման, կրթական մակարդակի բարձրացման և գիտության զարգացման շնորհիվ մշակույթը առանձին անհատների մենաշնորհից դարձավ ամենալայն զանգվածների սեփականությունը:

Եվրոպայի և Ամերիկայի զարգացած երկրները շարունակեցին պահպանել առաջնայնությունը գրականության, գեղանկարչության, երաժշտության, թատրոնի, կինոյի և արվեստի այլ բնագավառներում: Նրանք աչքի ընկան նոր ուղղությունների, ոճերի և գաղափարների ստեղծման ու զարգացման գործում:

Մշակույթի զարգացման առաջին փուլի սկզբում պայմանները

Օսվալդ Շպենգլեր

բավական ծանր էին: Նախկին արժեքները, գլխավորապես եվրոպական, կորցրին իրենց գրավչությունն ու նշանակությունը մարդկանց աչքերում: Մարդիկ խոր հիասթափություն էին ապրում, և նրանց մեջ առաջացել էին հուսահատություն ու հոգևոր դատարկություն: Այս հոգեվիճակի և մտայնության արտացոլումը Օ. Շպենգլերի «Եվրոպայի մայրամուտը» աշխատությունն էր, որտեղ խոսվում էր եվրոպական քաղաքակրթության անկման մասին:

Սակայն աստիճանաբար հոգնածությունը պատերազմից և հուսահատությունը տեղի տվեցին, և մարդիկ ձգտում էին վայելելու աշխարհիկ կյանքի հաճույքները:

1920-ական թվականներին սկսվում է եվրոպացիների իսկական ծանոթությունը ամերիկյան կենսակերպին և արվեստին: Այդ պահից

սկսվում է ամերիկյան արժեքների թափանցումը Եվրոպա և աշխարհի մյուս երկրներ:

1930-ական թվականներին առաջնային է դառնում պայքարը ֆաշիզմի և ֆաշիստական գաղափարախոսության դեմ: Ֆաշիզմի դեմ ուղղված պայքարին այլ ուժերի հետ միասին ակտիվորեն մասնակցեցին, անկախ իրենց քաղաքական հայացքներից, աշխարհի տարբեր ազգությունների առաջադեմ մտավորականները:

Հասարակական կյանքի բոլոր բնագավառներում տեղի ունեցող փոփոխություններին զուգահեռ փոփոխություն է կատարվում մարդկանց հոգեբանության և տրամադրությունների մեջ: Արևմտյան կամ կապիտալիստական աշխարհի մշակույթի մեջ կենտրոնական դարձավ անհատի ազատության և իրավունքների թեման:

Նորագույն շրջանի նոր երևույթ է **սոցիալիստական մշակույթը:** Այն խարսխված էր **սոցիալիստական ռեալիզմի** սկզբունքի վրա և ձևավորվեց 1930-ական թվականների կեսերին: Այս սկզբունքը տիրապետող դարձավ նախ ԽՍՀՄ-ում, իսկ հետագայում՝ Արևելյան Եվրոպայի և Ասիայի սոցիալիստական երկրներում, ապա՝ նաև Կուբայում: Սոցիալիստական մշակույթը ստեղծողներին արգելված էր արտացոլել հասարակարգի սոցիալ-քաղաքական և ազգային-էթնիկական առկա խոր հակասությունները: Սոցիալիստական ռեալիզմը՝ որպես գաղափարական գլխավոր սկզբունք և ստեղծագործական մեթոդ, պարտադրում էր արևմտյան մշակույթը դիտել որպես հակառակորդ, չտեսնել որևէ լուսավոր շող նրանում:

Սոցիալիստական ռեալիզմը մեծ հարված հասցրեց արվեստի և գրականության զարգացմանը սոցիալիստական երկրներում՝ կաշկանդելով տաղանդների դրսևորումը: Չնայած այս իրավիճակին, այնուամենայնիվ, խորհրդային մշակույթը զարգանում էր: Տաղանդավորները կարողանում էին, թեկուզ և սոցիալիստական ռեալիզմի շղարշի ներքո, ստեղծել արվեստի մեծարժեք գործեր, որոնցում արտացոլվում էին

«Բանվորը և կոլտնտեսուհին» (1937 թ.) քանդակը սոցիալիստական ռեալիզմի լավագույն նմուշներից է, քանդակագործ՝ Վ. Մուխինա

գոյություն ունեցող իրականությունը, մարդկանց ձգտումները, պայքարը սոցիալիստական հասարակարգի արատների դեմ:

Հետարդյունաբերական հասարակության ձևավորման և ամրապնդման ժամանակաշրջանում գիտության և արտադրության տեխնոլոգիական հզոր առաջընթացը, մարդկանց նյութական բարեկեցության կտրուկ աճը հանգեցրին հոգևոր արժեքների պարզունակեցման կամ անտեսման: Տեխնածին մտածողությունը, որ ԳՏՀ–ի դարաշրջանի բնորոշ երևույթ է, դարձավ գերակշռող հասարակական գիտակցության մեջ, իսկ մշակութային կյանքի հումանիտար ուղղությունը և հումանիզմի գաղափարները զիջել են իրենց երբեմնի առաջնայնությունը: Նման իրավիճակը լուրջ հիմնախնդիր է:

Հիմնական ուղղությունները

Մշակույթի մեջ, ինչպես և հասարակական կյանքի մյուս բնագավառներում, բոլոր երևույթներն ու զարգացման հիմնական ուղղությունները փոխադարձաբար կապված են միմյանց որպես միասնական համակարգի տարբեր մասեր: Նորագույն շրջանի մշակույթի զարգացման գործընթացն աչքի է ընկնում իր բազմազանությամբ, տարբեր ուղղությունների առկայությամբ և շարունակական նորարարությամբ:

Արվեստի և գրականության նոր ուղղությունները յուրովի էին արձագանքում ժամանակի հասարակական կյանքի երևույթներին, գեղարվեստական ստեղծագործության իրենց բնորոշ ձևերով ներկայացնում իրականության ու մարդու մասին նոր պատկերացումները:

Առաջին փուլում տիրապետող ուղղությունն էր **մոդեռնիզմը** (մոդեռն՝ *նոր, ժամանակակից*): Այն հատկապես տարածված էր գրականության, գեղանկարչության և ճարտարապետության մեջ: Մոդեռնիզմին բնորոշ էր խզումը նախկինում գերակշռող ավանդական իրապաշտական ուղղությունից:

Նյույորքյան այս երկնաքերը ճարտարապետական մոդեռնիզմի դասական նմուշ է:

Մոդեռնիզմն իր հերթին ներկայանում էր տարբեր հոսանքների տեսքով: Ընդունված է դրանք բաժանել երկու հիմնական խմբի՝ **աբստրակցիոնիզմ (վերացականություն)** և ավանգարդիզմ (ֆրանս. *ավանգարդ՝ առաջապահ ջոկատ*): Դրանցից յուրաքանչյուրն ունի իր տարատեսակները (տես այս գլխի պարագրաֆ 5–ը):

1960–ական թթ. սկզբներին մոդեռնիզմը մտավ զարգացման նոր փուլ, որը ստացել է **հետմոդեռնիզմ** անվանումը: Հետմոդեռնիզմի առաջացման գործում կարևոր դեր խաղաց մարդկության ապագայի հանդեպ ծագած «մեծ վախը»: Հետմոդեռնիզմը նույնպես հայտնի է իր զանազան ոճերով ու ձևերով:

Գեղարվեստական մշակույթի մեջ պահպանվել են նաև նախորդ շրջանում տարածում ունեցող ուղղությունները՝ **նորդասականություն, քննադատական իրապաշտություն, նորռոմանտիզմ, խորհրդանշապաշտություն, ռետրո** և այլն: XX դ. վերջերից մոդեռնիզմը սկսել է զիջել իր դիրքերը, տեղի են ունենում ազգային և տարածաշրջանային մշակույթների վերաթարմացում և զարգացում:

Զանգվածային մշակույթը

Արդի մշակութային կյանքն անհնար է պատկերացնել առանց **զանգվածային մշակույթի**: Նոր տիպի այս մշակույթի առաջացումը կապված էր զանգվածային արտադրության և սպառման հետ: Լայն իմաստով այն ընդգրկել է կյանքի բոլոր ոլորտները, հատկապես ամբողջականորեն է դրսևորվել *երիտասարդական ենթամշակույթի* (ռոք երաժշտություն) ձևով: Զանգվածային լրատվության միջոցների, համընդհանուր գրագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ զանգվածային մշակույթն արագորեն տարածվեց ու շարունակում է զարգանալ:

Զանգվածային մշակույթն ի սկզբանե նախատեսված էր վաճառքի, առևտրի համար: Որպես մշակութային ապրանք արտադրող ոլորտ՝ այն կոչված էր սպասարկելու հասարակության միջին ու ցածր խավերի պահանջմունքները: Սակայն աստիճանաբար այն տարածվեց ու գտավ իր սպառողին հասարակության բոլոր խավերում: Զանգվածային մշակույթը ձեռք է բերել միջազգային բնույթ, այն թե՛ Ամերիկայում, թե՛ Եվրոպայում, Ասիայում ու Աֆրիկայում զարգանում է նույն օրինաչափություններով: Այս տեսակի ստեղծագործությունների մեծ մասը արտադրում և միջազգային շուկա է դուրս բերում ԱՄՆ–ը:

Կարելի է ասել, որ ապրանքային մշակույթի տարածմամբ **մշակույթը տարանջատվեց զանգվածային և էլիտար (ընտրյալ) շերտերի**. այս երևույթը նորագույն շրջանի մշա-

կույթի գլխավոր առանձնահատկություններից է: Չնայած դրան՝ երկուսն էլ հենվում են ժողովրդական մշակույթի վրա, փոխադարձաբար կապված են իրար ու ազդում են միմյանց վրա: Ասվածի դասական օրինակը ջազի պատմությունն է:

Ջազային երաժշտությունը ստեղծվել է **1900 թ.** ԱՄՆ–ի Նյու Օռլեան քաղաքի սևամորթ բնակչության կողմից: 1920–1930–ական թթ. աղքատ թաղամասերից ու էժանագին սրճարաններից այն տեղափոխվեց ռեստորաններ, կինո, էստրադա, հետագա տասնամյակներում նաև ռադիո, հեռուստատեսություն, նշանավոր ու էլիտար համերգային դահլիճներ: Այն Ամերիկայից հասավ Եվրոպա ու աշխարհի բոլոր կողմերը: Եթե սկզբում ջազ նվագում ու երգում էին անգրագետ թափառաշրջիկ երաժիշտները, ապա այժմ այն կատարում են նաև կոնսերվատորիաների լավագույն շրջանավարտները, աշխարհահռչակ նվագախմբերը, կազմակերպվում են ջազի միջազգային փառատոներ (նման փառատոն կազմակերպվում է նաև Հայաստանում):

Օգտակարի հետ միասին զանգվածային մշակույթը մեծ վտանգներ է պարունակում: Նրա առաջնային նպատակը գեղարվեստական ճաշակ զարգացնելը չէ, այլ որոշակի մոտեցումներ, ձևեր, դրոշմներ, կարծրատիպեր, թեմաներ պարտադրելը զանգվածային հանդիսատեսին, ընթերցողին և ունկնդրին:



Լուի Արմսթրոնգ

Մեր օրերում քննադատները զանգվածային մշակույթի արտադրանք են համարում այն ֆիլմերը, գրքերը, հաղորդումները, համացանցային տեղեկատվությունը և այլն, որոնք արտացոլում են երեք հիմնական թեմաներ՝ սկանդալներ, պոռնոգրաֆիա և սարսափներ: Դրանց ավելանում է նաև, այսպես կոչված, **դեղին մամուլը:** Այդ կարգի արտադրանքը հեռուստացույցով, համացանցով, տեսալսաձայնագրային և այլ եղանակներով գտնում է իր սպառողին:

Զանգվածային մշակույթի բացասական դրսևորումները մեծ վտանգ են ներկայացնում հասարակության բարոյական, գեղագիտական ու գաղափարական հիմքերին: Այս տե-

սանկյունից հատկապես խոցելի են երեխաներն ու երիտասարդները: Աշխարհի շատ երկրներ այսօր գործուն միջոցներ են ձեռնարկում իրենց հասարակությունները հոգևոր առումով պաշտպանելու, ընտանեկան, ազգային ավանդական արժեքները պահպանելու նպատակով:

Մշակույթի զարգացման միտումները XXI դարում

Նախորդ դարի վերջերից ակնհայտ դարձավ ոչ միայն տնտեսության, այլև մշակույթի համաշխարհայնացման գործընթացը: Դա պայմանավորված էր կապի նոր միջոցների, հեռուստատեսության զարգացման, պետությունների միջև անհաղթահարելի թվացող պատնեշների խորտակման, ճանապարհորդությունների և մարդկանց միջև շփումների ակտիվացման հետ: Դրա շնորհիվ աշխարհի որևէ կետում առաջացած գաղափարները, արվեստի նորույթները, ձևերը և ոճերն արագորեն հասանելի են դառնում աշխարհի ամենատարբեր, այդ թվում ամենահեռավոր մասերում ապրող մարդկանց:

Մեծացել է տարբեր մշակույթների փոխազդեցությունը, հաղթահարվում են անջրպետներն ու սահմանները: Աճել են քաղաքակիրթ բոլոր ժողովուրդների ստեղծած մշակութային արժեքները մշակույթի համաշխարհային գանձարանում ներդնելու հնարավորությունները:

Համաշխարհայնացման մասնագետները փորձում են գտնել մի այնպիսի մոդել, որը հնարավորություն կտա մերձեցնելու տարբեր ժողովուրդների մշակույթները: Ժամանակակից ուսումնասիրությունների շնորհիվ ապացուցվել է, որ որևէ մեկ քաղաքակրթության մշակութային արժեքները չեն կարող հավակնել բացարձակ և համատարած կիրառության: Ճապոնիայի, Չինաստանի, Հարավային Կորեայի, արաբական աշխարհի զարգացման առանձնահատկությունները վկայում են, որ Արևմուտքի մշակութային արժեքներն ի զորու չեն խախտելու Արևելքի երկրների՝ դարերի խորքից եկող ավանդույթները:

Ահա թե ինչու մեր օրերում տեղի է ունենում մշակույթի բոլոր ճյուղերի հասարակական դերի բարձրացում, արտադրության, սպասարկման ոլորտների ու կենցաղի հումանացում, վերադարձ վեհ գաղափարներին, համամարդկային և ազգային հիմնարար արժեքներին:

Ավանդական և գերարդիական ուղղությունների համադրման գործընթացը մշակույթի զարգացման նոր միտումներից է:

Համընդհանուր մշակույթի ձևավորման, ազգային և համամարդկային մշակույթների համադրման ու հակադրման այս միտումները կանխորոշում են մշակույթի զարգացման ընթացքը XXI դարում:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Զարգացման ինչ փուլերի է բաժանվում նորագույն շրջանի մշակույթը: Բնութագրե՛ք դրանցից յուրաքանչյուրը:
2. Պարզաբանե՛ք մշակույթի վերելքի պատմական պայմանները: Ինչ ազդեցություն ունեցան երկու աշխարհամարտերը մշակութային կյանքի վրա:
3. Բացատրե՛ք սոցիալիստական ռեալիզմի սկզբունքի էությունը:
4. Որո՞նք էին նորագույն շրջանի արվեստի և գրականության հիմնական ուղղությունները: Պարզաբանե՛ք «մոդեռնիզմ», «հետմոդեռնիզմ», «աբստրակցիոնիզմ» և «ավանգարդիզմ» հասկացությունների իմաստը:
5. Ինչ է զանգվածային մշակույթը: Որո՞նք են դրա առաջացման պատճառները: Ներկայացրե՛ք զանգվածային մշակույթի դրական և բացասական կողմերը:
6. Որո՞նք են մշակույթի զարգացման նոր միտումները XXI դարի սկզբին:
7. Մշակութային կյանքի համաշխարհայնացումը կհանգեցնի՞ արդյոք տարբեր ազգերի և ժողովուրդների մշակույթների համահարթեցմանը, թե՞ ոչ. հիմնավորե՛ք ձեր պատասխանը:

§ 3–4. ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ԴԱՐԱՇՐՋԱՆԸ

Կրթությունը՝ առաջընթացի կարևորագույն գործոն

Նորագույն շրջանի հասարակական առաջընթացը, ինչպես նաև մշակութային կյանքի հարափոփոխ երևույթները պայմանավորող կարևոր գործոն է դարձել կրթությունը:

Գիտության, տեխնիկայի և արտադրության, ինչպես նաև սպասարկման ու կառավարման ոլորտների զարգացումը 1920–1930–ական թթ. պահանջում էր աշխատուժի ընդհանուր գրագիտության մակարդակի բարձրացում, որակյալ մասնագետների պատրաստում: Ահա թե ինչու այդ ժամանակաշրջանում գլխավոր խնդիր էր դարձել բնակչության համընդհանուր գրագիտության ապահովումը հանրակրթության միջոցով: Այն սկզբում իրականություն դարձավ ԽՍՀՄ–ում, Հյուսիսային Ամերիկայում և Եվրոպայում, ապա սկսեց տարածվել

նաև անկախություն նվաճած Ասիայի և Լատինական Ամերիկայի երկրների վրա:

Հասարակական պահանջներին ու առաջընթացի ոգուն համապատասխան կրթական համակարգը շարունակաբար կատարելագործվում է: Արդի փուլում զարգացած և զարգացող երկրներում գործում են կրթության հիմնականում հետևյալ աստիճանները՝

1. *հանրակրթություն,*
2. *միջին մասնագիտական կրթություն,*
3. *բարձրագույն կրթություն,*
4. *հետբուհական կրթություն:*

Արդյունաբերական բոլոր երկրների կրթական համակարգերի զարգացումը Երկրորդ աշխարհամարտից հետո սերտորեն կապված էր ԳՏՀ-ի ծավալման և համաշխարհայնացման գործընթացների հետ: Արագորեն աճեց միջնակարգ և բուհական ուսումնական հաստատությունների քանակը, աստիճանաբար բարձրագույն կրթությունը մատչելի է դառնում բնակչության գրեթե բոլոր խավերի համար: Ակնհայտ է, որ փոխադարձ սերտ կախվածություն գոյություն ունի բարձրագույն կրթության, գիտատեխնիկական, սոցիալական առա-

Երևանի պետական համալսարանի կենտրոնական մասնաշենքը

ջընթացի և ազգային ու անձնական բարեկեցության միջև:

Արևմուտքի զարգացած երկրներում 25–60 տարեկան աշխատունակ բնակչության շրջանում մշտապես աճում է բարձրագույն կրթությամբ մասնագետների թիվը: Այսպես՝ 1990–ական թթ. սկզբին ԱՄՆ–ում այդ ցուցանիշը կազմում էր 35%, Ճապոնիայում՝ 21%, Գերմանիայում՝ 17%, Ֆրանսիայում՝ 14%, Իտալիայում՝ 6%: Այդ ընթացքում բանվորական աշխատուժի միջին պատրաստվածության մակարդակը հասավ քոլեջի մասնագետի աստիճանի: Արդի փուլում մասնագիտությունների մեծ մասի համար բարձրագույն կամ միջին մասնագիտական կրթությունը դարձել է պարտադիր պայման:

Այսպիսով՝ գիտելիքների վրա հենվող արդիական տնտեսության գործառնության և զարգացման պահանջներով պայմանավորված՝ կտրուկ մեծացել է կրթության դերը: Մեր օրերում հատկապես կարևորվում է մասնագիտական որակյալ կրթություն ստացած և բարձր կարողունակություն (կոմպետենտություն) ունեցող աշխատուժը, որը շարունակական կրթության կարիք ունի:

Այսօր երկրների մեծ մասի համար հրատապ են դարձել որակյալ մասնագետների պատրաստման խնդրի լուծումը և նրանց շարժունության ապահովումը:

Բիլ Գեյթսի ստեղծած «Մայքրոսոֆթ» ընկերության տարածաշրջանային գրասենյակը Քյոլնում

Դեռևս 1940–ական թթ. աշխարհի առաջատար տերությունները կրթությունը մտցրին իրենց արտաքին քաղաքականության օրակարգ, սկսեց ձևավորվել կրթական ծառայությունների համաշխարհային շուկան: 2005 թ. տվյալներով այդ շուկայում շրջանառվում էր 90 մլրդ դոլար, իսկ բուհերում սովորող օտարերկրյա ներկայացուցիչների թիվն ամբողջ աշխարհում անցնում էր 1,5 մլն–ից:

Տնտեսական, ֆինանսական և սպասարկման ոլորտներում համաշխարհայնացման գործընթացի ծավալումը պահանջում է նաև համապատասխան կադրերի առկայություն, որոնք աշխատելու են համաշխարհային շուկայում, օրեցօր ամրապնդվող տեղեկատվական և հեռահաղորդակցման համաշխարհային ցանցում: Այդ նպատակով ձևավորվում են համաշխարհային կրթական ցանցեր և կրթության տարածաշրջանային համակարգեր: Դրանցից է Եվրոպայում ձևավորված համակարգը, որը հայտնի է ***Բոլոնիայի գործընթաց*** անունով:

1999 թ. հունիսին իտալական Բոլոնիա քաղաքում 29 երկրների կողմից ընդունված հռչակագրով հայտարարվում էր, որ ստեղծվում է միասնական կրթական, առաջին հերթին՝ բարձրագույն կրթության ընդհանուր տարածք: Դրա գլխավոր նպատակն է ներդաշնակեցնել ազգային կրթական համակարգերը, փոխադարձաբար ճանաչելի դարձնել հանրակրթության և բարձրագույն կրթության որակավորումներն ու ավարտական դիպլոմների ներդիրները:

Բոլոնիայի գործընթացի շնորհիվ Եվրոպան աստիճանաբար դառնում է մրցունակ և գրավիչ համաշխարհային կրթական շուկայում՝ մրցակցելով աշխարհում հզոր բարձրագույն կրթություն ունեցող ԱՄՆ–ի հետ: Գործընթացի մասնակից երկրների թիվը 49 է. ընդգրկված է նաև մեկ ոչ եվրոպական երկիր՝ Ղազախստանը: Հայաստանի Հանրապետությունը 2005 թվականից գործընթացի լիիրավ մասնակից է: Ներկայումս վստահաբար կարելի է արձանագրել, որ ընդհանուր եվրոպական կրթական տարածքը իրականություն է դարձել և ամրապնդվելու միտում ունի:

Հաշվարկված է, որ առաջիկա տասը տարում այժմ օգտագործվող տեխնոլոգիաների և սարքավորումների մոտ 80 %–ը հնանալու է, իսկ այդ ժամանակ աշխատողների նույնքան տոկոսն էլ կունենա տասը և ավելի տարի առաջ ստացած կրթություն: Ահա թե ինչու աշխատուժի այդ հսկայական քանակությունը անհրաժեշտաբար և պարբերաբար պետք է ձեռք բերի նոր գիտելիքներ ու հմտություններ, այլապես կզրկվի աշխատատեղից: Իսկ նրանց մասնագիտական գիտելիքների և հմտությունների կատարելագործման, ինչպես նաև վերարակա-

վորման մշտական գործընթացներն իրականացվելու են գլխավորապես կրթական համակարգի միջոցով՝ լրացուցիչ և այլ կրթության կազմակերպմամբ:

Այսօր աշխարհում կրթության բնագավառի զարգացումն ընթանում է երկու գլխավոր գաղափարադրույթների ներքո՝ կրթություն բոլորի համար և կրթություն ամբողջ կյանքի ընթացքում:

Բնական և կիրառական գիտությունները 1920–1930–ական թթ.

Գիտության բնագավառում XIX դարի վերջերին և XX դարի սկզբներին կատարված բազմաթիվ հայտնագործությունները մարդկության պատմության համար ունեցան բախտորոշ նշանակություն: Դրանք նախապատրաստեցին նորագույն շրջանի գիտության հզոր վերելքն ու գիտատեխնիկական հեղափոխությունը:

Գիտության զարգացմանը լուրջ խթան հաղորդեց Առաջին աշխարհամարտը: Տեխնիկայի և այլ միջոցների կիրառումը նոր խնդիրներ էր դնում գիտնականների առջև: Զարգացած խոշոր երկրներում զգալի միջոցներ էին տրամադրվում գիտական հետազոտությունների համար:

Մեծ զարգացում ստացան բոլոր բնական գիտությունները: Սակայն առաջատար դարձավ **միջուկային ֆիզիկան:** Այս բնագավառում տեղի ունեցան հեղափոխական բնույթի հայտնագործություններ: Գիտնականներն ուսումնասիրեցին միկրոաշխարհը և ատոմի միջուկում հայտնաբերեցին մի շարք տարրական մասնիկներ (ֆոտոններ, էլեկտրոններ, պրոտոններ, պոզիտրոններ և նեյտրոններ): Հարաբերականության տեսությունը հնարավոր եղավ կիրառել միկրոաշխարհում շնորհիվ քվանտային մեխանիկայի, որը նոր, թերևս ամենախոշոր ուղղությունը եղավ XX դ. տեսական ֆիզիկայի բնագավառում:

1930–ական թվականների վերջերին գիտնականները հայտնագործեցին էներգիայի ստացման նոր եղանակ՝ ուրանի ատոմը ճեղքելու ճանապարհով, ինչպես նաև շղթայական ռեակցիան: Դա հնարավորություն տվեց ատոմը և նրանից ստացվող էներգիան օգտագործելու ինչպես խաղաղ, այնպես էլ ռազմական նպատակներով: Գիտական այս մեծագույն հայտնագործությունը հնարավոր եղավ նշանավոր գիտնականներ **Ն. Բորի, Մ. Պլանկի, Ժ. Կյուրիի, Լ. դը Բրոյլի, Է. Շրեդինգերի, Է. Ֆերմիի, Ի. Կուրչատովի, Ա. Ալիխանյանի** և այլոց շնորհիվ:

Շոգու էներգիային փոխարինեց էլեկտրաէներգիան, որը լայնորեն սկսեց կիրառվել տեխնիկայի, արդյունաբերության, տրանսպորտի, գյուղատնտեսության բնագավառներում և կենցաղում: Կառուցվեցին հզոր հիդրոէլեկտրակայաններ



Բոուլդեր Դամ հէկը. ԱՄՆ

աշխարհի տարբեր երկրներում, ինչպես **Բոուլդեր Դամը** ԱՄՆ-ում, **Դնեպրի հէկը** ԽՍՀՄ-ում և այլն: ԱՄՆ-ում սկսեց կիրառվել էլեկտրակայանների ավտոմատ կառավարման համակարգ: 1930-ական թվականների վերջերին նման համակարգ սկսեցին ներդնել նաև ԽՍՀՄ-ում: Ավտոմատ կառավարման համակարգն առաջին անգամ կիրառվեց Երևանի և Իվանկոյի հէկերում:

Մեծ զարգացում ստացավ մաթեմատիկան, որը հիմք դարձավ բնական մյուս գիտությունների բուռն զարգացման համար: Ձևավորվեցին ինքնատիպ մաթեմատիկական դպրոցներ ԱՄՆ-ում, Գերմանիայում, ԽՍՀՄ-ում, Ֆրանսիայում և այլուր: Մաթեմատիկոսներից աշխարհին լայնորեն հայտնի են XX դարի գիտնականներ **Ջ. Բերգհոֆի**, **Ն. Վիների** (ԱՄՆ), **Դ. Հիլբերտի** (Գերմանիա), **Ժ. Ադամարի**, **Ա. Լեբեգի** (Ֆրանսիա), **Մ. Կելդիշի**, **Մ. Լավրենտևի** (ԽՍՀՄ) անունները:

Ժամանակակից քաղաքակրթության խոշորագույն ձեռքբերումներից են **էլեկտրոնային հաշվիչ մեքենաների** ստեղծումն ու կիրառումը:

Մեծագույն նվաճումներ արձանագրվեցին **աստղագիտության** բնագավառում: Աստղագիտական դիտարկումները և հետազոտությունները հաստատեցին Տիեզերքի քիմիական միասեռության դրույթը և այն տեսակետը, որ աստղերը բաղկացած են Երկրի վրա առկա նույն տարրերից: Ժամանակակից աստղագիտության զարգացման գործում մեծ ավանդ ունեն նաև **Կ. Լունդմարկը**, **Բ. Լիոն**, **Ու. Ադամսը** և ուրիշներ: Աստղագիտության բնագավառում ձևավորվեց նոր ուղղություն՝ աստղաֆիզիկան, որի հիմնադիրներից է **Վիկտոր Համբարձումյանը:** Նա առաջ քաշեց ու հիմնավորեց աստղասփյուռների և գերխիտ միջուկի տեսությունները: Այդ ուղղությամբ այսօր էլ կարևոր աշխատանքներ են տարվում Հայաստանում՝ Բյուրականի աստղադիտարանում:

Զգալի հաջողությունների հասավ նաև քիմիական գիտությունը հատկապես սինթետիկ նյութերի ստացման գործում: Ձևավորվեց նոր ուղղություն՝ քիմիական ֆիզիկան,

կատարվեցին լուրջ աշխատանքներ պոլիմերների բնագավառում: Այս ասպարեզում մեծ են Ն. Սեմյոնովի, Մ. Հինշելվուդի, Ն. Կուրնակովի, Ն. Ենիկոլոպյանի և այլոց ծառայությունները:

Մեծ նվաճումներ ունեցավ ֆիզիոլոգիան, որտեղ առաջնային դերը պատկանում է Ի. Պավլովին, Լ. Օրբելուն և այլոց:

Զարգացում ապրեցին սահմանային գիտությունները՝ կենսաքիմիան, ֆիզիկական քիմիան, կենսաֆիզիկան, երկրաֆիզիկան, էլեկտրաքիմիան և այլն: Մեծ հաջողություններ արձանագրվեցին միկրոկենսաբանության և դեղագործության բնագավառում:

Գիտական վերոհիշյալ ուղղությունների հաջողությունները բարենպաստ նախադրյալներ ստեղծեցին բժշկագիտության զարգացման համար: Հատկապես ուշագրավ են հաջողությունները քիմիական ճանապարհով վիտամինների սինթեզման (Բ. Յանսեն, Վ. Դոնաթ և ուրիշներ), հակաբիոտիկների ուսումնասիրության (Ռ. Դյուբո, Ս. Վակսման, Ա. Ֆլեմինգ (պենիցիլինի հեղինակը)), մանրէաբանության և այլ բնագավառներում:

1920–1930-ական թթ. գիտական նվաճումներն արագացրին տեխնիկական առաջընթացը, և հենց այս ժամանակ հիմք դրվեց XX դարի գիտատեխնիկական հեղափոխությանը:

Գիտատեխնիկական հեղափոխության դարաշրջանը

Երկրորդ աշխարհամարտի ընթացքում Գերմանիայում, ԽՍՀՄ-ում, ԱՄՆ-ում և Անգլիայում լուրջ գիտական հետազոտություններ էին կատարվում, որոնք անմիջականորեն կապված էին ռազմական արդյունաբերության հետ:

Հետպատերազմյան շրջանում գիտության համակողմանի զարգացումը և գիտական նոր հայտնագործություններն իսկական հեղափոխություն առաջացրին տեխնիկայի բնագավառում, ինչի շնորհիվ կատարվեց նոր արդյունաբերական հեղաշրջում: **Գիտությունը հետպատերազմյան շրջանում արագորեն դարձավ արտադրողական ուժ:**

Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո սկսվեց ատոմակայանների կառուցումը ԽՍՀՄ-ում (առաջինն աշխարհում՝ 1954 թ.), ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում, Կանադայում և այլ երկրներում: Ատոմային էլեկտրակայան կառուցվեց նաև Հայաստանում՝ միակը Անդրկովկասում և ամբողջ Մերձավոր ու Միջին Արևելքում:

Տեխնիկայի բնագավառում մյուս կարևոր, հեղափոխական բնույթի նորությունը ներքին այրման շարժիչների համատարած կիրառումն էր ավտոմոբիլային, տրակտորային, ավիացիոն և արդյունաբերական այլ ճյուղերում: Այն լայն

կիրառում գտավ նաև ջրային տրանսպորտում և ռազմական տեխնիկայում:

Գիտական հայտնագործություններն արտադրության ոլորտում արագ ներդնելու շնորհիվ աննախընթաց զարգացում ապրեցին մեքենաշինությունը, սև և գունավոր մետալուրգիան, արդյունաբերության այլ ճյուղեր: Ստեղծվեցին նոր մեքենաներ, գերճշգրիտ հաստոցներ, ներդրվեցին հարահոս գծեր, ավտոմատ սարքեր և համալիրներ, այդ թվում՝ ռոբոտներ և նոր առաջավոր տեխնոլոգիաներ:

Գիտական հետազոտությունների համար մեծ հնարավորություններ բացեց **Նորբերտ Վիների** կողմից ստեղծված **կիբեռնետիկան**՝ նոր գիտություն հետադարձ կապի, տեղեկատվության ստացման, մշակման ու հաղորդման վերաբերյալ: **1976 թ. ստեղծվեց առաջին անհատական համակարգիչը**, որի շնորհիվ էապես մեծացավ մտավոր աշխատանքի ստեղծագործական ներուժը:

Զգալի թռիչք կատարեց ռադիոէլեկտրոնիկան. ստեղծվեցին նոր կարգի ռադիոսարքավորումներ և հեռուստացույցներ:

Խոշորագույն հայտնագործություններ կատարվեցին գենետիկայի և կենսատեխնոլոգիայի բնագավառներում:

Գիտական հետազոտությունների հիման վրա և արտադրության մեջ դրանց ծավալուն ներդրմամբ հնարավոր եղավ երկարաժամկետ օգտագործվող ապրանքների՝ սառնարանների, հեռուստացույցների և այլ կենցաղային իրերի զանգվածային արտադրություն սկսելը:

Տիեզերքի ուսումնասիրությունները գիտնականներին հնարավորություն ընձեռեցին ավելի հարստացնելու գիտելիքներն այդ բնագավառում: Նրանք սկսեցին տիեզերքն օգտագործել նոր գիտական հայտնագործությունների համար: Ժամանակա-

Տիեզերքի յուրացումը նպաստեց արբանյակային կապի արագ զարգացմանը:

կից կապի միջոցները հնարավոր չէ իրականացնել առանց արբանյակային կապի զարգացման:

Մեր օրերում բժշկագիտությունը մեծ ճիգեր է գործադրում հայտնագործելու դեղամիջոցներ և բուժման մեթոդներ ամենալայն տարածում գտած սրտանոթային հիվանդությունների և քաղցկեղի բուժման համար: Մարդկությանը սպառնում է նաև ձեռքբերովի իմունային անբավարարության համախտանիշ (ՁԻԱՀ) կոչվող հիվանդությունը:

Ժամանակակից հասարակության առաջընթացը, տնտեսության զարգացումն անհնար է պատկերացնել առանց գիտության զարգացման ու նրա նվաճումների կիրառման: Դրա շնորհիվ գիտությունն առանձին անհատների մենաշնորհներից վերածվել է գիտական հզոր կենտրոնների գործունեության: XX դարի կեսերից սկսած՝ արդյունաբերական երկրներում գիտահետազոտական և փորձարարական–կոնստրուկտորական աշխատանքները կենտրոնացվեցին **գիտահետազոտական ինստիտուտներում** և **կոնստրուկտորական բյուրոներում:** Խորհրդային Միությունում հայտնի էին **Տուպոլևի, Միկոյանի, Իլյուշինի** կոնստրուկտորական բյուրոները:

Մեր օրերում դրանց քանակն ու նշանակությունն անհամեմատ աճել են: Գիտահետազոտական ինստիտուտներում իրականացվում են գիտական աշխատանքներ և նախագծված արտադրանքի փորձնական արտադրություն, որից հետո միայն նոր արտադրատեսակները կամ տեխնոլոգիաները մուտք են գործում արդյունաբերություն: Այս կարգի աշխատանքների վրա **2008 թ.** ամբողջ աշխարհում ծախսվել է **մեկ տրիլիոն դոլարից ավելի գումար.** առաջին տեղը ծախսերի

Գենետիկայի և կենսատեխնոլոգիայի բնագավառում կատարված հայտնագործությունները լայն հնարավորություններ ստեղծեցին սահմանային գիտությունների զարգացման համար:

մեծությամբ զբաղեցնում է ԱՄՆ–ը, երկրորդը՝ Ճապոնիան, երրորդը՝ Չինաստանը:

Ընդունված տեսակետի համաձայն՝ 1970–ական թթ. գիտական տեղեկատվության ծավալը կրկնապատկվում էր յուրաքանչյուր 5–7 տարին մեկ անգամ, 1980–ական թթ.՝ յուրաքանչյուր 20 ամսվա ընթացքում, իսկ 1990–ական թթ. վերջին՝ ամեն տարի: Կուտակելով զգալի գիտական պաշարներ՝ մարդկությունը ձգտում է ավելի խորացնելու իր գիտելիքները, բացահայտելու նորանոր տեխնոլոգիաներ:

Հասարակական գիտությունները

Հասարակության և մարդու մասին գիտությունները հարստացան նոր տեսություններով ու գիտական հայեցակարգերով: Հասարակական գործընթացների իմաստավորումը տեղի էր ունենում սոցիալական ու քաղաքական կյանքի արմատական փոփոխությունների և գիտատեխնիկական առաջընթացի ազդեցության ներքո:

XX դ. սկզբներին **փիլիսոփայությունը** և հասարակական մյուս գիտությունները սկսեցին առաջնային տեղ հատկացնել նաև մարդու գիտակցության, մտածողության և ստեղծագործության, անհատի և զանգվածների հասարակական վարքագծի ուսումնասիրությանը: Առաջին աշխարհամարտը, Ռուսաստանում և այլ երկրներում տեղի ունեցած հեղափոխությունները ցույց տվեցին, որ մարդու էությունը, նրա հոգեկանը ավելի քիչ են ուսումնասիրված, քան բնությունն ու նյութական աշխարհը: Պատերազմը ապացուցեց, որ քաղաքակրթված մարդկանց հսկայական զանգվածներ կարող են օգտագործել գիտության նորագույն նվաճումները և ոչնչացնել միմյանց: Պատերազմական աղետն իր արտացոլումը գտավ նաև հասարակական գիտությունների մեջ:

Արևմտյան շատ փիլիսոփաներ, պատմաբաններ ու քաղաքագետներ սկսեցին ուսումնասիրել նաև նախկին Ռուսաստանյան կայսրության տարածքում տեղի ունեցած արմատական փոփոխությունները, պարզել բոլշևիկյան հեղաշրջման արմատները:

Աճեց հետաքրքրությունը հասարակական շարժումների, պատմության մեջ անհատների և զանգվածների դերի հանդեպ: Այս հարցերի ուսումնասիրությամբ էր զբաղվում նաև Արևմուտքում 1920–ական թթ. վերջին ձևավորված «Աննալներ» (ֆրանս.՝ տարեգրություն) **պատմագիտական դպրոցը:**

Մասնագետների և հանրության համար 1920–1930–ական թթ. մեծ հետաքրքրություն էին ներկայացնում մարդու վարքագծի և հոգեկանի ոչ բանական կողմերի վերաբերյալ

Արթուր Շոպենհաուեր



Ֆրիդրիխ Նիցշե



Զիգմունդ Ֆրոյդ

գերմանացի մտածողներ **Ա. Շոպենհաուերի** և **Ֆ. Նիցշեի** փիլիսոփայական հայացքները: Իսկ ավստրիացի բժիշկ **Զ. Ֆրոյդի** հոգեվերլուծության վերաբերյալ ուսմունքը կարևոր նշանակություն ունեցավ ոչ միայն մարդկանց բուժելու, այլև նրանց վարքագծի անգիտակցական կողմերը բացահայտելու առումով:

Նորագույն շրջանի հասարակագիտական մտքի պատմության մեջ ուրույն հետք են թողել նաև **խորհրդային պատմագիտությունը** և **փիլիսոփայությունը**: Ճիշտ է, խորհրդային հասարակական գիտությունները դրվել էին գաղափարական ու քաղաքական կաղապարների մեջ, ինչը կաշկանդում էր ազատ մտածողությունը և անաչառությունը, սակայն նույնիսկ այդ պայմաններում գրվեցին արժեքավոր շատ աշխատություններ:

Ճանաչողության և գեղարվեստական մշակույթի առանձնահատկությունները պարզաբանելու համար մեծ դեր խաղաց նաև ֆրանսիացի փիլիսոփա **Ա. Բերգսոնի՝** ինտուիցիայի մասին ուսմունքը:

Եվրոպայում և ԱՄՆ-ում այս ժամանակաշրջանում զարգացում էր ապրում գիտության մի նոր ճյուղ՝ **սոցիոլոգիան**: Այն գիտություն է հասարակության բազմակողմանի զարգացման, սոցիալական խմբերի հարաբերությունների և մարդկանց հասարակական վարքի մասին: Այդ բնագավառում լայն ճանաչում գտավ գերմանացի գիտնական **Մ. Վեբերը**:

Նորագույն շրջանի ամենատարածված փիլիսոփայական ուղղություններից է **էքզիստենցիալիզմը**, որի հիմնադիրներն էին գերմանացիներ **Մ. Հայդեգերը**, **Կ. Յասպերսը** և ֆրանսիացի **Ժ. Սարտրը**: Հակադրվելով մարդու մասին մարքսիստական և դրապաշտական մոտեցումներին՝ նրանք պնդում էին, որ ազատ է ոչ թե այն մարդը, որը ձևավորվում է բնական կամ սոցիալական անհրաժեշտության ազդե-

ցությամբ, այլ նա, որը ինքն է իրեն ձևավորում: Այս ուղղությունը տիրապետող դարձավ գրականության և արվեստի մեջ:

Մեր օրերում փիլիսոփայական և հասարակական մյուս գիտությունների ասպարեզում շոշափելի է նաև գիտատեխնիկական հեղափոխության ազդեցությունը: Հասարակական գիտությունների ժամանակակից ուղղությունները հարստանում են տեղեկատվական հասարակության նոր գաղափարներով: Մարդկության պատմությունը դիտարկվում է որպես բուռն վերելքի որոշընթաց, որը նրան դուրս է բերում քաղաքակրթության բոլորովին նոր մակարդակ: Օրինակ՝ **Է. Թոֆլերը** հասարակության պատմությունը ներկայացնում է զարգացման հետևյալ երեք ալիքների տեսքով՝ *ագրարային քաղաքակրթություն, արդյունաբերական հասարակություն և տեղեկատվական հասարակություն:*

Հետաքրքրություն են առաջացրել նաև ամերիկացի գիտնականներ Ֆ. Ֆուկայամայի և Ս. Հանթինգթոնի հայեցակարգերը պատմության և քաղաքակրթությունների ապագայի վերաբերյալ:

Ժամանակակից փիլիսոփայության առանձնահատկությունն այն է, որ չկա որևէ ազդեցիկ, համընդհանուր ճանաչում գտած ուղղություն: Այդ բնագավառում գոյություն ունեցող ամեն մի ուղղություն առաջնորդվում է միայն իր

Էլվին Թոֆլեր

գաղափարներով: Ուսումնասիրողների ուշադրության կենտրոնում են մարդու կյանքի, երջանկության, բարօրության, ինքնաճանաչման և ինքնահաստատման հարցերը:

Փոփոխություններ մարդկանց ապրելակերպում

Նորագույն շրջանում էականորեն փոխվել են մարդկանց կյանքի պայմանները, կենցաղը, նրանց ապրելակերպը և մտածողությունը:

1920–1930-ական թթ. մարդկանց կենցաղ մուտք գործեցին հեռախոսը, ռադիոն, ավտոմեքենան, ապա՝ հեռուստացույցը, սառնարանը, փոշեկուլը: Քաղաքներում տարածում գտան էլեկտրական լուսավորությունը, հեռախոսային և հեռագրային կապը, նոր փոխադրամիջոցները, շենքերում՝ վերելակները: Ձևավորվեց «ժամանցի արդյունաբերությունը»՝ կինոթատրոններ, մարզադաշտեր, համերգային և պարային դահլիճներ, համալիրներ:

Ռադիոընդունիչների տարբեր սերունդների այս հազվագյուտ նմուշները ցուցադրված են Էլեկտրականության թանգարանում (Ֆրանսիա):

Ավելի գործնական ու բազմազան դարձավ նորաձևությունը: Իր հաղթարշավն էր սկսում զանգվածային մշակույթը:

Հետարդյունաբերական հասարակության շրջանում բավական արագորեն են փոխվում մարդկանց ապրելակերպը և հասարակական գիտակցությունը: Արևմուտքի զարգացած երկրներում որակապես նոր կառուցվածք է ստացել բնակչության սոցիալական կազմը, մեծացել է մտավորականության դերը հասարակության մեջ, բարձր որակավորում ունեցող մասնագետներն ու կառավարիչները արտադրության գլխավոր հենասյուներից են:

ԳՏՀ–ի դարաշրջանում տեղի ունեցած որակական զարգացումները ձևավորեցին միլիոնավոր մարդկանց նոր կենսակերպը: Ի հայտ եկավ **արժեքների նոր համակարգ:** Արդեն ասվել է, որ մեր օրերում շատ աշխատողների համար առաջնային է ոչ թե նյութական վարձատրությունը, այլ ստեղծագործաբար աշխատելը և իր երազանքներն իրագործելը:

Գիտատեխնոլոգիական և սոցիալական առաջընթացը հանգեցրել է ժամանակի և տարածության մասին նոր պատկերացումների: Հեռահաղորդակցման արդիական միջոցներն ու հնարավորությունները տեղեկատվությունը վայրկենապես հասցնում են աշխարհի ցանկացած վայր՝ մարդկանց մեջ ձևավորելով միաժամանակության և ամենուրեքության զգացողություններ: Մարդը ընդունակ է դարձել միաժամանակ լինելու իր ֆիզիկական ներկայության փաստացի վայրից հեռու տարբեր վայրերում և մասնակցելու տարբեր իրադարձությունների:

Հասարակական գիտակցության մեջ ամրակայվել է հասարակության աստիճանական զարգացման գաղափարը: Նախորդ շրջանում տիրապետող **սոցիալական հակամարտությանը և պայքարին փո-**

խարինելու են եկել փոխգիջման, համակեցության ու համագործակցության սկզբունքները:

Համամարդկային շահերի գիտակցումը, բոլոր ազգերի ու ժողովուրդների մշակութային ժառանգության պահպանումն ու զարգացումը, արդիականության համընդհանուր հիմնախնդիրների լուծման անհրաժեշտությունը դարձել են ժամանակակից մարդու մտածելակերպի և գործելակերպի բնութագրիչներ:

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Պարզաբանեք կրթական համակարգի շարունակական զարգացման պատճառները նորագույն շրջանում: Ինչ աստիճաններից է կազմված արդի կրթական համակարգը: Ինչ դեր է խաղում բարձրագույն կրթությունը մարդկանց կյանքում: Երբ է սկսվել Բոլոնիայի գործընթացը, ո՞րն է դրա գլխավոր նպատակը: Որո՞նք են կրթության բնագավառի զարգացման արդի երկու գաղափարադրույթները. փորձեք պարզաբանել դրանց էությունը:
2. Ներկայացրեք գիտության զարգացման ընթացքը XX դ. առաջին կեսին: Բնական և կիրառական գիտությունների ի՞նչ նոր ուղղություններ առաջացան: Անվանի՞ ինչ գիտնականների գիտեք. նրանցից որևէ մեկի մասին պատրաստեք ելույթ և ներկայացրեք դասարանում:
3. Գիտության մեծագույն նվաճումները XX դ. երկրորդ կեսին ինչո՞վ էին պայմանավորված: Վերհիշեք, թե ինչ է գիտատեխնիկական հեղափոխությունը:
4. Կազմեք աղյուսակ և ներկայացրեք գիտության տարբեր բնագավառների նվաճումները XX դարում: Օրինակներով ցո՛ւյց տվեք հայ գիտնականների ներդրումը համաշխարհային գիտության մեջ:
5. Որո՞նք են նորագույն շրջանի փիլիսոփայության հիմնական ուղղությունները և ուսումնասիրության գլխավոր հարցերը: Ներկայացրեք հասարակական մյուս գիտությունների զարգացման ընթացքը, ի՞նչ նվաճումներ արձանագրեց հասարակական միտքը:
6. Վերհանեք նորագույն շրջանում մարդկանց ապրելակերպում և մտածողության մեջ տեղի ունեցած փոփոխությունների հիմնական պատճառները:
7. Փորձեք բնութագրել և ներկայացնել ժամանակակից մարդուն:

§ 5. ԳԵՂԱՐՎԵՍՏԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԸ

Մարդու մտավոր կյանքը ձևավորում են երկու մշակույթներ՝ գիտական և գեղարվեստական: Գիտությունը, դառնալով առաջընթացի հզորագույն գործոն, չի կարող միայնակ և ամբողջովին լցնել մարդու հոգևոր աշխարհը: Արվեստը պատկերավորման զանազան միջոցներով տալիս է մարդուն մշտապես հուզող այնպիսի հարցերի պատասխաններ, ինչպիսիք են կյանքի իմաստը, խիղճը և պարտքը, բարին և չարը, գեղեցիկը, սերը, արդարությունը, ազատությունը և այլն:

Գրականությունը

Արևմտյան քաղաքակրթության ճգնաժամը, որը խորությամբ դրսևորվեց Առաջին աշխարհամարտով, իր արտացոլումը գտավ նաև գեղարվեստական գրականության մեջ: Մեծապես ազդվելով մահաբեր պատերազմից և կանխազգալով ապագայի սոցիալական ցնցումները՝ բազմաթիվ ստեղծագործողներ, հատկապես գրողներն ու բանաստեղծները ընկել էին հոռետեսության կամ ձանձրույթի գիրկը: Նրանք կանգնել էին մարդասիրության և արդարության մասին պատկերացումների վերաիմաստավորման անհրաժեշտության առջև: Այդ հանգամանքը այս կամ այն չափով իր կնիքը թողեց նրանց աշխարհայացքի վրա:

Գրական թեմատիկայում զգալի տեղ զբաղեցրին սոցիալական խնդիրներն ու հակասությունները: Գրողներն անդրադառնում էին հասարակության մեջ գոյություն ունեցող անարդարություններին, ստեղծագործող անհատի ճակատագրին և այլն:

Հանրահայտ **Ռոմեն Ռոլանը** գրեց մի շարք կենսագրական աշխատություններ ականավոր նկարիչների ու երաժիշտների մասին:

Անատոլ Ֆրանսը տպագրեց մի քանի հակաբուրժուական վեպեր: Ամերիկյան գրողներ **Ֆրանկ Նորիսը, Էփթոն Սինկլերը, Թեոդոր Դրայզերը, Ջոն Սթայնբեքը** ստեղծեցին քննադատական իրապաշտության խոշոր գործեր:

Բեռնարդ Շոուի գործերի շնորհիվ դրամատուրգիան դուրս բերվեց գաղափարական ու գեղարվեստական նոր ուղու վրա: Այդ ժանրում նորարարներ դարձան նաև նորվեգացի **Հենրիկ Իբսենը** և գերմանացի **Գերհարտ Հաուպտմանը:**

Հանրաճանաչ գրողներ **Թոմաս Մանը** և **Ջոն Գոլսուորդին** դարձան, այսպես կոչված, ընտանեկան վեպերի հեղինակներ, որոնց միջոցով խարազանվում էին բուրժուական հարաբերությունները:

1920-ական թվականներին երևան եկավ երիտասարդ տաղանդավոր գրողների մի համաստեղու-

Firefox https://ebooks.bonee.net/fumf/rtvo/



Բեռնարդ Շոու



Ռոմեն Ռոլան

թյուն՝ **Էռնեստ Հեմինգուեյ, Էրիխ Ռեմարկ, Ռիչարդ Օլդինգտոն,** որոնք իրենց ստեղծագործություններում բողոք էին հայտնում Առաջին աշխարհամարտի մարդկային ահավոր սպանդի դեմ:

Մոդեռնիզմի ուղղության գրողներ **Ֆրանց Կաֆկայի** և **Մարսել Պրուստի** խոշոր գործերը մեծ ազդեցություն թողեցին գրականության զարգացման վրա:

Նոր ձևավորվող խորհրդային գրականության հիմնական թեման հեղափոխության և քաղաքացիական պատերազմի, նոր հասարակարգի կառուցման հարցերն էին: Դրանց էին նվիրված **Միխայիլ Շոլոխովի** «Խաղաղ Դոն», **Ալեքսեյ Տոլստոյի** «Տառապանքի ուղիներով», **Ալեքսանդր Ֆադեևի** «Ջախջախում» և այլ գեղարվեստական գործեր: Իսկ պոեզիայում (**Վլադիմիր Մայակովսկի, Եղիշե Չարենց** և այլն) տիրապետող էր հեղափոխական պաթոսը:

Երկրորդ աշխարհամարտից հետո առաջին մի քանի տարիների հասարակական-քաղաքական վերելքը գրականության մեջ և արվեստում բերեց իրապաշտական ավանդույթների զորեղացում: Գրական նոր գործերով հանդես եկան համաշխարհային ճանաչում գտած **Թ. Մանը, Է. Ռեմարկը:**

ԱՄՆ-ում շարունակում էին ստեղծագործել հանրաճանաչ

98 von 130 16.02.2021, 09:03

գրողներ **Ու. Ֆոլկները** և **Է. Հեմինգուեյը:** Նրանք գրականության ասպարեզում արժանացան Նոբելյան մրցանակի:

Մոդեռնիստական գրականության մեջ առաջնային տեղ էին զբաղեցնում **Ժան Պոլ Սարտրը** և **Ալբեր Քամյուն:**

XX դ. կեսերին մեծ տարածում գտավ ֆրանսիացի գրող և փիլիսոփա Ժան Պոլ Սարտրի հիմնած ուղղությունը, որը ստացավ **էքզիստենցիալիզմ** անվանումը: Ըստ այդ տեսության՝ մարդն իր էությամբ միայնակ է և ազատ՝ ընտրելու իր կյանքի ուղին: Ա. Քամյուն 1957 թ. արժանացավ Նոբելյան մրցանակի: 1964 թ. Նոբելյան մրցանակ շնորհվեց նաև Սարտրին, որից, սակայն, գրողը հրաժարվեց:

1960–ական թվականներից աշխարհում ամենակարդացվող հեղինակներից էին լատինաամերիկյան ավանգարդիզմի ներկայացուցիչներ **Գաբրիել Գարսիա Մարկեսը, Խորխե Բորխեսը, Խուլիո Կորտասարը:**

Խորհրդային Միությունում «ձնհալի» շրջանում հայտնվեց երիտասարդ գրողների, հատկապես բանաստեղծների մի բույլ՝ **Եվգենի Եվտուշենկո, Ռոբերտ Ռոժդեստվենսկի, Բելա Ախմադուլինա, Պարույր Սևակ** և ուրիշներ: Նրանք համարձակորեն առաջ էին քաշում սոցիալ–քաղաքական հարցեր և շատ հաճախ հակասության մեջ էին մտնում իշխող կուսակցական–

Նոբելյան մրցանակի դափնեկիր Ալեքսանդր Սոլժենիցինը 20 տարվա տարագրությունից հետո 1994 թ. վերադարձավ հայրենիք:

պետական վերնախավի հետ: Չնայած խիստ գրաքննությանը՝ նրանք արժեքավոր գործեր ստեղծեցին, իսկ **Ալեքսանդր Սոլժենիցինը, Իոսիֆ Բրոդսկին** խորհրդային կառավարության որոշմամբ արտաքսվեցին երկրից:

Արվեստը

Նորագույն շրջանի արվեստն աչքի է ընկնում իր բազմազանությամբ ու նորույթներով: Ստեղծագործական ու աշխարհայացքային որոնումների մեջ էին նկարիչները, քանդակագործները և երաժիշտները: Նրանց չէին բավարարում հին՝ դասական արվեստի ձևերն ու ոճերը: Սկիզբ են առնում նոր,

ինչպես նաև զարգանում նախորդ շրջաններից եկող ուղղություններ:

1920-ական թթ. հաստատուն քայլերով կյանք մտավ կինոարվեստը, որն աննկարագրելի ժողովրդականություն է վայելում: Համր կինոյին, որի անգերազանցելի բարձունքը մնաց **Չարլզ Չապլինը**, փոխարինելու եկավ **հնչյունային կինոն**, որի առաջնեկ՝ «Ջազային երգիչը» ժապավենի ցուցադրումը կայացավ **1927 թ.**: Կինոարվեստում փայլատակեցին նաև **Անդրե Դիդը, Մաքս Լինդերը, Մերի Փիկֆորդը**:

Կինոարվեստը նոր վերելք ապրեց Երկրորդ աշխարհամարտից հետո: **Նորիրապաշտական** (նեոռեալիզմ) ուղղության գլուխգործոցներ դարձան իտալական կինոռեժիսորներ **Ռ. Ռոսելինիի, Վ. դե Սիկայի, Լ. Վիսկոնտիի, Ջ. դե Սանտիսի** նկարահանած ֆիլմերը: Ընդհանրապես, իտալական կինոդպրոցը համաշխարհային մեծ հռչակ է վայելում:

Հոլիվուդը դարձավ կինոարտադրության համաշխարհային կենտրոնը: Միջազգային մեծ ճանաչում ստացան կինոռեժիսորներ **Ս. Կուբրիկը, Ռ. Մամուլյանը, Ս. Քրամերը, Ս. Սփիլբերգը, Ֆ. Կոպպոլան** և ուրիշներ: Ճապոնական կինոյին մեծ հռչակ բերեցին **Ա. Կուրոսավայի**, իսկ շվեդականին՝ **Ի. Բերգմանի** գեղարվեստական ֆիլմերը:

Կինոարվեստի երկնակամարում փայլատակեցին այնպիսի աստղեր,



Դրվագ Չարլզ Չապլինի «Փոքրիկը» ֆիլմից, 1921 թ.

Մերի Փիկֆորդը նկարահանման հրապարակում, 1916 թ.

ինչպիսիք էին **Գրետա Գարբոն, Մերիլին Մոնրոն, Մառլոն Բրանդոն** (ԱՄՆ), **Աննա Մանյանին, Սոֆի Լորենը, Մարչելո Մաստրոյանին** (Իտալիա), **Ժան Գաբենը, Բրիջիտ Բարդոն** (Ֆրանսիա), **Վիվիեն Լին, Չարլզ Լաֆտոն** (Անգլիա) և այլն:

Արվեստի այդ բնագավառում փայլուն գործեր ստեղծեցին նաև ԽՍՀՄ-ի, Լեհաստանի և Ֆրանսիայի կինեմատոգրաֆիստները: **Ս. Փարաջանովի, Ա. Տարկովսկու** շնորհիվ կինոարվեստը հասավ նոր բարձունքների:

Ոճերի ու ձևերի բազմազանությամբ աչքի է ընկնում նաև **երաժշտական արվեստը**:

1920-ական թվականներին սկսվեց և հետագա տարիներին տեղի ունեցավ ջազի հաղթարշավը աշխարհով մեկ՝ տալով այնպիսի դեմքեր, ինչպիսիք են **Բենի Գուդմանը, Լուի Արմսթրոնգը, Էլլա Ֆիցջերալդը** և շատ ուրիշներ: Իսկ ԽՍՀՄ-ում մեծ հեղինակություն էին վայելում **Լեոնիդ Ուտյոսովի, Օլեգ Լունդստրեմի, Արտեմի Այվազյանի** և **Էդի Ռոզների** ջազային նվագախմբերը:

Էլլա Ֆիցջերալդ

Սերգեյ Փարաջանովի թուն-թանգարանը Երևանում

Նոր ուղղություն էր **ռոք երաժշտությունը**, որը 1960-ական թթ. ԱՄՆ-ից հեղեղի նման տարածվեց ամբողջ աշխարհով մեկ:

Երաժշտական կյանքի վրա իրենց անջնջելի կնիքն են դրել այնպիսի հանճարեղ կոմպոզիտորներ, ինչպիսիք են **Ս. Պրոկոֆիևը, Դ. Շոստակովիչը** և **Ա. Խաչատրյանը:**

Նորագույն շրջանի երգարվեստի ամենափայլուն ներկայացուցիչներից են երգիչներ **Էդիտ Պիաֆը, Շառլ Ազնավուրը, Իվ Մոնտանը** Ֆրանսիայում, **Ֆրենկ Սինատրան, Էլվիս Փրեսլին** ԱՄՆ-ում, **Էլթոն Ջոնը** Անգլիայում և այլն:

Թատերական արվեստում իր թարմությամբ և նորույթով փայլատակեց **Բ. Բրեխտի** թատերական դպրոցը: 1927 թվականին Բերտոլդ Բրեխտը Գերմանիայում իրականացրեց «Երեքգրոշանոց օպերայի» բեմադրությունը: Իր ինքնատիպ բեմականացումներով համաշխարհային հռչակ ձեռք բերեց խորհրդային թատերական արվեստը:

Էլվիս Փրեսլին և ԱՄՆ նախագահ Ռիչարդ Նիքսոնը Սպիտակ տանը, 1970 թ.

XX դարի առաջին կեսի գեղա-

Արամ Խաչատրյանի արձանը Երևանում

նկարչության ավանգարդիստական ուղղության մեջ տարածում գտավ **կուբիզմը:** Այդ հոսանքի հիմնադիրներն էին **Պաբլո Պիկասոն** և **Ժորժ Բրակը:** Կուբիզմի ներկայացուցիչները աշխարհը պատկերում էին պարզ երկրաչափական կառուցվածքների ձևով՝ աղավաղելով առարկաների իրական տեսքը:

Այս շրջանի գեղարվեստական մշակույթի հայտնի ուղղություններից է **էքսպրեսիոնիզմը** (լատ. expressio՝ արտահայտչականություն), որը արվեստի գլխավոր նպատակ էր հռչակել մարդու հոգևոր աշխարհի պատկերումը: Դրան բնորոշ են իրական առարկաների ծայրահեղ սուբյեկտիվ ընկալումը, ձևախեղված պատկերումը և գունային պայմանականությունը: Այդ ուղղության ներկայացուցիչներից են գերմանացի նկարիչներ **Է. Կիրխները և Է. Նոլդեն:**

Խորհրդային կերպարվեստի բնագավառում **Մ. Սարյանի, Դեյնեկայի, Ե. Քոչարի, Է. Նեիզվեստնիի** և այլ մեծերի կողքին հայտնվեց շնորհաշատ նկարիչների ու քանդակագործների մի ամբողջ սերունդ:

Ավանգարդիստական հոսանքներից է նաև Իտալիայում ձևավորված **ֆուտուրիզմը** (լատ. futurum՝ ապագա բառից), որի տիպիկ ներկայացուցիչներից էին **Գ. Սևերինին** և **Ու. Բոչչոնին:** Ֆուտուրիստները ձգտում էին գեղանկարչության և քանդակագործության մեջ արտահայտելու ժամանակի և դրա հետ կապված շարժման գաղափարը: Ֆուտուրիստների ստեղծագործության մեջ դա արվում էր մեխանիկորեն. օրինակ՝ վազող ձին պատկերվում էր ոչ թե չորս, այլ տասներկու ոտքով՝ շարժման տարբեր փուլերի «համատեղման» հետևանքով:

Այս շրջանում առաջանում է մոդեռնիստական նոր ուղղություն՝ **վերացականությունը** (աբստրակցիոնիզմ), որը մեծ տարածում գտավ ամենից առաջ ԱՄՆ–ում և հատկապես 1940–1960–ական թթ.: Վերացական նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ բոլորովին զրկված առարկայությունից: Այդ ուղղության հիմնադիրներից է **Վ. Կանդինսկին:** Նրա կարծիքով նկարի մեջ առաջնայինը ոչ թե թեման է, այլ գունային համադրությունները, գունային սիմվոլիկան:

XX դարի ավանգարդիստական ուղղության խոշոր հոսանք է **սյուրռեալիզմը** (ֆրանսերեն surrealism՝ գերռեալիզմ): Այս ոճի հետևորդները առարկաներին տալիս են իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը: Սյուրռեալիզմի խոշոր ներկայացուցիչներն են **Ս. Դալին, Խ. Միրոն և Իվ Տանգին:**

Լատինական Ամերիկայի արվեստում տեղի ունեցած խոշոր փոփոխություններն անմիջականորեն կապված էին մեքսիկական «Մեծ եռյակի» գործունեության հետ: **Դ. Սիկեյրոսը, Դ. Ռիվերան,**

Խ. Օրոսկոն ստեղծեցին կոթողային գեղանկարչության նմուշներ:

Հետպատերազմյան երկու տասնամյակների ընթացքում կերպարվեստում առաջատար դեր էին կատարում Նյու Յորքի ու եվրոպական դպրոցները: Առաջին դպրոցի փայլուն ներկայացուցիչներ են **Ջ. Փոլոքը, Արշիլ Գորկին** և այլք: Եվրոպական դպրոցը հիմնականում ներկայանում է հայտնի վարպետներով՝ **Պ. Պիկասո, Ա. Մատիս, Ֆ. Լեժե, Ս. Դալի, Մ. Շագալ:**

1960-ական թվականներին ամերիկյան էքսպրեսիոնիզմին որպես հակակշիռ ստեղծվեց **փոփ-արթը:** Նրա կողմնակիցների կարծիքով ամեն իր կարող է արվեստի առարկա լինել: Նշված ուղղության առավել հայտնի վարպետներ են **Ռ. Ռաուշենբերգը, Ջ. Ջոնսը, Կ. Օլդենբուրգը:**

Այս տարիներին ասպարեզ եկավ նաև **օպ-արթը** (օպտիկական արվեստը): Օգտագործելով տարբեր բարդ սարքավորումներ՝ օպտիկական արվեստի ներկայացուցիչները ստեղծում էին շարժման և ռիթմի պատրանք, որի շնորհիվ հասնում էին տեսողական՝ գունային և ռիթմային տարբեր էֆեկտների: Խոշոր ներկայացուցիչներից է **Վ. Վազարելին:**



Վիկտոր Վազարելիի թանգարանը Ֆրանսիայում

Պաբլո Պիկասո. «Գեռնիկա», 1937 թ.
Այս ստեղծագործությամբ նկարիչն արտահայտում է իր ցասումը ֆաշիզմի ոճրագործությունների դեմ:

Սալվադոր Դալի. «Հիշողության հարատևությունը», Ժամանակակից արվեստի թանգարան, Նյու Յորք, 1931 թ.
Դալիի ստեղծագործություններում անբնական իրավիճակներն ու իրերի անհեթեթ համադրումներն ունեն երևութական վավերականություն: Նկարում պարզ և որոշակի ներկայացված է ժամանակի և հիշողության հարաբերական լինելը:

1970–1980–ական թվականներին տեղի է ունենում ճարտարապետական մտքի վերակողմնորոշում: Հետմոդեռնիստական ուղղության ներկայացուցիչներն են աշխարհաճանաչ ճարտարապետներ **Լը Կորբյուզիեն, Վան դեր Ռոեն, Վ. Գրոպիուսը, Ֆ. Ռայթը:** Նույն այդ ժամանակահատվածում ճանաչում է գտնում **հայտեք** (բարձր տեխնոլոգիա) ճարտարապետական ուղղությունը, որը շինարարության ժամանակ օգտագործում է տեխնիկական միջոցներ և տարբեր տեսակի կառուցվածքներ:

Երկնաքեր Չիկագոյում, ԱՄՆ, ճարտարապետ՝ Վան դեր Ռոե

ՀԱՐՑԵՐ ԵՎ ԱՌԱՋԱԴՐԱՆՔՆԵՐ

1. Թվարկե՛ք XX դարի գրականության տիրապետող ուղղությունները: Այդ շրջանի հայտնի հեղինակների ի՞նչ ստեղծագործությունների եք ծանոթ: Պատրաստե՛ք փոքրիկ ելույթ որևէ հեղինակի և նրա ստեղծագործության մասին: Ի՞նչ ներդրում են ունեցել հայ հեղինակները գրականության ասպարեզում:
2. Թվարկե՛ք նորագույն շրջանի արվեստի տիրապետող ուղղությունները և հոսանքները: Հայտնի հեղինակների ի՞նչ ստեղծագործությունների եք ծանոթ:
3. Համեմատե՛ք սոցիալիստական և արևմտյան մշակույթները, նշե՛ք նմանություններն ու տարբերությունները:
4. Համաշխարհային ճանաչում ունեցող ի՞նչ հայ հեղինակների գիտեք՝ ա) գրականության, բ) երաժշտության, գ) կինոյի, դ) կերպարվեստի բնագավառում: Պատրաստե՛ք ելույթ նրանցից որևէ մեկի մասին:

Firefox https://ebooks.bonee.net/fumf/rtvo/

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ



Հավելված 1

Հատվածներ ԱՄՆ–ի նախագահ Վ. Վիլսոնի՝ Դաշնակից տերությունների Գերագույն խորհրդի նախագահին ուղղված նամակից.

Գերագույն խորհրդի սույն թվականի ապրիլի 26–ի որոշմամբ ինձ փոխանցվեց պաշտոնական առաջարկ՝ որոշելու Թուրքիայի և Հայաստանի նորաստեղծ հանրապետության միջև սահմանների խնդիրը: Սույն թվականի օգոստոսի 10–ին Սևրի պայմանագիրը ստորագրող տերությունների ներկայացուցիչները համաձայնության եկան ինձ լիազորելու այդ պատիվը և հայտնեցին իրենց պատրաստակամությունը՝ ընդունելու այն սահմանները, որոնք իմ կողմից կորոշվեն, ինչպես նաև համաձայնագրին ցանկացած այլ հավելում, որոնք ես կառաջարկեմ, որպեսզի Հայաստանը ելք ունենա դեպի ծով, և ցանկացած միջոցառում՝ այդ կերպ որոշված սահմանի երկարությամբ թուրքական տարածքը ապառազմականացնելու: Համաձայն Սևրի պայմանագրի 3–րդ մասի 6–րդ բաժնի 89–րդ հոդվածի՝ իրավարար վճռի պայմանների ինձ տրված միջնորդային լիազորությունը հստակորեն սահմանափակում է Թուրքիայի և Հայաստանի միջև սահմանը գծել Էրզրումի, Տրապիզոնի, Վանի և Բիթլիսի նահանգներով: (...) Իրավարար վճռի սահմանափակումը Հաշտության պայմանագրի 89–րդ հոդվածում նշված չորս նահանգներով կարծես պարտավորեցնում ու պարտադրում է, որ հայկական պետությանը այս նահանգների սահմաններում տրվի հնարավորինս լայն տարածք՝ միևնույն ժամանակ նորաստեղծ պետության համար ապահովելով համարժեք բնական սահմանի և աշխարհագրական ու տնտեսական ամբողջականության պահանջները...

Վաշինգտոն, 22 նոյեմբերի, 1920 թ.

107 von 130 16.02.2021, 09:03

Firefox https://ebooks.bonee.net/fumf/rtvo/

Հավելված 2

Ուինսթոն Չերչիլի ասույթներն ու աֆորիզմները

◆◆◆

Դիվանագետն այն անձն է, որ երկու անգամ կմտածի նախքան ոչինչ չասելը:

◆◆◆

Քաղաքական գործիչը պետք է կարողանա կանխատեսել, թե ինչ տեղի կունենա վաղը, մեկ շաբաթ անց, մեկ ամիս անց և մեկ տարի անց: Իսկ հետո կարողանա բացատրել, թե ինչու դա տեղի չունեցավ:

◆◆◆

Ավելի լավ է կերտել նորությունները, քան պատմել դրանց մասին:

◆◆◆

Չափից դուրս հեռուն նայելն անհեռատեսություն է:

◆◆◆

Քաղաքականությունը նույնքան գրավիչ է, որքան պատերազմը: Պատերազմում ձեզ կարող են սպանել մեկ անգամ, իսկ քաղաքականության մեջ՝ բազմիցս:

◆◆◆

Կապիտալիզմի գլխավոր թերությունը բարիքների անհավասար բաշխումն է, իսկ սոցիալիզմի գլխավոր առավելությունը՝ զրկանքների հավասար բաշխումը:

◆◆◆

Պետական գործիչը տարբերվում է քաղաքական գործչից նրանով, որ քաղաքական գործիչը կողմնորոշվում է դեպի հաջորդ ընտրությունները, իսկ պետական գործիչը՝ դեպի հաջորդ սերունդը:

◆◆◆

Գեներալները միշտ պատրաստվում են նախորդ պատերազմին:

◆◆◆

Ժամանակը վատ դաշնակից է:

108 von 130 16.02.2021, 09:03

Հավելված 3

XX և XXI դարերի ամերիկյան նախագահները

Նախագահի անունը, կառավարման թվերը	*Տարիքը նախագահ ընտրվելու պահին*	*Կրոնական և դավանական պատկանելություն*	*Նահանգային պատկանելություն*	*Կուսակցական պատկանելություն*
Թեոդոր Ռուզվելտ (1901–1909)	42	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Նյու Յորք)	Հանրապետական
Ուիլյամ Հովարդ Տաֆտ (1909–1913)	51	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Օհայո)	Հանրապետական
Վուդրո Վիլսոն (1913–1921)	56	Քրիստոնյա (բողոքական)	Միջին նահանգ (Նյու Ջերսի)	Դեմոկրատական
Ուորեն Հարդինգ (1921–1923)	55	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Օհայո)	Հանրապետական
Քալվին Քուլիջ (1923–1929)	51	Քրիստոնյա (բողոքական)	Միջին նահանգ (Մասսաչուսեթս)	Հանրապետական
Հերբերտ Հուվեր (1929–1933)	54	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ֆրանկլին Ռուզվելտ (1933–1945)	51	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Նյու Յորք)	Դեմոկրատական
Հարրի Թրուման (1945–1953)	60	Քրիստոնյա (բողոքական)	Միջին նահանգ (Միսսուրի)	Դեմոկրատական
Դուայթ Էյզենհաուեր (1953–1961)	62	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Փենսիլվանիա)	Հանրապետական

Ջոն Քենեդի (1961–1963)	43	Քրիստոնյա (կաթոլիկ)	Միջին նահանգ (Մասաչուսեթս)	Դեմոկրատական
Լինդոն Ջոնսոն (1963–1969)	55	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Թեքսաս)	Դեմոկրատական
Ռիչարդ Նիքսոն (1969–1974)	56	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ջերալդ Ֆորդ (1974–1977)	61	Քրիստոնյա (բողոքական)	Միջին նահանգ (Միչիգան)	Հանրապետական
Ջիմմի Քարտեր (1977–1981)	52	Քրիստոնյա (բողոքական)	Միջին նահանգ (Ջորջիա)	Դեմոկրատական
Ռոնալդ Ռեյգան (1981–1989)	69	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Կալիֆոռնիա)	Հանրապետական
Ջորջ Բուշ Ավագ (1989–1993)	65	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Թեքսաս)	Հանրապետական
Բիլլ Քլինթոն (1993–2001)	47	Քրիստոնյա (կաթոլիկ)	Փոքր նահանգ (Արկանզաս)	Դեմոկրատական
Ջորջ Բուշ Կրտսեր (2001–2009)		Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Թեքսաս)	Հանրապետական
Բարաք Օբամա (2009–2017)	48	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Իլինոյս)	Դեմոկրատական
Դ. Թրամփ	49	Քրիստոնյա (բողոքական)	Մեծ նահանգ (Նյու Յորք)	Հանրապետական

Հավելված 4

ԱՊՀ-ի կազմավորման ժամանակագրությունը

Պետությունը	*Պայմանագրումը*	*Վավերացումը*	*ԱՊՀ կանոնադրության վավերացումը*	*Անդամության կարգավիճակը*
Հայաստան	1991 թ. դեկտեմբերի 21	1992 թ. փետրվարի 18	1994 թ. մարտի 16	Լիիրավ անդամ
Ադրբեջան	1991 թ. դեկտեմբերի 21	1993 թ. սեպտեմբերի 24	1993 թ. դեկտեմբերի 14	Լիիրավ անդամ
Բելառուս	1991 թ. դեկտեմբերի 8	1991 թ. դեկտեմբերի 10	1994 թ. հունվարի 18	Լիիրավ անդամ
Ղազախստան	1991 թ. դեկտեմբերի 21	1991 թ. դեկտեմբերի 23	1994 թ. ապրիլի 20	Լիիրավ անդամ
Ղրղզստան	1991 թ. դեկտեմբերի 21	1992 թ. մարտի 6	1994 թ. ապրիլի 12	Լիիրավ անդամ

Մոլդովա	1991 թ. դեկտեմբերի 21	1994 թ. ապրիլի 8	1994 թ. հունիսի 27	Լիիրավ անդամ
Ռուսաստան	1991 թ. դեկտեմբերի 8	1991 թ. դեկտեմբերի 12	1993 թ. հուլիսի 20	Լիիրավ անդամ
Վրաստան	—	1993 թ. դեկտեմբերի 3	1994 թ. ապրիլի 19	2009 թ. օգոստոսի 18-ին դուրս է եկել
Տաջիկստան	1991 թ. դեկտեմբերի 21	1993 թ. հունիսի 26	1993 թ. օգոստոսի 4	Լիիրավ անդամ
Թուրքմենստան	1991 թ. դեկտեմբերի 21	1991 թ. դեկտեմբերի 26	Չի վավերացրել	Ոչ լիիրավ, ասոցաց-ված անդամ
Ուկրաինա	1991 թ. դեկտեմբերի 8	1991 թ. դեկ-տեմբերի 10	Չի վավերացրել	2014 թ. դուրս է եկել
Ուզբեկստան	1991 թ. դեկտեմբերի 21	1992 թ. ապրիլի 1	1994 թ. փետրվարի 9	Լիիրավ անդամ

ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ

Աբստրակցիոնիզմ *(վերացականություն)* — Նորագույն շրջանի մոդեռնիստական նոր ուղղություն, առաջացել է XX դ. սկզբին: Մեծ տարածում է գտել ամենից առաջ ԱՄՆ–ում, հատկապես 1940–1960–ական թթ.: Վերացական նկարչությունը գույների և ձևերի համադրություն է՝ բոլորովին զրկված առարկայությունից: Ուղղության հիմնադիրներից է Վ. Կանդինսկին:

Ագրեսիա (լատ. *aggressio* «հարձակում» բառից) — Միջազգային իրավունքի տեսակետից՝ մի պետության կողմից ուժի անօրինական գործադրումը մեկ այլ պետության տարածքային ամբողջականության կամ անկախության դեմ:

Ազատականացում (լիբերալացում, լատ. *liber* «ազատ» բառից) — Այստեղ՝ ազատ մրցակցության և շուկայական տնտեսության սահմանափակումների վերացում, պետական վերահսկողության թուլացում արտադրության, առևտրի և սպառման ոլորտներում, ապրանքների գների, աշխատավարձի, տարադրամի արժեքի, տոկոսադրույքի չափերի նկատմամբ և այլն:

Ազատ տնտեսական գոտի — Որևէ պետության մեջ առանձնացված տարածք, որտեղ այդ պետության և օտարերկրյա ձեռնարկատերերին ու ներդրողներին թույլատրվում է ազատորեն ծավալել տնտեսական գործունեություն (արտադրություն, առևտուր, գույքի ձեռքբերում և այլն): Դրա համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ՝ օրենսդրական, հարկային, վարձակալման և այլն: Օրինակ՝ Չինաստանում Շանհայը և այլ քաղաքներ դարձել են ա. տ. գոտի:

Ազգայնացում — Տնտեսության որոշ ճյուղերի, մասնավոր ձեռնարկությունների, հողի և այլ մասնավոր սեփականության վերածում պետական սեփականության: Դա կարող է կատարվել առանց փոխհատուցման, ինչպես նաև լրիվ կամ մասնակի փոխհատուցման ճանապարհով:

Ազգերի բրիտանական համագործակցություն — Բրիտանական գաղութային կայսրության փլուզումից հետո Մեծ Բրիտանիայից և նրա նախկին տիրույթներից կազմված միջպետական միավորում: Սկսել է ձևավորվել 1947 թ–ից: Ազգերի բրիտանական համագործակցության մեջ են մտել նաև անգլիական նախկին դոմինիոնները: Այժմ միավորում է 50–ից ավելի երկիր:

Ազգերի ինքնորոշման իրավունք — Ազգի պետական և իրավական կազմակերպման, ներքին ու արտաքին քաղաքականության հարցերն ինքնուրույնաբար տնօրինելու իրավունք: Այն ազգի համար ենթադրում է՝ 1. տվյալ երկրի սահմաններում տարածքային կամ մշակութային ինքնավարություն, 2. տվյալ երկ-

ից անջատվել և ազգային անկախ պետություն ստեղծել, 3. որևէ պետության (պետությունների) հետ միավորում՝ դաշնության կամ համադաշնության ստեղծում: Որպես քաղաքական և գաղափարական սկզբունք ծագել է XVIII–XIX դդ. առաջին կեսի հեղափոխությունների ժամանակ, իսկ նորագույն շրջանում դարձել է միջազգային իրավունքի կարևորագույն նորմերից: Ազգերի ինքնորոշման իրավունքի իրագործման բնորոշ օրինակ է ազատագրական պայքարի շնորհիվ Արցախի ժողովրդի ստեղծած անկախ պետականությունը՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ամբողջատիրություն (տոտալիտարիզմ, լատ.՝ *ամբողջ, լիակատար)* — Բռնապետական իշխանության ձև. բնորոշ կողմերն են սահմանադրական իրավունքների և ազատությունների փաստացի վերացումը, հասարակության լիակատար ենթարկումը իշխանության շահերին և համատարած վերահսկողության հաստատումը բոլորի և ամեն ինչի նկատմամբ, քաղաքական ընդդիմության և այլախոհների հանդեպ բռնությունների և ճնշումների լայնածավալ կիրառումը:

Այլախոհ (դիսիդենտ, լատ.՝ *չհամաձայնվող)* — Այստեղ՝ մարդ, որը համաձայն չէ իր երկրում տիրապետող գաղափարախոսության սկզբունքներին և համակեցության կանոններին և չի ընդունում դրանք: XX դ. 60–80-ական թվականներին այդպես էին անվանում սոցիալիստական երկրների այն քաղաքացիներին, որոնք բացեիբաց քննադատում էին պետական գաղափարախոսությունը և պայքարում մարդու և ազգային իրավունքների իրական ապահովման համար:

Անձի պաշտամունք — Հասարակության, պետության մեջ մեկ մարդու դերի գերագնահատումը, փառաբանումը, կենդանության օրոք նրան պատմական զարգացման ընթացքի վրա ուռճացված ազդեցություն վերագրելը: Երևույթը բնորոշ է ամբողջատիրական երկրներին: Հայտնի է Ստալինի, Հիտլերի, Մուսսոլինիի, Մաո Ցզեդունի և շատերի ա.պ.-ն:

Աշխարհաքաղաքացիություն (կոսմոպոլիտիզմ, հուն.՝ *աշխարհ և քաղաքացի)* — Գաղափարաքաղաքական հոսանք, որ քարոզում է հրաժարում ազգային ավանդույթներից, մշակույթից, ազգային պետությունից կամ ազգային իրավունքների համար պայքարից, անտարբեր վերաբերմունք հայրենիքի և իր ժողովրդի հանդեպ հանուն ինչ-որ «համաշխարհային պետության» ստեղծման ու «համաշխարհային քաղաքացիության» հաստատման:

Ապարտեիդ (բուրերի լեզվով՝ *կարանջար ապրել)* — Վարչակարգի անվանում. դրան բնորոշ են ռասայական խտրականության ծայրահեղ դրսևորումները: Տվյալ երկրի բնակչության որոշակի խմբեր, որոնք, ըստ ռասայական պատկանելության, դրվում են անհավասար իրավիճակում, զրկվում կամ խիստ սահմանափակվում են նրանց քաղաքական, քաղաքացիական և այլ իրավունքներ,

նույնիսկ պետության ներսում որոշ տարածքներ են առանձնացվում նրանց բնակության համար: Ապարտեիդի բնութագրական օրինակ էր Հարավաֆրիկյան Հանրապետության (ՀԱՀ) վարչակարգը 1948 թ. մինչև 1990 թ., երբ փոքրամասնություն կազմող սպիտակամորթ բնակչությունը խիստ անիրավահավասար և ծանր վիճակում էր պահում սևամորթ բնակչությանը:

Ավանգարդիզմ (ֆրանս.՝ *ավանգարդ՝ առաջապահ ջոկատ)* — Նորագույն շրջանի արվեստի ուղղության պայմանական անվանում: Այս ուղղության ներկայացուցիչները խզեցին կապերը գոյություն ունեցող ավանդական իրապաշտական ուղղությունից: Բնորոշ էին գեղարվեստական արտահայտչականության ոչ սովորական միջոցները՝ մարդկանց վրա ագրեսիվ ներազդեցությունը, ձգտումը նրանց շոկի մեջ գցելու, անսովոր վարքագիծ առաջացնելու և այլն: Ավանգարդիստները հաճախ թերագնահատում էին իրենց նախորդների պատմամշակութային ժառանգությունը: Ավանգարդիզմի ուղղության գրական–գեղարվեստական հոսանքներից էին կուբիզմը, էքսպրեսիոնիզմը, ֆուտուրիզմը, գերռեալիզմը և այլն:

Արդիականացում (մոդեռնիզացիա, ֆրանս.՝ *արդի, ժամանակակից)* — Տվյալ ժամանակաշրջանի տնտեսության և գիտության զարգացման ամենաբարձր մակարդակին համապատասխան՝ պետության կողմից հասարակական կյանքի բոլոր բնագավառներում բարեփոխումների իրականացում, որը վերջնարդյունքում ապահովում է հասարակության զարգացման արդիական մակարդակ:

Արդյունաբերացում (ինդուստրացում) — Արդյունաբերության մեջ և տնտեսության մյուս ճյուղերում խոշոր մեքենայական արտադրության ներդրման գործընթացը: Դրա արդյունքում ծանր արդյունաբերությունը դառնում է գերակշռող մյուս ճյուղերի համեմատ: Այս քաղաքական կուրսն իրականացվել է ԽՍՀՄ–ում 1920–ական թթ. երկրորդ կեսից, իսկ սոցիալիստական և զարգացող մի շարք երկրներում՝ Երկրորդ աշխարհամարտից հետո:

Բռնազավթում (անեքսիա, լատ.՝ *annexio՝ միացում)* — Ագրեսիայի տարատեսակ. մի պետության կողմից մյուս պետության ամբողջ տարածքի (կամ դրա մի մասի) բռնի միավորում կամ զավթում: Բռնազավթում է կոչվում նաև որևէ ժողովրդի բռնի պահվելը օտար պետության սահմաններում:

Բռնապետություն (դիկտատուրա, լատ.՝ *dictatura՝ անսահմանափակ իշխանություն)* — Քաղաքական համակարգ, որին բնորոշ են կառավարման ոչ ժողովրդավարական՝ բռնի, ուժային մեթոդները: Դրա մի տարատեսակն է պրոլետարիատի դիկտատուրան. ըստ մարքսիստական ուսմունքի՝ բանվոր դասակարգի քաղաքական իշխանությունը, որը հաստատվում է սոցիալիստական հեղափոխության հաղթանակի արդյունքում:

Գաղափարախոսություն — Գաղափարների և հայացքների համակարգ. արտահայտում է իրականության հանդեպ հասարակության տարբեր խավերի կամ ուժերի վերաբերմունքը, նրանց արմատական շահերը, մտայնությունը և պահանջները:

Գաղութ — Այստեղ՝ պատմության նոր և նորագույն շրջանում որևէ օտար պետության իշխանության ներքո գտնվող երկիր կամ տարածք, որը զրկված էր քաղաքական ու տնտեսական ինքնուրույնությունից: Այն կառավարվում էր գաղութատեր պետության (մետրոպոլիա, հուն.՝ *metropolia* «մայր քաղաք/պետություն») կողմից պարտադրված հատուկ վարչաձևի միջոցով:

Գերիշխանություն (հեգեմոնիա, հուն.՝ *առաջնորդություն, ղեկավարություն)* — Որևէ պետության, քաղաքական ուժի կամ միության ղեկավար, գերիշխող դիրքը մյուսների նկատմամբ. իր կամքի և շահերի պարտադրման միջոցով գերիշխողը ձգտում է այդ դիրքը պահպանելու:

Գերռեալիզմ (սյուրռեալիզմ) — XX դարի ավանգարդիստական ուղղության խոշոր հոսանք: Այս ոճի հետևորդները առարկաներին տալիս են իրականության պատրանք, միավորում իրականը և ոչ իրականը: Սյուրռեալիզմի խոշոր ներկայացուցիչներն են Ս. Դալին, Խ. Միրոն և Ի. Տանգին:

Գիտատեխնիկական հեղափոխություն (ԳՏՀ) —Գիտության և տեխնիկայի լայնածավալ, թռիչքաձև առաջընթացը, որի արդյունքում գիտությունը, արտադրությունը և հասարակության մյուս ոլորտները որակական մեծ զարգացում են ապրում: ԳՏՀ-ն սկսվել է 1940-ական թթ. և շարունակվում է մինչ օրս: Դրա շնորհիվ էականորեն փոխվեց և շարունակում է փոխվել նորագույն շրջանի հասարակությունը, գերզարգացած երկրները անցում կատարեցին դեպի հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն:

Դոկտրինա (լատ.՝ *ուսմունք, սկզբունք*) — Այստեղ՝ քաղաքական կամ տեսական ղեկավար սկզբունք, հայեցակարգ: Օրինակ՝ Թրումանի դոկտրինա, ռազմական դոկտրինա:

Զանգվածային լրատվության միջոցներ (ԶԼՄ) — Ազգաբնակչությանը ամենատարբեր բնույթի տեղեկույթի հաղորդման միջոցների համակարգ: Դրանց հաղորդումն իրականացվում է մամուլի, հեռուստատեսության, ռադիոյի, համացանցի, կինոյի և այլ միջոցներով:

Զանգվածային մշակույթ —Նոր տիպի այս մշակույթի առաջացումը կապված էր զանգվածային արտադրության և զանգվածային սպառման հետ: Զանգվածային մշակույթը ի սկզբանե նախատեսված էր վաճառքի, առևտրի համար: Որպես մշակութային ապրանք արտադրող ոլորտ՝ այն կոչված էր սպասար-

կելու հասարակության միջին ու ցածր խավերի պահանջմունքները: Սակայն աստիճանաբար տարածվեց ու գտավ իր սպառողին հասարակության բոլոր խավերում: Լայն իմաստով այն ընդգրկեց կյանքի բոլոր ոլորտները, հատկապես ամբողջականորեն դրսևորվեց երիտասարդական ենթամշակույթի (ռոք երաժշտություն) ձևով: Զանգվածային լրատվության միջոցների, համընդհանուր գրագիտության և տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացման շնորհիվ զանգվածային մշակույթն արագորեն տարածվեց ու շարունակում է զարգանալ: Զանգվածային մշակույթը ձեռք է բերել միջազգային բնույթ, այս կարգի ստեղծագործությունների մեծ մասը արտադրում և միջազգային շուկա է դուրս բերում ԱՄՆ-ը: Օգտակարի հետ միասին զանգվածային մշակույթը մեծ վտանգներ է պարունակում: Նա նպատակ ունի որոշակի կարծրատիպեր, մոտեցումներ, ձևեր, դրոշմներ, թեմաներ պարտադրելու զանգվածային հանդիսատեսին, ընթերցողին և ունկնդրին: Զանգվածային մշակույթի բացասական դրսևորումները մեծ վտանգ են ներկայացնում հասարակության բարոյական, գեղագիտական ու գաղափարական հիմքերին, հատկապես խոցելի են այս տեսանկյունից երեխաներն ու երիտասարդները: Աշխարհի շատ երկրներ այսօր գործուն միջոցներ են ձեռնարկում իրենց հասարակությունները հոգևոր առումով պաշտպանելու, ընտանեկան, ազգային ավանդական արժեքները պահպանելու համար:

Էքզիստենցիալիզմ (լատ. էքզիստենցիա՝ *գոյություն)* — Փիլիսոփայության ուղղություն, առաջացել է Առաջին աշխարհամարտից հետո Գերմանիայում, ապա Երկրորդ աշխարհամարտից հետո տարածվել Ֆրանսիայում և այլ երկրներում: Հիմնադիրներն էին գերմանացիներ Մ. Հայդեգերը, Կ. Յասպերսը և ֆրանսիացի Ժ. Պ. Սարտրը: Նրանց կարծիքով փիլիսոփայության ուսումնասիրության գլխավոր առարկան մարդու գոյությունն էր, իսկ հետաքրքրող հիմնական հարցերից մեկն այն էր, թե ինչպես պետք է ապրի լավատեսությունը կորցրած մարդը պատմական աղետներին դեմ հանդիման: Հակադրվելով մարդու մասին մարքսիստական և դրապաշտական մոտեցումներին՝ նրանք պնդում էին, որ ազատ է ոչ թե այն մարդը, որը ձևավորվում է բնական կամ սոցիալական անհրաժեշտության ազդեցությամբ, այլ նա, որը ինքն է իրեն ձևավորում: Այս ուղղությունը տիրապետող դարձավ նորագույն շրջանի գրականության և արվեստի մեջ:

Էքսպրեսիոնիզմ (լատ.՝ *արտահայտչականություն)* — Ավանգարդիստական ուղղության գեղարվեստական հայտնի հոսանքներից: Դրա ներկայացուցիչների կարծիքով միակ իրական գոյություն ունեցողը մարդու հոգևոր աշխարհն է, որի արտացոլումը արվեստի գլխավոր նպատակն է: Այս հոսանքի հետևորդներին բնորոշ են իրական առարկաների ծայրահեղ սուբյեկտիվ ընկալումը, ձևախեղված պատկերումը և գունային պայմանականությունը: Այդ ուղղության ներկայացուցիչներից են գերմանացի նկարիչներ Է. Կիրխները և Է. Նոլդիեն:

Թեոկրատական պետություն (հուն.՝ *աստված և իշխանություն)* — Պետություն, որտեղ քաղաքական իշխանությունը հոգևորականության և նրա առաջնորդի ձեռքում է:

Իմպրեսիոնիզմ (ֆրանս.՝ *տպավորություն)* — Գեղանկարչության այս ուղղությունն առաջացել է XIX դ. 70-ական թթ., բնորոշ էր տարբեր գույների ներկերն առանց խառնելու բնության անորսալի փոփոխությունները, լույսի շարժումը և մաքրությունը պատկերելու մոտեցումը: Նշանավոր ներկայացուցիչներից էին Է. Մանեն, Է. Դեգան, Օ. Ռենուարը, Կ. Մոնեն և ուրիշներ:

Ինքնիշխանություն *(սուվերենություն)* — Պետության անկախ, ինքնուրույն լինելը արտաքին և ներքին գործերում: Ազգային ինքնիշխանություն նշանակում է սոցիալ-քաղաքական կարգի ազատ ընտրության իրավունք, տնտեսական անկախություն, տարածքային ամբողջականության ապահովում և այլն:

Խաղաղապահների միջազգային շարժում — Այլ խոսքով՝ պացիֆիստական շարժում (լատ. *pax «խաղաղություն» բառից)*: Նրա մասնակիցները համոզված են, որ խաղաղությունն այլընտրանք չունի, բոլոր հակամարտությունները պետք է լուծել բացառապես խաղաղ բանակցությունների ճանապարհով:

Կապիտալի արտահանում — Կապիտալի տեղափոխություն մի երկրից դեպի մեկ այլ երկիր շահույթ ստանալու նպատակով: Այն իրականացնում է կապիտալի սեփականատերը՝ մասնավոր ձեռնարկատերը, մենատիրությունը կամ պետությունը: Կապիտալի արտահանում կատարվում է արտադրության կամ առևտրի մեջ ներդրումների միջոցով, ինչպես նաև վարկերի ու փոխառությունների տեսքով:

Կոալիցիոն կառավարություն (լատ.՝ *միանալ)* — Տարբեր կուսակցությունների միջև կայացած համաձայնության արդյունքում նրանց ներկայացուցիչներից կազմված միացյալ կառավարություն:

Կոլեկտիվացում — Այստեղ՝ ԽՍՀՄ-ում և սոցիալիստական մյուս երկրներում իրականացված գյուղատնտեսության բռնի կամ կամավոր մեթոդներով վերափոխումը, տնտեսության վարման կոլեկտիվ ձևի հաստատումը. մասնավոր գյուղացիական տնտեսությունները լիովին կամ գրեթե ամբողջությամբ վերացվում են, գերիշխում են կոլեկտիվ, խոշոր տնտեսությունները:

Կոմունիստական ինտերնացիոնալ (Կոմինտերն) — Տարբեր երկրների կոմունիստական կուսակցությունների միջազգային կազմակերպություն: Ստեղծվել է 1919 թ. Մոսկվայում բոլշևիկների կողմից, գործել է մինչև 1943 թ.: Գործունեության գլխավոր նպատակն էր իրականացնել համաշխարհային սոցիալիստական հեղափոխություն. տարածում էր կոմունիստական գաղափարախոսությունը և սատարում տարբեր երկրների կոմունիստական շարժմանը:

Կոոպերացիա (լատ.՝ *համագործակցություն*) — ա) Արտադրության և աշխատանքի կազմակերպման ձև, որը հիմնվում է խմբային սեփականության վրա: բ) Կամավոր հիմունքներով ստեղծված ընկերություն, որն օգնում է իր անդամներին արտադրություն, իրացում, սպառում իրականացնելու, վարկ ձեռք բերելու և այլ հարցերում:

Կուբիզմ — Արվեստի ավանգարդիստական ուղղության հոսանք, առաջացել է XX դ. սկզբներին, հիմնադիրներն են Պ. Պիկասոն և Ժ. Բրակը: Այս հոսանքի հետևորդները աշխարհը և իրերը պատկերում էին երկրաչափական պատկերների ու կոմպոզիցիոն կառուցվածքների տեսքով՝ ձևախեղելով առարկաների իրական պատկերը:

Համաշխարհայնացում *(գլոբալացում)* — Արդի աշխարհի ամբողջական, համակարգված միասնականացման գործընթաց: Դա պայմանավորված է համընդհանուր հիմնախնդիրների (բնապահպանական, ժողովրդագրական, տնտեսական, մշակութային և այլն) համատեղ լուծման անհրաժեշտությամբ:

Հայտեք (անգլ.՝ *բարձր տեխնոլոգիա*) — 1970–1980-ական թթ. առաջացած հետմոդեռնիստական հոսանք ճարտարապետության մեջ: Դրա ներկայացուցիչները շինարարության ժամանակ ցուցադրաբար կիրառում են զանազան տեխնիկական միջոցներ, վառ գույներով ներկված խողովակներ, օդամղիչներ, տարբեր տեսակի մետաղյա կառուցվածքներ, որոնք արտաքնապես ուժեղ ներգործություն են ունենում մարդկանց վրա: Այդ ոճի կառույցների բնորոշ օրինակ են Ժ. Պոմպիդուի անվան կենտրոնը Փարիզում, Մանկական թանգարանը Նյու Յորքում:

Հեղափոխություն (լատ.՝ *բեկում, հեղաշրջում*) — Հասարակության քաղաքական, սոցիալ-տնտեսական կառուցվածքի և մշակութային կյանքի արմատական, որակական փոփոխություն: Որպես կանոն՝ հեղափոխություններն ուղեկցվում են փոփոխություններ իրականացնողների կողմից գործադրվող բռնությամբ և բնակչության զանգվածային ելույթներով: Օրինակ՝ Ֆրանսիական մեծ հեղափոխությունը և այլն:

Հետարդյունաբերական հասարակություն — Համաշխարհային պատմության արդի փուլին բնորոշ հասարակություն, որը հաջորդել է արդյունաբերական հասարակությանը: Հ.հ. տնտեսության մեջ գերակշռում է գիտելիքահենք և նորարական հատվածը, իսկ արդյունաբերությունն ունի շատ բարձր արտադրողականություն, ՀՆԱ-ի մեջ գերակշռում է ծառայությունների ոլորտը, բնակչության մեծ մասը զբաղված է հենց այս ոլորտում: Բարձր տեխնոլոգիաների անընդհատ զարգացումը և ներդրումը պահանջում են բարձր որակավորում, պրոֆեսիոնալ կարողություններ ունեցող և ստեղծագործ մասնագետներ: Այսինքն՝ Հ.հ.-ի զարգացման գլխավոր գործոն է դարձել մարդկային կա-

պիտալը: Աշխարհում առաջինը ԱՄՆ–ն է անցում կատարել հ.հ.–ին՝ 1960–ական թթ. ավարտին, իսկ մյուս զարգացած երկրները՝ 1970–1980–ական թթ.:
ԳՏՀ–ի արդյունքների և հետևանքների վերլուծության հիման վրա առաջինը ամերիկյան սոցիոլոգ Դանիել Բելը նշեց, որ Արևմուտքի զարգացած երկրները անցել են զարգացման որակապես նոր փուլ: Նա այն անվանեց հետարդյունաբերական հասարակություն: Այս հասարակությունում կենտրոնական տեղ է գրավում գիտությունը, տեսական գիտելիքները նորարարությունների հիմքն են: Տնտեսությունը հենվում է գիտության ու տեխնիկայի նորագույն նվաճումների վրա, ձևավորվել է, այսպես կոչված, գիտելիքահենք տնտեսություն, որը հասարակական առաջընթացն ապահովող գլխավոր պայմանն է: Աստիճանաբար համակարգիչների ու տեղեկատվական տեխնոլոգիաների զարգացումը և լայնածավալ կիրառումը էականորեն փոխեցին արդի գերզարգացած երկրների հասարակությունները: Դա հանգեցրեց նրան, որ 1980–ական թթ. հետարդյունաբերական հասարակության հայեցակարգը լրացվեց տեղեկատվական հասարակության տեսությամբ, ինչը վկայում է արդի հասարակությունում տեղեկատվության արտադրության և կիրառման հարաճուն նշանակության մասին: Կյանքի բոլոր բնագավառներում առաջնային պլան է մղվել տեղեկույթը (տեղեկատվության ապրանքային ձևը): Ձևավորվել է միասնական համաշխարհային տեղեկատվական տարածք, տեղեկույթը շատ արագ շրջանառվում է այդ տարածքում համացանցի և կապի գերժամանակակից մյուս միջոցների շնորհիվ: Այս երևույթն իր հերթին խթանում է աշխատուժի արագ տեղաշարժը, արտադրության, առևտրի, ծառայությունների ոլորտի և մշակույթի զարգացումը, նյութական ու հոգևոր բարիքների փոխանակումը:
Հետարդյունաբերական կամ տեղեկատվական հասարակություն ձևավորվել է Արևմուտքում և Արևելքի առաջատար մի քանի երկրներում (Ճապոնիա, Հարավային Կորեա, Սինգապուր, Մալայզիա և այլն): Չնայած արևմտյան քաղաքակրթական այս տիպը առաջատարն է ժամանակակից աշխարհում, սակայն նա համընդհանուր բնույթ չի կրում: Նրա տեխնածին էությունը հակադրության մեջ է Արևելքի զարգացող հասարակությունների ավանդական հիմքերի հետ: Հետարդյունաբերական հասարակությունը քաղաքակրթության զարգացման արդիական տարաձև է, որի և գոյություն ունեցող մյուս տարաձևերի միջև մրցակցությունը և համագործակցությունը ապահովելու են մարդկության առաջընթաց զարգացումը:

Հեպմոդեռնիզմ — Տես Մոդեռնիզմ

Ձեռնարկատիրություն — Գործունեության տեսակ, որի դեպքում անհատը (ձեռնարկատերը) միջոցներ, կապիտալ է ներդնում որևէ գործի մեջ (արտադրություն, առևտուր և այլն) շահույթ ստանալու նպատակով:

Մենապիրություն *(մոնոպոլիա)* — Ձեռներեցների միավորում, որն իր ձեռքն է առնում արտադրության այս կամ այն բնագավառը: Իրենք են որոշում արտադրության պայմանները և ապրանքի շուկայական գները: Մոնոպոլիաների ի հայտ գալով խախտվեց ազատ մրցակցությունը՝ ազատական տնտեսության կարևորագույն սկզբունքներից մեկը: Շատ պետություններ, աշխատելով պաշտպանել մանր և միջին արտադրողների շահերը, կիրառում են հակամենատիրական օրենքներ:

Միասնացում *(ինտեգրում)* — Տնտեսական, քաղաքական, սոցիալական կյանքի միջազգայնացման, միասնացման նոր, բարձրագույն ձև. մեծ տարածում է ստացել Երկրորդ աշխարհամարտից հետո: Միասնացումն առաջին հերթին ազգային տնտեսությունների միահյուսման և համաձայնեցված միջպետական տնտեսական քաղաքականության իրականացման գործընթաց է: Միասնացման օրինակ է նաև համագործակցության այլ ձևերի հաստատումը (ՆԱՏՕ, ԱՊՀ, Եվրամիություն և այլն):

Մշակութային հեղափոխություն — Այս հասկացությունը ներմուծվել է Վ. Լենինի կողմից՝ Հոկտեմբերյան հեղաշրջումից հետո Ռուսաստանի մշակույթի զարգացման նոր փուլը նշելու համար: Այն սոցիալիստական վերափոխումների լենինյան ծրագրի բաղկացուցիչ մասերից էր: Դրա նպատակներն էին ժողովրդական լուսավորության նոր համակարգի ստեղծումը, սոցիալիստական մտավորականության ձևավորումը, մարքսիստական գաղափարախոսության հաստատումը, սոցիալիստական մշակույթի ստեղծումը, կենցաղի վերափոխումը: Իրականում այն ծառայեց ղեկավարող բոլշևիկյան կուսակցության շահերին, մշակույթը քաղաքականացվեց, սակայն տվեց նաև դրական արդյունքներ:

Մոդեռնիզմ (մոդեռն՝ *նոր, ժամանակակից*) — Նորագույն շրջանի գեղարվեստական մշակույթի տիրապետող ուղղությունը: Այն հատկապես տարածված էր գրականության, գեղանկարչության և ճարտարապետության մեջ: Մոդեռնիզմին բնորոշ էր խզումը նախկինում գերակշռող ավանդական իրապաշտական ուղղությունից: Նրա ներսում կային տարբեր հոսանքներ, ընդունված է դրանք բաժանել երկու հիմնական խմբի՝ աբստրակցիոնիզմ և ավանգարդիզմ: Սակայն բոլորը միավորվում են մեկ ընդհանուր՝ ***մոդեռնիզմ*** անվան տակ: 1960–ական թթ. սկզբից մոդեռնիզմը մտավ զարգացման նոր փուլ, որը ստացել է ***հետմոդեռնիզմ*** անվանումը: Այն բացահայտեց արդյունաբերական հասարակության բացասական կողմերը և հետարդյունաբերական քաղաքակրթության անցնելու դժվարությունները:

Շուկայական տնտեսություն — Տնտեսություն, որը զարգանում է ապրանքների ու ծառայությունների հանդեպ պահանջարկի և առաջարկի օրենքի, ազատ մրցակցության և ազատ առևտրի սկզբունքների հիման վրա:

Չմիավորված երկրների շարժում — Երկրների միավորում, որի մասնակիցները իրենց արտաքին քաղաքականության գլխավոր սկզբունքներ են հռչակել ռազմաքաղաքական միավորումներին միանալուց հրաժարումը, հավասարության և արդարության վրա հիմնված նոր աշխարհակարգի ստեղծումը: Շարժումը ձևավորվել է 1961 թ., այժմ միավորում է ավելի քան 100 պետություն:

Ռազմակալում (օկուպացիա, լատ.՝ *գավթում*) — Պատերազմում պարտված երկրի տարածքի ժամանակավոր գրավումը հաղթող երկրի զինված ուժերի կողմից:

Ռազմատուգանք (կոնտրիբուցիա, լատ.՝ *հավաքել*) — Պատերազմում պարտված երկրի կողմից կատարվող դրամական վճարում հաղթող երկրին: Ժամանակակից միջազգային իրավունքով արգելված է ռազմատուգանք գանձելը:

Սեփականաշնորհում *(մասնավորեցում)* — Պետական կամ մունիցիպալ (տեղական ինքնակառավարման մարմինների) սեփականության (հողամասեր, արդյունաբերական ձեռնարկություններ, բանկեր, տրանսպորտի, կապի, զանգվածային լրատվության միջոցներ, շենքեր, բնակարաններ և այլն) վերածվելը մասնավոր սեփականության՝ անհատույց կամ վճարի դիմաց:

Ստատուս քվո — Միջազգային իրավունքում ընդունված տերմին, որն օգտագործվում է որոշակի պահի գոյություն ունեցող կամ ունեցած փաստական կամ իրավական դրությունը նշելու համար: Վերականգնել ստատուս քվոն նշանակում է վերադառնալ մինչև փոփոխությունները գոյություն ունեցած իրավիճակին:

Ստվերային տնտեսություն — Տնտեսական գործունեության այն ոլորտը, որի մասնակիցները գործում են ընդհատակյա կարգով ու հաշվառված չեն պաշտոնական վիճակագրության կողմից և խուսափում են հարկեր վճարելուց:

Սուպրեմատիզմ (լատ.՝ *ամենաբարձր*) — Վերացական արվեստի հոսանքներից, բնորոշ է երկրաչափական վերացականությունը: Հիմնադիրը Կ. Մալևիչն է, իսկ բնորոշ ստեղծագործությունը՝ նրա «Սև քառակուսի» կտավը:

Վերազգային կորպորացիա — Խոշոր մասնավոր կորպորացիա, որը գերիշխող դիրք ունի համաշխարհային տնտեսության որևէ բնագավառում: Վերազգային կորպորացիաները ձևավորվում են երկու եղանակով՝ տարբեր երկրների ֆիրմաների միավորմամբ կամ մյուս պետություններում դուստր մասնաճյուղեր, ֆիրմաներ կամ բաժանմունքներ հիմնելով: Մեր օրերում ավելի տարածված է վերջին եղանակը: Ժամանակակից աշխարհում համաշխարհային արդյունաբերական արտադրության մոտավորապես կեսն ու արտաքին առևտրի շուրջ 60 %-ը պատկանում են վերազգային կորպորացիաներին: Խոշորագույն վերազգային կորպորացիաների կենտրոնակայանները տնտեսապես առավել զարգացած արևմտյան երկրներում են, գերազանցապես ԱՄՆ-ում: 1999 թ. հինգ

խոշորագույն վերազգային կորպորացիաների՝ «Ջեներալ Մոթորսի», «Ֆորդի» և «Դայմլեր Կրայսլերի» տարեկան շահույթները կազմում էին համապատասխանաբար 177, 163 և 160 միլիարդ դոլար: Իրենց տնտեսական հզորությամբ խոշորագույն վերազգային կորպորացիաները կարող են մրցակցել նույնիսկ խոշոր պետությունների հետ: Օրինակ՝ արտադրվող ապրանքների ծավալների առումով ճապոնական «Միցուբիշի» կորպորացիան աշխարհում զիջում է միայն քսանմեկ երկրի:

Վերակառուցում *(պերեստրոյկա)* — ԽՍՀՄ–ում 1985–1991 թթ. իրականացված վերափոխումների ընդհանրացված անվանումը: Վերակառուցման քաղաքականության հիմնական ուղղություններն էին խորհրդային հասարակության կյանքի համակողմանի ժողովրդավարացումը (այդ թվում՝ հրապարակայնության ընդլայնումը), տնտեսության արմատական վերափոխումը, արտաքին քաղաքական ոլորտում՝ միջազգային անվտանգության համապարփակ համակարգի ստեղծումը:

Վերափոխում *(ռեֆորմ)* — Հասարակական կյանքի փոփոխություն, վերադասավորություն: Որպես կանոն՝ վերափոխումներն ունեն քիչ թե շատ առաջադիմական, բարելավող բնույթ:

Ցեղասպանություն *(գենոցիդ)* — Պետականորեն կազմակերպված, մի ազգի կողմից մեկ այլ ազգի, ընկերային կամ կրոնական խմբի լրիվ (կամ մասնակի) ֆիզիկական ոչնչացումը: Համաձայն Միավորված ազգերի կազմակերպության 1948 թ. դեկտեմբերի 9–ի կոնվենցիայի՝ ցեղասպանությունը մարդկության դեմ ուղղված ծանրագույն հանցագործություն է: 1914–1916 թթ. երիտթուրքական կառավարության կազմակերպած հայոց զանգվածային կոտորածները գնահատվել են որպես XX դարի առաջին ցեղասպանություն (Մեծ եղեռն):

Փոփ–արթ *(հանրաճանաչ արվեստ)* — Ստեղծվել է 1960–ական թվականների սկզբին՝ որպես հակակշիռ և բողոքի արտահայտություն անառարկա վերացական արվեստի գաղափարներին: Ավանգարդիստական ուղղության այս հոսանքի կողմնակիցների կարծիքով ամեն իր կարող է արվեստի առարկա լինել, իրերի միավորումը կարող է նոր որակ տալ: Այդ առարկայական արվեստն ուղղված էր զանգվածային հանդիսատեսին: Նշված ուղղության առավել հայտնի վարպետներ են Ռ. Ռաուշենբերգը, Ջ. Ջոնսը, Կ. Օլդենբուրգը:

Քաղաքակրթություն — ա) Հասարակության նյութական և հոգևոր մշակույթի զարգացման մակարդակ, աստիճան: բ) Մարդկության պատմության այն շրջանը, որը հաջորդել է նախնադարին և շարունակվում է մինչև օրս: գ) Հասարակության քաղաքական–սոցիալական կառուցվածքի, տնտեսության, մշակույթի, մարդկանց փոխհարաբերությունների, վարքագծի, կենցաղի յուրահատուկ դրսևորումների ամբողջությունը, որը բնութագրական է որոշակի պատմական ժամանակաշրջանի և որոշակի երկրի կամ տարածաշրջանի:

Քաղաքական վարկանիշ *(ռեյտինգ)* — Քաղաքական առաջնորդների և կուսակցությունների հեղինակության ու հանրահայտության, ինչպես նաև որոշակի քաղաքական իրավիճակում նրանց գործունեության գնահատման անհատական թվային ցուցանիշ:

Օպ-արթ *(օպտիկական արվեստ)* — Առաջացել է 1960-ական թթ. վերջերին: Փոփ-արթի տարատեսակներից է: Օգտագործելով տարբեր բարդ սարքավորումներ՝ օպտիկական արվեստի ներկայացուցիչները ստեղծում էին շարժման և ռիթմի պատրանք, որի շնորհիվ հասնում էին տեսողական՝ գունային և ռիթմային տարբեր համադրությունների և ազդեցության: Խոշոր ներկայացուցիչներից է Վ. Վազարելին:

Ֆովիզմ (ֆրանս.՝ *վայրի*) — Ֆրանսիական գեղանկարչության հոսանք, առաջացել է XX դ. սկզբին: Ֆովիզմից է սկսվում նորագույն շրջանի արվեստի մեջ գունային հեղափոխությունը: Խոշորագույն ներկայացուցիչը Ա. Մատիսն է:

Ֆուտուրիզմ (լատ.՝ *ապագա*) — Արվեստի ավանգարդիստական ուղղության հոսանքներից, ձևավորվել է Իտալիայում: Ֆուտուրիստները տարածում էին խոշոր արդյունաբերության և մեծ քաղաքի՝ մեգապոլիսի պաշտամունքը: Նրանք ձգտում էին գեղանկարչության և քանդակագործության մեջ արտահայտել ժամանակի և դրա հետ կապված շարժման գաղափարը: Ստեղծագործության մեջ դա արվում էր մեխանիկորեն. օրինակ՝ վազող ձին պատկերվում էր ոչ թե չորս, այլ տասներկու ոտքով՝ շարժման տարբեր փուլերի «համատեղման» նպատակով: Տիպիկ ներկայացուցիչներից էին Գ. Սևերինին և Ու. Բոչչոնին:

ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ

1940–ական թթ. — 1960–ական թթ. ավարտը	—	Գիտատեխնիկական հեղափոխության առաջին փուլը
1949 թ.	—	Եվրոպայի խորհրդի ստեղծումը
1954 թ.	—	Աշխարհում առաջին ատոմային էլեկտրակայանի ստեղծումը ԽՍՀՄ–ում
1957 թ.	—	Երկիր մոլորակի առաջին արհեստական արբանյակի ուղարկումը տիեզերք ԽՍՀՄ–ի կողմից
1961 թ. ապրիլի 12	—	Առաջին տիեզերագնաց Յուրի Գագարինի թռիչքը տիեզերք
1969 թ.	—	Ամերիկացի երեք տիեզերագնացների իջնելը Լուսնի վրա
1970–ական թթ. մինչև մեր օրերը	—	Գիտատեխնիկական հեղափոխության երկրորդ փուլը
1974–1975 թթ.	—	Հետպատերազմյան առաջին խոշոր տնտեսական ճգնաժամը Արևմուտքի երկրներում
1975 թ. օգոստոսի 1	—	Հելսինկիում 33 եվրոպական պետությունների՝ ԱՄՆ–ի և Կանադայի ղեկավարների հրավիրած Եվրոպայում անվտանգության ու համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) կողմից եզրափակիչ ակտի ստորագրումը. ազգերի ինքնորոշման իրավունքի ամրագրումը 10 հիմնական սկզբունքների շարքում
1976 թ.	—	Առաջին անհատական համակարգչի ստեղծումը
1985 թ.	—	Վերակառուցման քաղաքականության սկիզբը ԽՍՀՄ–ում
1988 թ. փետրվարի 20	—	Լեռնային Ղարաբաղի (Արցախ) հիմնախնդրի լուծման նորագույն փուլի սկիզբը
1989–1990 թթ.	—	«Թավշյա հեղափոխությունները» Արևելյան Եվրոպայի սոցիալիստական երկրներում
1990 թ.	—	Իրաքի ագրեսիան Քուվեյթի դեմ

1990 թ.	—	Գերմանիայի վերամիավորումը
1991 թ.	—	Եվրոպայում անվտանգության և համագործակցության խորհրդակցության (ԵԱՀԽ) վերանվանումը և վերածվելը մշտական գործող մարմնի՝ Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպության (ԵԱՀԿ)
1991–1999 թթ.	—	Բորիս Ելցինը՝ Ռուսաստանի Դաշնության նախագահ
1991 թ. օգոստոսի 19–21	—	Պահպանողական ուժերի խռովությունը ԽՍՀՄ–ում. պետական հեղաշրջման անհաջող փորձը
1991 թ. սեպտեմբերի 2	—	Լեռնային Ղարաբաղի Հանրապետության հռչակումը
1991 թ. դեկտեմբերի 21	—	ԱՊՀ–ի ստեղծումը, ԽՍՀՄ–ի փլուզումը
1991 թ.	—	Սոցիալիզմի համաշխարհային համակարգի փլուզումը
1992 թ. մայիսի 15	—	Հավաքական անվտանգության պայմանագրի կնքումը ԱՊՀ վեց երկրների (Հայաստան, Ղազախստան, Ղրղզստան, Ռուսաստան, Տաջիկստան, Ուզբեկստան) կողմից
1992 թ. օգոստոս	—	Մաաստրիխտյան պայմանագերի ստորագրումը՝ Եվրոպական Միության ստեղծումը
1995 թ. դեկտեմբեր	—	Դեյթոնյան խաղաղության համաձայնագրի ստորագրումը Փարիզում Սերբիայի, Խորվաթիայի, Բոսնիա և Հերցեգովինայի նախագահների կողմից
1999 թ. մարտ	—	ՆԱՏՕ–ի զորքերի ներխուժումը Հարավսլավիա
1999 թ. հունիսի 19	—	Բոլոնիայի հռչակագրի ստորագրումը 29 երկրների կողմից. եվրոպական կրթական ընդհանուր տարածքի ստեղծման գործընթացի սկիզբը
2001 թ.	—	Շանհայի համագործակցության կազմակերպության ստեղծումը
2001 թ. սեպտեմբերի 11	—	«Ալ Քայիդա» ահաբեկչական կազմակերպության կողմից իրականացված գործողությունները ԱՄՆ–ում
2003 թ.	—	ԱՄՆ–ի ռազմական միջամտության սկիզբը Իրաքում
2005 թ.	—	Անգելա Մերքելը՝ Գերմանիայի առաջին կին վարչապետ

2008 թ.	—	Կոսովոյի անկախության ճանաչումը մի շարք երկրների կողմից
2008 թ. օգոստոս	—	Ռուս–վրացական պատերազմը
2008 թ. օգոստոս	—	Աբխազիայի և Հարավային Օսիայի անկախության ճանաչումը Ռուսաստանի Դաշնության կողմից
2008–2015 թթ.	—	Համաշխարհային տնտեսական նոր ճգնաժամը
2010 թ. դեկտեմբեր – 2011 թ.	—	Հեղափոխությունները, ապստամբությունները և զանգվածային ելույթները արաբական աշխարհում՝ Արաբական գարունը
2014 թ.	—	Հեղափոխական «Մայդանը» Ուկրաինայում. Ղրիմի երկրորդ միացումը Ռուսաստանին
2016 թ.	—	Դ. Թրամփի ընտրվելը ԱՄՆ նախագահ
2017 թ.	—	Է. Մակրոնը՝ Ֆրանսիայի նախագահ
2018 թ.	—	Վ. Պուտինի չորրորդ անգամ ընտրվելը ՌԴ նախագահ
2018 թ. ապրիլ–մայիս	—	«Թավշյա» հեղափոխությունը Հայաստանի Հանրապետությունում

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

Ներածություն 3

ԲԱԺԻՆ Ա. ԱՇԽԱՐՀՆ ԱՐԴԻ ՓՈՒԼՈՒՄ

ԳԼՈՒԽ 1. ՀԵՏԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՁԵՎԱՎՈՐՈՒՄԸ 7
§ 1. Գիտատեխնիկական հեղափոխությունը. արդյունքներ և հետևանքներ 7
§ 2. Հետարդյունաբերական հասարակությունը 14

ԳԼՈՒԽ 2. ՔԱՂԱՔԱԿԱՆ ՆՈՐ ԻՐԱՎԻՃԱԿՈՒԹՅՈՒՆՆ ԱՇԽԱՐՀՈՒՄ 20
§ 1. Նոր աշխարհակարգը 20
§ 2. ԽՍՀՄ-ի փլուզումն ու նորանկախ պետությունների առաջացումը 25
§ 3. ՆԱՏՕ-ն և տարածաշրջանային նոր հակամարտությունները 35
§ 4. Ազգերի ինքնորոշման հիմնախնդիրն ու չճանաչված պետությունները 42
§ 5. Աշխարհի ժողովրդավարացման գործընթացը 49

ԳԼՈՒԽ 3. ԱՐԴԻ ԱՇԽԱՐՀԻ ՀԱՄԸՆԴՀԱՆՈՒՐ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ 55
§ 1. Մարդկության առջև ծառացած հիմնախնդիրները 55
§ 2. Պատերազմի ու խաղաղության հիմնախնդիրը 62
§ 3. Քաղաքակրթության զարգացման հեռանկարները XXI դարում 68

ԲԱԺԻՆ Բ. ՆՈՐԱԳՈՒՅՆ ՇՐՋԱՆԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ

ԳԼՈՒԽ 4. ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԳԼԽԱՎՈՐ ՄԻՏՈՒՄՆԵՐՆ ՈՒ ՆՎԱՃՈՒՄՆԵՐԸ 75
§ 1–2. Մշակույթի զարգացման փուլերը, պայմաններն ու միտումները 75
§ 3–4. Կրթության և գիտության դարաշրջանը 82
§ 5. Գեղարվեստական մշակույթը 96

ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐ 106
ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ԵԶՐԵՐԻ ԲԱՌԱՐԱՆ 112
ԺԱՄԱՆԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆ 124

ԱՐԱՄ ՆԱԶԱՐՅԱՆ, ՎԱՀՐԱՄ ՊԵՏՐՈՍՅԱՆ, ՌՈՒԲԵՆ ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆ

12-ՐԴ ԴԱՍԱՐԱՆ

ԸՆԴՀԱՆՈՒՐ ԵՎ ԲՆԱԳԻՏԱՄԱԹԵՄԱՏԻԿԱԿԱՆ ՀՈՍՔԵՐ

Հրատարակչության տնօրեն՝ Էմին Մկրտչյան
Տեխնիկական խմբագիր՝ Նվարդ Փարսադանյան
Համակարգչային ձևավորումը՝ Անահիտ Պետրոսյանի
Շապիկի համակարգչային ձևավորումը՝ Արևիկ Հակոբյանի
Քարտեզների մշակումը՝ Աննա Գալոյանի
Վերստուգող սրբագրիչ՝ Ազնիվ Նասլյան

Հեղինակային բոլոր իրավունքները պաշտպանված են:

Շապիկին՝
Մարտիրոս Սարյան © Al Aumuller, Էռնեստ Հեմինգուեյ © John F. Kennedy library, Ալբերտ Այնշթայն © Ferdinand Schmutzer, Տիեզերանավի մեկնարկը © www.nasa.gov, Թայբեյը մշուշում © iStockphoto.com/leungchopan

Գրքում օգտագործված նկարներ՝
էջ 5՝ «Ատլանտիս» տիեզերանավը թռիչքային հրապարակում © NASA/Bill Ingalls, էջ 8 © Calibuon, էջ 9 © NASA/Robert Sherrod, էջ 11 © NASA/JPL-Caltech, էջ 12 © Էմին Մկրտչյան, էջ 15 © iStockphoto.com/.shock, էջ 17 © Remy Steinegger, էջ 18 © Presidential Press and Information Office /www.kremlin.ru, էջ 22 © CC-BY-SA-3.0/Matt H. Wade at Wikipedia, էջ 28 © ITAR-TASS, էջ 31 © Vladimir Ivshin, էջ 37 © U.S. Air Force/Staff Sgt. Brian Schlumbohm, էջ 38 © David Orlovic, էջ 39 © KFOR, էջ 40 (ներ) © Cpl. John Scott Rafoss, էջ 43 © Anton von Werner, էջ 46 © Lori-m, էջ 51 © Mikhail Evstafiev, էջ 52 © Patrick Gruban, էջ 53 © Alfredovic, էջ 56 © Վահրամ Պետրոսյան, էջ 57 © G. Paumier, էջ 59 © Eigenes Werk, էջ 62 © Tadija, էջ 63 © TSGT JOHN L. HOUGHTON JR., USAF, էջ 64 © Yana Amelina (Амелина Я. А.), էջ 66 © DoD photo by: SSGT ANDY DUNAWAY, էջ 68 © Էմին Մկրտչյան, էջ 70 © Asbestos, էջ 73՝ ժամանակ (աֆորտ)/ նկարիչ՝ Արա Բաղդասարյան, էջ 77 © Vladimir OKC, էջ 78 © stevecadman, էջ 80 © Herman Hiller, էջ 83 © Հովհաննես Կարապետյան, էջ 84 © Raimond Spekking /CC-BY-SA-3.0, էջ 87 © Florian Arnd, էջ 90 © iStockphoto.com/james steidl, էջ 92 (կ) © F. Hartmann, էջ 92 (ա) © Ferdinand Schmutzer, էջ 93 © Vern Evans, էջ 94 © Christophe.Finot, էջ 97 (ա) © Agence Meurisse , էջ 98 © Evstafiev, էջ 100 (վ) © William Gottlieb, էջ 100 (ներ) © Մանվել Սարգսյան, էջ 101 (վ) © Ollie Atkins, էջ 101 (ներ) © Հովհաննես Կարապետյան, էջ 103 © Creando, էջ 105 © J. Crocker, էջ 106 © Harris & Ewing, էջ 107 © United Nations Information Office

ISBN 978-99941-1-871-7
Տպագրությունը՝ օֆսեթ: Չափը՝ 70x100 1/16: Թուղթը՝ օֆսեթ
Ծավալը՝ 8 տպ. մամուլ, 10,32 պայմ. մամուլ: Տառատեսակը՝ «Ասպետ»
Պատվեր՝ 03/Հ-17: Տպաքանակը՝ 13164

«ԶԱՆԳԱԿ» ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ՀՀ, 0051, Երևան, Կոմիտասի պող. 49/2
Հեռ.՝ (+37410) 23 25 28, էլ. փոստ՝ info@zangak.am
Էլ. կայքեր՝ www.zangak.am, www.book.am
Ֆեյսբուքյան կայքէջ՝ www.facebook.com/zangak